ԱՐՄԱՆ ԳԱԳԻԿԻ ՍԱՀԱԿՅԱՆ

ՍԵԲԱՍՏԻԱՅԻ ՆԱՀԱՆԳԻ ՎԱՐՉԱԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ XIX ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ԵՎ XX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

ԵՐԵՎԱՆ 2005

Згідно телефонограми №5
від 08.11.2005 р. Відповідальне
лице призначене
08.11.2005 р.

39 (=919.81) +947.925

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՐՄԱՆ ԳԱԳԻԿԻ ՍԱՀԱԿՅԱՆ

ՍԵԲԱՍՏԻԱՅԻ ՆԱՀԱՆԳԻ ՎԱՐՉԱԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ XIX ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ԵՎ XX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

A 90833

ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ԱՇՃԵԱՆ ՄԱՏԵՆԱՇԱՐ

ARCH. MESROB ASHJIAN BOOK SERIES

4 4

ՀԱՅԿ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ԵՐԵՎԱՆ 2005

ՀՏԴ 941 (479·25):391/395=919.81
ԳՄԴ 63.3(2Հ)+63.5 (2Հ)
Ս-150

Աշխատությունը հրատարակության է երաշխավորել ՀՀ Գիտությունների
ազգային ակադեմիայի Պատմության ինստիտուտի
«Նոր պատմության» բաժինը

Խմբագիր՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Ա. Ա. Մելքոնյան

Սահակյան Ա. Գ.

Ս-150 Սեբաստիայի նահանգի վարչաժողովրդագրական պատկերը XIX դարի վերջին և XX դարի սկզբին. - Եր., Պատմության ինստիտուտի հրատարակություն, 2005 – 114 էջ:

Մենագրության մեջ ուշադրություն է դարձված 1870-ական թթ. մինչև 1914թ. Սեբաստիայի նահանգի վարչաժողովրդագրական իրավիճակը: Առաջին անգամ քննության են առնված այն էթնոժողովրդագրական գործընթացները, որոնք տեղ են գտել նահանգում տվյալ ժամանակահատվածում:

Աշխատությունն արդիական է այնքանով, որ վերջին տարիներին մեծացել է հետաքրքրությունը էթնոժողովրդագրական խնդիրների նկատմամբ:

Գիրքը նախատեսված է մասնագետ-պատմաբանների և ընթերցող լայն հասարակության համար:

ԳՄԴ 63.3(2Հ)+63,5(2Հ)

ISBM 99941-969-3-6 2005թ

Գիրքը տպագրվել է Երևան քաղաքի Ավան համայնքի թաղապետ
ՏԱՐՈՆ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ հովանավորությամբ

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի Պատմության ինստիտուտի «Նոր պատմության» բաժինը և հեղինակն իրենց խորին երախտագիտությունն են հայտնում պարոն Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ

Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Աշխատությունը արդիական է այնքանով, որքանով մեծ է հետաքրքրությունը հատկապես վերջին տարիներին, էթնոժողովրդագրական խնդիրների նկատմամբ, որն ունի ոչ միայն գիտաճանաչողական, այլև քաղաքական նշանակություն:

Վերջին երեք-չորս տասնամյակներում թուրքական պատմագրությունը, մեծ տեղ հատկացնելով ժողովրդագրական հիմնահարցերին, մեկնաբանում է այն ազգայնական և պանթուրքիստական դիրքերից ամեն կերպ փորձելով խեղաթյուրել իրականությունը:

Թուրք պատմաբաններն այն միտքն են զարգացնում, թե բոլոր ժամանակաշրջաններում Արևմտյան Հայաստանում «... մի վիլայեթ, մի սանջակ, նույնիսկ մի նահիե չկա, ուր հայերը մեծամասնություն կազմեին»[1]:

Այդ իսկ պատճառով, հայ պատմագիտության առջև խնդիր է դրվել զարգացնել այս ոչ բավարար չափով ուսումնասիրված բնագավառը:

Աշխատանքը նվիրված է Սեբաստիա նահանգի վարչական բաժանումների, բնակավայրերի ու ազգաբնակչության տեղաբաշխման, ինչպես նաև ժողովրդագրական պատկերի, էթնիկ տեղաշարժերի լուսաբանմանը: Ժամանակագրական առումով ուսումնասիրությունն ընդգրկում է 19-րդ դարի վերջի քառորդը և 20-րդ դարի առաջին տասնամյակը: Ժամանակաշրջանն աչքի է ընկնում մի շարք բուռն քաղաքական իրադարձություններով, որոնցից էին 1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմը և 1894-1896թթ. համիդեական կոտորածները: Հատկապես այդ կոտորածների հետ կապված նահանգում տեղ գտան բնակչության տեղաշարժեր, որոնց հետևանքով փոխվեց բազում գյուղերի և գավառակների ժողովրդագրական պատկերը:

Սույն ուսումնասիրությամբ նպատակ է հետապնդվում ի մի բերել Սեբաստիայի նահանգի 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին վերաբերող ժողովրդագրական նյութերը և տեղեկությունները, որ գոյություն ունեն հայ և օտար պատմագրության մեջ, ինչպես նաև հնարավորին չափ վեր հանել նահանգի տվյալ ժամանակաշրջանի ժողովրդագրական ամբողջական պատկերը: Աղբյուրների ընծեռած տեղեկությունների հիման վրա, քննության է ենթարկված Սեբաստիայի նահանգի վարչաժողովրդագրական պատկերը 1870-ական թթ. մինչև 1914թ. ներառյալ:

19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին Օսմանյան կայսրության կազմում գտնվող Արևմտյան Հայաստանի

---

[1] Մելքոնյան Ա., Էրզրում, Էրզրումի նահանգի հայ ազգաբնակչությունը 19-րդ դարի առաջին երեսնամյակին, (Պատմաժողովրդագրական ուսումնասիրություն), Երևան, 1994, էջ 3-4:

վարչատարածքային միավորներից ամենամեծը Սեբաստիայի /Սվազի/ նահանգն էր:

Սեբաստիայի նահանգի 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի էթնոժողովրդագրական և վարչական պատկերին վերաբերող բազմաթիվ տեղեկություններ ցաքուցրիվ վիճակում գտնվում են գիտական գրականության մեջ, արխիվային փաստաթղթերում և այլուր:

Ըստ աղբյուրների վերլուծության՝ փորձել ենք հնարավորինս մանրակրկիտ կերպով, առանձին-առանձին վերլուծության ենթարկել Սեբաստիայի նահանգի գավառների վարչաժողովրդագրական վիճակը տվյալ ժամանակամիջոցում:

Նախ որպես հայաշատ ու կենտրոնական գավառ, փորձ ենք կատարել ուսումնասիրել Սեբաստիայի գավառի ժողովրդագրական իրադրությունը 19-րդ դարի վերջին նախքան 1895-1896թթ. կոտորածը, ապա ձգտել ենք ներկայացնել բնակչության այն տեղաշարժերը, որոնք տեղ են գտել գավառում այդ կոտորածների պատճառով: Քննարկելով գավառի 10 գավառակների Սեբաստիայի, Հաֆիքի, Ջառայի, Ենիխանի, Տիվրիկի, Կանգալի, Թոնուսի, Գյուրինի, Տարենտեի, Ազիզիեի ժողովրդագրական իրավիճակը առանձին-առանձին, ըստ գյուղերի, փորձել ենք պարզել հայ բնակչության ընդհանուր թիվը գավառում նախքան մեծ եղեռնը: Ապա առանձին գլխում ներկայացրել ենք նահանգի հյուսիսային գավառներից մեկի Շաբին Կարահիսարի վարչաժողովրդագրական պատկերը վերոհիշյալ ժամանակահատվածում:

Ուսումնասիրելով այդ գավառի Շաբին Կարահիսարի, Ալուջայի, Անդրեասի, Կոյլուհիսարի, Համիդիեի գավառակների ժողովրդագրական պատկերը 1870-ական թթ. հետամուտ ենք եղել ներկայացնել նաև 1890-ական թթ. դաժան կոտորածները և այդ պատճառով այստեղ տեղ գտած բնակչության աճի փոփոխությունները նաև 20-րդ դարի առաջին տասնամյակի ընթացքում:

Աշխատության մեջ առանձնահատուկ կարևորություն է տրված նահանգի հյուսիսարևմտյան գավառների՝ Թոխաթի (Թոքաթ, Եվդոկիա) և Ամասիայի վարչաժողովրդագրական պատկերի ուսումնասիրությանը, քանի որ հենց այս երկու գավառներում էր կենտրոնացած հայ բնակչության մյուս ստվար հատվածը:

Նահանգի ընդարձակության պատճառով սահմանափակվել ենք միայն այս գավառների ժողովրդագրության ուսումնասիրությամբ:

Այս գավառների ժողովրդագրության ուսումնասիրությունը մեզ թույլ տվեց ընդհանրացնելու և ներկայացնելու ողջ Սեբաստիայի նահանգի հայ բնակչության թիվը նախքան առաջին համաշխարհային պատերազմը: Ինչպես այլ գավառների, այնպես էլ Թոխաթի և Ամասիայի դեպքում ներկայացվել են նաև բնակչության այլ էթնիկ տարրերը:

Սակայն համապատասխան նյութերի խիստ սակավությունը դժվարալուծելի է դարձնում որոշակի գավառակների համար վիճակագրության կազմումը: Հաճախ վիճակագրություններում

բացակայում են որոշ գյուղեր կամ էլ այդ գյուղերը ներկայացված են ոչ ճիշտ տեղում: Աղբյուրներում հաճախ բացակայում են տարբեր ազգությունների բնակավայրերի վիճակագրությունները: Դա դժվարացնում է նահանգի բնակչության ընդհանուր թվի հաշվառումը: Այդ պատճառով մենք բավարարվել ենք Սեբաստիայի վիլայեթի համար աղբյուրների ներկայացրած բնակչության ընդհանուր թվերով:

Աղքատիկ են մանավանդ 1880-ական թթ. և 1900-ական թթ. սկզբներին վերաբերող վիճակագրական նյութերը: Սա է պատճառը, որ աշխատության մեջ մենք հիմնականում ներկայացրել ենք 1870-ական թթ. և նախքան համիդեական կոտորածների ժամանակահատվածին վերաբերող վիճակագրական տվյալներ:

20-րդ դարի սկզբի նահանգի ժողովրդագրության խնդիրներին անդրադառնալիս հիմնականում հիմնվել 'ենք 1914-1915թթ. տվյալների վրա և փորձել ենք ներկայացնել Սեբաստիայի նահանգի հայ բնակչության թիվն այդ տարիներին:

Սեբաստիայի նահանգն Արևմտյան Հայաստանի ամենամեծ նահանգն էր, որի տարածքը 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին կազմում էր մոտ 83 հազար 700 քառ. կմ: Եվ այս հսկա տարածության ժողովրդագրական խնդիրների վերաբերյալ ցայսօր առանձին աշխատանք չի գրվել, թեև հայ և օտար հեղինակներն այս կամ այն չափով անդրադարձել են այդ խնդրին:


ՍԵԲԱՍՏԻԱՅԻ (ՍԵՎԱՋԻ) ՆԱՀԱՆԳ
(XIX դ. վերջ-XX դ. սկիզբ)
Սեբաստիա (Սեվաջ)
Մարզվան
Նիկսար
Թոքատ
Ամասիա
Սամսուն
Տոկատ
Սեբաստիա (Սեվաջ)
Ակն
Սարդ
Ամասիա
Ակն

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ՍԵԲԱՍՏԻԱՅԻ ՆԱՀԱՆԳԻ ՍԵԲԱՍՏԻԱՅԻ /ՍՎԱԶԻ/ ԳԱՎԱՌԻ ՎԱՐՉԱԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ 19-ՐԴ ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ԵՎ 20-ՐԴ ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

1. ՊԱՏՄԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Սեբաստիայի (Սվազի) վիլայեթը 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին Օսմանյան կայսրության կազմում գտնվող Արևմտյան Հայաստանի ամենաընդարձակ վարչատարածքային միավորն էր: Այն իր կենտրոնի՝ Սեբաստիա քաղաքի անունովկրում էր Սեբաստիայի վիլայեթ անունը:

Այդ ժամանակաշրջանում այն հյուսիսից սահմանակից էր Տրապիզոնի և Կաստամունիի, արևելքից՝ Էրզրումի և Խարբերդի, հարավից՝ Հալեպի և Ադանայի, արևմուտքից՝ Անգորայի (Անկարա) վիլայեթներին:

Սեբաստիայի վիլայեթի տարածքը 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին կազմում էր մոտ 83700 քառ.կմ և բաժանված էր 4 սանջակների (գավառների)՝ Սեբաստիայի (կենտրոնական սանջակ), Շաբին Կարահիսարի, Թոխաթի և Ամասիայի:

Իր հերթին Սեբաստիայի սանջակը, որը զբաղեցնում էր շուրջ 39450 քառ. կմ տարածք, բաժանված էր 10 կազաների (գավառակների)՝ Սեբաստիայի (կենտրոնական կազա), Հաֆիքի (Հաֆիգ, Գոչ–Հիսար), Ջառա (Գոչկիրի), Ենիխան (Յըլդըզելի), Տիվրիկի (Դիվրիկի), Կանգալի (Գանկալ), Թոնուսի (Շարգշլա), Գյուրինի, Տարենտեի, Ազիզիեի (Բյունյան-Համիդ)[1]:

Սեբաստիայի նահանգը հիմնականում համապատասխանում է Փոքր Հայքի տարածքին և գտնվում է Գայլ (Իրիս) և Ալիս գետերի ավազանում:

Ի դարի 70-ական թթ. մինչև XI-րդ դարն այն գտնվում էր հռոմեական և բյուզանդական իշխանությունների տիրապետության տակ: XI-րդ դարում Հայաստանը գտնվում էր սելջուկ-թուրքերի հարձակումների վտանգի տակ: Այդ իսկ պատճառով, Վասպուրականի հայոց թագավոր Սենեքերիմ Արծրունին, սելջուկ Տուղրիլ բեկի վտանգավոր հարձակումներից փրկվելու համար, Բյուզանդիայի հայազգի կայսեր Վասիլ II-ի հետ կնքում է համաձայնություն, որով վերջինիս է հանձնում Վասպուրականը, իսկ փոխարենը ստանում է

[1] ՀՀ ազգային արխիվ (այսուհետև՝ ՀՀ ԱԱ), ֆ. 398, ց. 1, գ. 14, թ. 104, ֆ. 439, ց. 1, գ. 483, թ. 1, տես նաև «Հայկազեան հայագիտական հանդէս», հ. ԺԵ, Պեյրութ, 1995, էջ 499, տես նաև «Ընդարձակ օրացույց ազգային հիվանդանոցի», Կ.Պոլիս, 1903, էջ 187:

Սեբաստիան՝ իր շրջակայքով, և 1021թ. տեղափոխվում է այնտեղ, որով և սկսվում է Արծրունիների իշխանությունը Սեբաստիայում[3]:

Սեբաստիայում Արծրունիների տոհմի իշխանության շրջանը պետք է համարել 1021-1071թթ.: Այդ ընթացքում Սեբաստիան նվաճվում է սելջուկ-թուրքերի կողմից և նրանց ծանր լծի տակ մնում մինչև 13-րդ դարի կեսերը: 1060թ. սելջուկները Տուղրիլ բեկի գլխավորությամբ մեծաթիվ զորք ով հարձակում են գործում Սեբաստիայի վրա: Թշնամին կոտորում է ժողովրդին և ավերում Սեբաստիան: Տուղրիլ բեկին հաջորդած Ալփասլանը ևս 1069թ. հարձակվում է Սեբաստիայի վրա և նորանոր ասպատակություններ կատարում Սեբաստիայում:

1242թ. մոնղոլ-թաթարները Չարմաղանի գլխավորությամբ արշավում են Փոքր Ասիա, իսկ շուրջ տասը տարի անց Բաչու զորավարի գլխավորությամբ նրանք գրավում են Կարինը, Երզնկան, Սեբաստիան, Կեսարիան և այլ տարածքներ: Մոնղոլ-թաթարների ծանր լծի տակ հայտնված Սեբաստիան շուտով ենթարկվում է նոր փորձության:

1400թ. Լենկ Թեմուրը Սեբաստիայի հյուսիսային գավառները՝ Ամասիան, Եվդոկիան, ասպատակելուց հետո հյուսիսից մտնում է Սեբաստիա և սարսափելի կոտորածներ կազմակերպում: Միայն Սեբաստիա քաղաքում կոտորված հայ զինվորների թիվը հասնում էր մոտ չորս հազարի: Շուրջ չորս հարյուր տուն հայ բնակչություն կոտորածից փրկվելու համար տեղափոխվում է Բութանիա[4]:

Շուտով Սեբաստիայի նահանգը ենթարկվում է նոր փորձության. այն ընկնում է Օսմանյան Թուրքիայի ազդեցության տակ: Սեբաստիայի նահանգը օսմանյան թուրքերը հիմնականում զավթում են 15-րդ դարի առաջին քառորդին:

Օսմանյան կայսրությունը, որը ստեղծվել էր 13-17-րդ դարերի ընթացքում, իր մեջ էր ներառել Բալկանյան թերակղզին, Սև ծովի ափամերձ շրջանները, Ղրիմի թերակղզին, արաբական երկրները, Աֆրիկայի հյուսիսային հատվածները, Փոքր Ասիան, Արևմտյան Հայաստանը, Վրաստանի մի մասը և այլն: Այս վիթխարի կայսրության կառավարման համար անհրաժեշտ էր ճկուն վարչական համակարգ:

Օսմանյան կայսրության վարչական բաժանման առաջին տեղեկությունները վերաբերում են 1574թ., որոնք պահպանվել են Ֆերիդան բեյի կողմից կազմված «Սուլթանների գրություններ»[5] ժողովածուում: Ըստ այդ ժողովածուի՝ Օսմանյան կայսրությունը

---

[3] Թովմա Արծրունի, Պատմութիւն տանն Արծրունայ, Թիֆլիս, 1917, էջ 500:

[4] Առաքել Պատրիկ, Պատմագիրք հուշամատեան Սեբաստիոյ և գավառի հայութեան, հ. Ա, Պեյրութ, 1974, էջ 127:

[5] Страны и народы Ближнего и Среднего Востока, т. 5, Ереван, 1970. Е.К.Саркисян, Административная и демографическая политика Османского правительства в Западной Армении, стр. 357.

բաժանվում է 34 էյալեթների, որոնք բաղկացած էին 242 լիվաներից (սանջակներից)[6]:

Այսպիսով, Օսմանյան թուրքերը զավթելով Սեբաստիան, շուտով կազմում են Արևմտյան Հայաստանի առաջին վարչատարածքային միավորը՝ էյալեթը՝ սկզբում Ռումի, ապա՝ Սեբաստիա անունով[7]: Մինչև 16-րդ դարի սկիզբն այն Օսմանյան սուլթանության արևելյան սահմանային նահանգն էր, որը հյուսիսից սահմանակից էր Տրապիզոնի կայսրությանը /մինչև 1461/, արևելքից՝ նախ ակկոյունլուների տիրակալությանը /մինչև 1502/, ապա՝ Սեֆյան Պարսկաստանին /մինչև 1514/, հարավից՝ Եգիպտոսի Մամլուքյան սուլթանությանը /մինչև 1516/:

Օսմանյան Թուրքիայի վարչական բաժանման մասին մանրամասն տրված է 1653թ. պալատական ծառայող Ալի Չաուշի կողմից կազմված տրակտատում, ըստ որի՝ կայսրությունը բաժանված էր 32 էյալեթների և 247 սանջակների: Նույն փաստաթղթով Արևմտյան Հայաստանը բաժանվեց Սեբաստիայի (Սվազի), Դիարբեքիրի, Էրզրումի, Չլդրի, Կարսի, Վանի էյալեթների[8]:

Այս վարչական պատկերը ինչպես ամբողջ կայսրությունում, այնպես էլ Արևմտյան Հայաստանում պահպանվեց մինչև 1831թ.:

Այդ թվականի տվյալներով Օսմանյան Թուրքիան բաղկացած էր 29 էյալեթներից, որոնք իրենց հերթին բաժանված էին 179 լիվաների (սանջակների): Արևմտյան Հայաստանի մեջ էին մտնում Դիարբեքիրի, Սեբաստիայի, Կարսի, Էրզրումի, Չլդրի, Վանի էյալեթները: Սեբաստիայի էյալեթը բաժանված էր Սվազի, Ամասիայի, Բոզոքի, Չորումի, Զանիկի, Տիվրիկի, Արաբկիրի լիվաների[9]: 1846թ. Սեբաստիայի նահանգին է միացվել նաև Էրզրումի նահանգի կազմում գտնվող Շաբին Կարահիսար գավառը:

Քիչ ավելի ուշ սուլթանական կառավարությունը կայսրության կառավարման հարմարության համաձայն որոշեց ստեղծել վարչական ավելի մեծ միավորներ՝ վիլայեթներ: Եվ այդ իսկ պատճառով 1864թ. վիլայեթների մասին թուրքական օրենքով Արևմտյան Հայաստանը բաժանվեց վիլայեթների՝ Էրզրումի, Բիթլիսի, Վանի, Դիարբեքիրի, Խարբերդի կամ Մամուրեթ-ուլ-Ազիզի և Սեբաստիայի (Սվազի): Այս օրենքով վիլայեթը, որի գլուխ կանգնած էր վալին կամ նահանգապետը, բաժանվում էր սանջակների մութեսարիֆների գլխավորությամբ,

---

[6] Տե՛ս նաև, Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, հատոր Բ, կազմեց Սաֆրաստյան Ա., Երևան, 1964, էջ 212-222:

[7] Սվազի նահանգը իբրև Ռումի էյալեթ կազմավորվել է 1397-1398թթ., ապա 1526թ. դարձել է թուրքական էյալեթ (Birken A., Die Provinzen des Osmanischen Reiches, էջ 142, Wiesbaden, 1976):

[8] Страны и народы Ближнего и Среднего Востока, т. 5, Ереван, 1970, стр. 357.

[9] Նույն տեղում, стр. 359.

սանջակներն իրենց հերթին բաժանվում էին կազաների, իսկ կազաները՝ նահիեների:

Այս վարչական բաժանումն առանձին փոփոխություններով պահպանվեց մինչև 20-րդ դարի սկիզբը:

2. ՍԵԲԱՍՏԻԱՅԻ ԳԱՎԱՌԱԿ

Ինչպես նշեցինք, Սեբաստիայի սանջակը, բաժանված էր 10 կազաների (գավառակների)՝ Սեբաստիայի (կենտրոնական կազա), Հաֆիքի (Հաֆիգ, Գոչ–Հիսար), Զառա (Գոչկիրի), Ենիխան (Յըլդըզելի), Տիվրիկի (Դիվրիկի), Կանգալի (Գանկալ), Թոնուսի (Շարգշլա), Գյուրինի, Տարենտեի, Ազիզիեի (Բյունյան-Համիդ):

Սեբաստիայի կազան առանձնանում էր սանջակի այլ կազաներից ոչ միայն իր կենտրոնական լինելու, այլև բազմամարդ ու հայաշատ լինելու հանգամանքով: Այն համարվում էր կենտրոնը ոչ միայն Սեբաստիայի սանջակի, այլև ողջ վիլայեթի: Վերջինս արևելքից սահմանակից էր Հաֆիքի, արևմուտքից՝ Թոնուսի, հյուսիսից՝ Ենիխանի, հարավից՝ Գյուրինի կազաներին:

Կազայի կենտրոնը Սեբաստիա (Սվազ) քաղաքն էր[10]: Այն գտնվում էր Ալիս (Կզըլ-Ըրմակ) գետի աջ ափին՝ Մայրագոմ կոչվող լեռան ստորոտին, և հարուստ ու հին պատմություն ուներ: Քաղաքը միշտ ունեցել է հոծ ազգաբնակչություն, որոնց մեջ մեծ թիվ էին կազմում հայերը:

Հայ բնակչության հոծ զանգված է հաստատվելայստեղ դեռևս 11-րդ դարում, երբ Վասպուրականից այստեղ է տեղափոխվում Սենեքերիմ Արծրունի թագավորը: Թեև Սեբաստիա քաղաքը դարերի ընթացքում ենթարկվել է տարբեր զավթիչների հարձակումների, և հայ ժողովուրդը ենթարկվել էր ջարդերի ու կոտորածների, հայերը Սեբաստիա քաղաքում պահպանել են իրենց գերակշիռ թիվը և դերը ընդհուպ մինչև 19-րդ դարի վերջը: 19-րդ դարի վերջին քաղաքի 64 թաղերից 33-ում բնակվում էին հայերը:

19-րդ դարի վերջին քառորդին վերաբերող տարբեր աղբյուրներ Սեբաստիա քաղաքի հայ ազգաբնակչության թվի մասին զանազան տեղեկություններ են հաղորդում:

1878թ. վերջին Գարեգին Սրվանձտյանցը այցելում է Սեբաստիա քաղաք, որը նա անվանում է «Սևաստ»[11] ձևով: Սրվանձտյանցը նշում է, որ այդ ժամանակ քաղաքում բնակվող ընդհանուր բնակչության թիվը հասնում է 32039 մարդու, որից 13272 շունչը կազմում էին հայերը[12]: Այսինքն՝ընդհանուր բնակչության 41,4 %-ը: Ըստ որում նա նշում է, որ

---

[10] Քաղաքը հին ժամանակներում կոչվել է Կաբիրա, այն բերդի անունով, որ գոյություն ուներ Պոնտոսի թագավորության ժամանակ: Մ.թ.ա. 64թ. Պոմպեոս հռոմեական զորավարը, հաղթելով Պոնտոսի թագավոր Միհրդատ Պոնտացուն տիրել է այս քաղաքին և ի պատիվ այս հաղթանակի անվանել է Դիոպոլիս, այսինքն Յուպիտեր աստծու քաղաք: Սակայն շուտով Պոնտոսի թագուհի Պյուքադորիսը այն վերանվանեց «Սեբաստ» անունով ի պատիվ Օգոստոս կայսեր: Հայերենում Սեբաստի «բ» տառը «վ»-ի տառածայնությամբ դարձել է Սևաստ: Հետագայում թուրքերենում աղավաղվելով դառնում է Սվազ:

[11] Սրվանձտյանց Գ., Երկեր, Երևան, 1982, հ. Բ, էջ 239:

[12] Տե՛ս նշվ.աշխ., էջ 172:

13200 հոգին լուսավորչական դավանանքի հայեր էին, իսկ 72-ը՝ կաթոլիկ և բողոքական: Այլ ազգությունների թվում հեղինակը նշում է 330 հույների և 18437 շունչ թուրքերի[13] մասին:

Սակայն մեր կարծիքով հեղինակը որոշ չափով չափազանցնում է թուրքերի թվաքանակը և նրանց անվան տակ է միավորել նաև այլ մահմեդական էթնոմիավորների: Դեռ 1876թ. ողջ Սեբաստիայի սանջակում բնակվող մահմեդական բնակչության թիվը հասնում էր 109356 շնչի[14]:

Քաղաքի հայ բնակչության թվի մասին այլ փաստ է արձանագրում ժամանակի արևմտահայ մամուլը: 1880թ. «Մասիս» օրաթերթը քաղաքի բնակչության թիվը ցույց է տալիս 30-40 հազար, որոնցից 2500 տունը կամ 16648 շունչը հայեր[15]:

Ստացվում է այնպես, որ 1878թ. մինչև 1880թ. հայերի թիվը աճել էր 3376 շնչով, որը բնական աճի դեպքում գրեթե հնարավոր չէ և պետք է ենթադրել, որ դա կատարվել է բնակչության նոր ներհոսքի հետևանքով:

Սեբաստիա քաղաքի 1890թ. վիճակի մասին վիճակագրական տվյալներ է հաղորդել Վիտալ Քինեն: Վերջինս Սեբաստիա քաղաքի բնակչության թիվը ցույց է տալիս 43122 մարդ[16]: Այս թվի մեջ 22003 հոգին սյունի, 10501-ը՝ շիա մահմեդական, իսկ 8823-ը՝ հայ լուսավորչական էր, 93-ը՝ հայ բողոքական, 173-ը՝ հայ կաթոլիկ և 1529-ը՝ հույն: Այսպիսով ,հայ բնակչության ընդհանուր թիվը կազմում էր 9069 մարդ:

Այսպիսով, վերոհիշյալ աղբյուրների հավաստմամբ 19-րդ դարի վերջին, նախքան 1895-1896թթ. համիդեական ջարդերը, Սեբաստիա քաղաքի բնակչության ընդհանուր թիվը տատանվում էր 30-ից–40 հազար մարդ: Ընդունելով այս տվյալներից նվազագույնը մենք հակված ենք կարծելու, որ Գ.Սրվանձտյանցի Սեբաստիա քաղաքի մասին հաղորդած տվյալը՝ 32039 հոգի, ավելի մոտ է ճշմարտությանը: Ուստի ավելի հավանական ենք համարում նաև հայ բնակչության 13200 շունչ լինելու փաստարկը:

Շուտով սկսված համիդեական կոտորածները ծանր անդրադարձան Սեբաստիա քաղաքի վրա, և ժողովրդագրական պատկերը խաթարվեց, բայց այն շարունակեց մնալ 20-րդ դարում՝ իբրև Սեբաստիայի վիլայեթի և կազայի մարդաշատ և հայաբնակ կենտրոնը: 1900թ. Սեբաստիա այցելած եվրոպացի Անդրեաս և Փոյուգաս Կյումոն եղբայրները այս կենտրոնի մասին գրում են. «Այսօր ալ գլխավոր քաղաք

---

[13] Տե՛ս նույն տեղում:

[14] Մ.Մաշտոցի անվան Մատենադարան, ֆ. Կաթողիկոսական դիվան, թղթապանակ N 228, վավերագիր N 21, թ. 4:

[15] Մասիս, Կ. Պոլիս, 1880, դեկտեմբերի 30:

[16] uinet Vital, La Turqie d'Asie, Paris, 1892, vol.1, p. 665.

է ընդարձակ նահանգէ մը և 40000 է ավելի բնակիչ ունի»[17]: Իրոք, 20-րդ դարի սկզբին հայ բնակչության թիվը քաղաքում աճել էր:

Մի աղբյուրի համաձայն՝ 1909թ. դրությամբ Սեբաստիա քաղաքն ուներ 10000 տուն, 60000-ից ավելի բնակիչներ, որոնցից 25 հազարից ավելին կազմում էին հայերը[18]: Քաղաքն ուներ 72-ի չափ թաղեր, որոնցից 50-ը հայաբնակ էին: Հայ ազգաբնակչության թվի մասին նախքան առաջին համաշխարհային պատերազմը զանազան աղբյուրներ տարբեր տվյալներ են հաղորդում:

Այսպես, օրինակ՝ Կ.Պոլսի հայոց պատրիարքարանի տվյալների համաձայն՝ 1913թ. վերջի և 1914թ. սկզբի դրությամբ Սեբաստիա քաղաքի հայ բնակչության թիվը հասնում էր 31185 անձի[19]:

Մեկ այլ հայկական աղբյուր հավաստում է, որ նախքան 1915թ. մեծ եղեռնը Սեբաստիա քաղաքի հայ ազգաբնակչությունը կազմում էր 5000 տուն և 32000 անձ[20]:

Աղբյուրների մեծ մասը վկայում են այն մասին, որ 1914թ. դրությամբ Սեբաստիա քաղաքի հայ բնակչության թիվը հասնում էր 37000 շնչի[21]:

Այլ հակասական տվյալ է ներկայացնում Թեոդիկը, որի համաձայն 1915թ.՝ նախքան կոտորածը, հայ ազգաբնակչության թիվը Սեբաստիա քաղաքում կազմում էր 3290 տուն և 22510 մարդ[22]:

Մեր կարծիքով այս փաստը չի համապատասխանում իրականությանը, քանի որ ինչպես տեսանք, դեռ 1909թ. քաղաքի հայ բնակչության թիվը անցնում էր 25 հազարից, և ինչպես հայտնի է, այդ տարիների ընթացքում բնակչության լուրջ տեղաշարժեր և կոտորածներ չեն արձանագրվել Սեբաստիայի վիլայեթում:

Մենք համակարծիք ենք այն հեղինակների հետ, որոնք գտնում են, որ քաղաքը այդ ժամանակ ուներ 31-32 հազար բնակչություն, քանի որ 1909թ. 25 հազարից ավել բնակչություն ունեցող քաղաքը բնական աճի դեպքում 1914թ. չէր կարող ունենալ 37000 բնակչություն, իսկ տվյալ

---

[17] Տաշեան Վ.Յ., Պոնտական ուսումնասիրութիւն, Վիեննա, 1919, էջ 233:

[18] Գաբամաճեան Ս., Գամէր: Փոքրիկ ճամբորդ արեւելքի մէջ, Կ. Պոլիս, 1911, էջ 163:

[19] Kevorkian R.H., Paboudjian P.B., Les Armeniens dans l'empire ottoman la veille du Genocide, Paris, 1992, p. 57.

[20] «Հայկազեան հայագիտական հանդէս», հ. ԺԵ, Պեյրութ, 1995, էջ 500:

[21] ՀՀ ԱԱ, ֆ. 476, ց. 1, գ. 144, թ. 7, տե՛ս նաև Գաբիկեան Կ., Եղեռնապատում Փոքուն հայոց և Նորին մեծի մայրաքաղաքին, Սեբաստիո, Բոստոն, 1924, էջ 597, տե՛ս նույնը The Armenian Review, vol. 25, 1972, An Inquiry into the Statistics of the Turkish Genocide of the Armenians 1915-1918. In the Ottoman Empire 1914, Sarkis J., Karajian M.P., p. 9. Առաքել Պատրիկ, Պատմագիրք հուշամատեան Սեբաստիոյ և գավառի հայութեան, հ. Ա, Պեյրութ, 1974, էջ 569-573:

[22] Թէոդիկ, Գողգոթա հայ հոգեւորականութեան եւ իր հօտին աղետալի 1915 տարիին, Նիւ Եորք, 1985, էջ 104:

տարիների ընթացքում այստեղ բնակչության լուրջ տեղաշարժեր չեն գրանցվել:

Այսպիսով, 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին Սեբաստիան իրենից ներկայացնում էր հայաշատ մի կենտրոն: Հայերի թիվը նախքան 1890-ական թթ. կոտորածը այս քաղաքում հասել էր շուրջ 13000 շնչի: Ցավոք, համիդեական կոտորածին զոհ գնաց շուրջ 5000 հայ մարդ, բայց քաղաքը, ինչպես տեսանք, չկորցրեց իր հայեցի դիմագիծը նաև Մեծ եղեռնի նախօրյակին:

Բացի Սեբաստիա քաղաքից, կազայում հաշվվում էր 36 գյուղ բնակեցված տարբեր ազգություններով, որոնցից վեցը՝ հայաբնակ:

Այդ գյուղերն ընկած էին Սեբաստիա քաղաքից հարավ՝ Ալիս գետի հարավային ափին և քաղաքի հյուսիսային մասում՝ նույն գետի արևմտյան ափին:

Ալիս գետի հարավային ափին՝ Սեբաստիա քաղաքից դեպի հարավ էին ընկած Իշխանի, Շնքուռակ, Ղալտի, Ագ Ղայա, Կողալի գյուղերը[23]:

Իշխանի զուտ հայաբնակ գյուղը 1875թ., ըստ Պողոս Նաթանյանի հաղորդած տվյալների, ուներ 47 տուն, 466 անձ հայ բնակիչ[24]: Նրա ժամանակակից Գ.Սրվանձտյանցը 1878թ. այդ թիվը ցույց է տալիս 408 մարդ[25]: Իսկ 1880թ. «Մասիս» օրաթերթը գյուղի բնակիչներին հաշվում է՝ 47 տուն, 486 շունչ[26]:

Հետաքրքիր է այն, որ 20-րդ դարասկզբի հեղինակ Անդրեաս Աղեքսանդրյանը, խոսելով Իշխանի գյուղի մասին, նշում է, որ այն ուներ 408 կամ 486 հայ բնակիչ[27]: Պարզ է, որ հեղինակն այդ թվերը տալիս է 19-րդ դարի վերջի համար և հիմք է ընդունել հենց վերոհիշյալ աղբյուրները:

Մենք ևս ընդունում ենք, որ գյուղի հայ բնակչությունը այդ ժամանակ կազմում էր 47 տուն: 20-րդ դարի սկզբին գյուղի բնակչությունն աճելով արդեն կազմում էր 55-60 տուն[28]:

Իշխանի գյուղում հայ բնակչությունը էլ ավելի մեծ թիվ էր կազմում Ի-ին համաշխարհային պատերազմի նախօրյակին: Որոշ աղբյուրների հավաստմամբ նրանց թիվը հասնում էր 80 տան, 674

---

[23] Kevorkian R.H., Paboudjian P.B., Les Armeniens dans l'empire ottoman la veille du Genocide. Paris. 1992, p. 239:

[24] Նաթանեան Պ.Վ., Տեղեկագրութիւն ընդհանուր վիճակին Սեբաստիոյ եւ անոր կուսակալութեան ներքեւ գտնվող մի քանի գլխավոր քաղաքաց, Կ.Պոլիս, 1877, էջ 154-155:

[25] Սրվանձտեանց Գ., Թորոս Աղբար, Կ.Պոլիս, 1879, մաս 1, էջ 172:

[26] Մասիս, Կ.Պոլիս, 1880, նոյեմբերի 25:

[27] Աղեքսանդրեան Ա., Պատմութիւն Ականավոր քաղաքին Սեբաստիոյ, Վենետիկ, 1911, էջ 363:

[28] Էփրիկեան Ս., Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, Վենետիկ, 1903-1905, հ. Ա, 2-րդ տպագրություն, էջ 71:

բնակչի[29]: Աղբյուրների այլ մասը 1915թ. նախաշեմին գյուղի համար ցույց է տալիս 150 տուն 1200 հոգի հայ բնակչություն:

Մեզ ավելի շատ վստահություն են ներշնչում 80 տուն, 674 հոգի թվային տվյալները, քանի որ, ինչպես տեսանք, նախորդ դարի վերջին քառորդին հայ բնակչությունը այս գյուղում կազմում էր շուրջ 47 տուն, իսկ 20-րդ դարի հենց սկզբին այդ թիվը կազմում էր 55-60 տուն[30]: Փաստորեն շուրջ 20 տարվա ընթացքում բնակչությունը աճել էր 8-13 տնով, և ավելի հավանական է, որ հաջորդ 15 տարվա ընթացքում այն աճած լիներ 20 տնով, քան թե 90-ով, որովհետև բնակչության ներհոսք չի արձանագրվել:

Խոսելով մյուս հայաբնակ գյուղի՝ Շնքուռակի (Շունքուռակ) մասին՝ նախ նշենք, որ այն հեղինակներից մի մասի մոտ նշված է Եբլուրզ-Էլի (Ենիխան) կազայի կազմում[31]: Սակայն մեր կարծիքով դա չի համապատասխանում իրականությանը:

Ենիխան (Յբլուրզելի, Նոր-խան) կոչված կազան գտնվում էր Սեբաստիայի կազայի արևմտյան հատվածում, իսկ Շնքուռակ գյուղը, ինչպես արդեն նշել ենք, ընկած էր Սեբաստիա քաղաքից հարավ և չէր մտնում Ենիխան կազայի սահմանների մեջ:

Ի սկզբանե պետք է նշենք, որ այս գյուղը 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին ունեցել է սակավաթիվ հայ բնակիչներ, և գյուղի բնակչության մեծ մասը կազմել է մահմեդական տարրը:

1875թ. գյուղի հայ բնակչության թիվը հասնում էր 3 տան, 33 անձի[32]: 1878թ. այնտեղ բնակվող հայերի թիվը կազմում էր 4 տուն, 28 շունչ[33]: Մինչդեռ նույն ժամանակ գյուղում գտնվող թուրքերի թիվը հասնում էր 110 հոգու[34]: 1880թ. գյուղի հայ բնակչության թիվն աճել էր՝ հասնելով 5 տան, 64 շնչի[35]:

Հայերը թեև թվով քիչ, բայց իրենց գոյությունը պահպանել են այս գյուղում նաև 20-րդ դարի առաջին տասնամյակում: Սկզբնաղբյուրներից մեկը վկայում է այն մասին, որ հայերը գյուղում 1915թ. ողբերգության

---

[29] Kevorkian R.H., Paboudjian P.B., նշվ.աշխ., էջ 239, տես նույնը Թեոդիկ, նշվ.աշխ., էջ 11:

[30] Գաբիկեան Կ., նշվ.աշխ, էջ 597, տես նույնը Առաքել Պատրիկ, նշվ աշխ., էջ 570, տես նաև Թեմուրճյան Կ., Գամիրքի հայ ազգաբնակչության թիվը Համաշխարհային առաջին պատերազմի նախօրյակին, Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. Ա, Երևան, 1970, էջ 138 (այսուհետև «Հայ ազգագրություն և բանահյուսություն»):

[31] Գաբիկեան Կ., նշվ.աշխ., նույն տեղում, տես նույնը Առաքել Պատրիկ, նշվ.աշխ., էջ 572:

[32] Նաբանեան Պ., նշվ.աշխ., էջ 163:

[33] ՀՀ ԱԱ, ֆ. 193, ց. 1, գ. 114, թ. 2, տես նույնը Սրվանձտեանց Գ., նշվ.աշխ., էջ 172:

[34] Տես նույն տեղում:

[35] Մասիս, Կ. Պոլիս, 1880, նոյեմբերի 25:

նախօրեին կազմում էին 10 տուն[36]: Բայց այս փաստարկը մեզ չի համոզում իր ճշմարտացիությամբ: Բանն այն է, որ եթե 1875-1880թթ. ընթացքում բնակչության աճը կազմել է ընդամենը 2 տուն 3-ից հասնելով 5-ի, ապա զարգացման նմանն միտման դեպքում էլ 1915թ. հայերի թիվը գյուղում պետք է կազմեր շուրջ 19 տուն:

Այդ իսկ պատճառով հակված ենք կարծելու, որ ճշմարտությանը ավելի մոտ են այն աղբյուրները, որոնք առաջին համաշխարհային պատերազմից առաջ այս գյուղի համար մատնանշում են 30 տուն, 240 հոգի[37] հայ բնակչություն:

Ղալտի (Ղալտը, Գալտը) հայաբնակ գյուղի անունը մնացել է Լենկթեմուրի ժամանակներից: 19-րդ դարի վերջի քառորդին այն իրենից ներկայացնում էր հայաշատ մի գյուղ: 1875թ. դրությամբ այն արդեն 20 տուն 200 շունչ[38] ունեցող հայկական գյուղ էր, որն ապրում էր իր մշակութային ու կրթական կյանքով և այդ ժամանակ ուներ Ս. Հակոբ անունով եկեղեցի ու դպրոց, ուր հաճախում էր 35 աշակերտ:

1878թ. գյուղի հայ բնակչությունը աճել էր՝ կազմելով 256 շունչ[39]: Իսկ 1880թ. նրանց թիվն կազմում էր 25 տուն[40]: Գյուղը 20-րդ դարի սկզբին շարունակեց հայաշատ մնալ և մինչև մեծ եղեռնը վերածվեց զուտ հայաբնակ գյուղի: 1915թ. Ղալտին արդեն 100 տուն և 800 անձ ունեցող զուտ հայաբնակ գյուղ էր[41]:

Ագդայա (Ակկայա, Ագդոյու) հայաբնակ գյուղի մասին տեղեկությունները շատ սակավաթիվ են: Հայտնի է միայն, որ 20-րդ դարի առաջին տասնամյակին այն ևս բնակեցված էր հայերով և 1914-1915թթ. դրությամբ նրանց թիվը կազմում էր 50 տուն՝ 400 մարդ[42]:

Կողալի (Ղոզալը) գյուղի մասին ևս տեղեկությունները շատ կցկտուր են, և եղածները հավատացնում են, որ նախքան առաջին համաշխարհային պատերազմը այս գյուղում ապրում էին 50 տուն, 400 շունչ հայեր[43]:

Քիչ այլ էր պատկերը Սեբաստիա քաղաքից հյուսիս՝ Ալիս գետի արևմտյան ափին ընկած գյուղերում, որտեղ 19-րդ դարի վերջին և 20-րդ

---

[36] ՀՀ ԱԱ, ֆ. 439, ց. 1, գ. 477, թ. 1:
[37] Գաբիկեան Կ., նշվ.աշխ., էջ 603, տես նաև Առաքել Պատրիկ, նշվ.աշխ., էջ 573:
[38] Նաթանեան Պ., նշվ.աշխ., էջ 164:
[39] ՀՀ ԱԱ, ֆ. 476, ց. 1, գ. 940, թ. 7, ֆ. 193, ց. 1, գ. 114, թ. 1, տես նույնը Սովանճտեանց Գ., նշվ.աշխ., նույն տեղում, Աղեքսանդրեան Ա., նշվ.աշխ., էջ 363:
[40] Մասիս, Կ.Պոլիս, 1880, նոյեմբերի 25:
[41] ՀՀ ԱԱ, ֆ. 439, ց. 1, գ. 477, թ. 1, տես նաև Գաբիկեան Կ., նշվ.աշխ., էջ 597, Առաքել Պ., նշվ.աշխ., էջ 569, տես նույնը «Հայ ազգագրություն և բանահյուսություն», հ. Ա, էջ 138:
[42] Գաբիկեան Կ., նշվ.աշխ., էջ 598, տես նույնը Առաքել Պատրիկ, նշվ.աշխ., էջ 570, տես նաև «Հայ ազգագրություն և բանահյուսություն», հ. Ա, Երևան, 1970, էջ 138:
[43] Տես նույն տեղում, տես, նաև ՀՀ ԱԱ, ֆ. 476, ց. 1, գ. 144, թ. 7:

դարի սկզբին կենտրոնացել էր բնակչության և մասնավորապես հայ ազգաբնակչության հոծ զանգված: Այդ գյուղերն էին Դավրան և Բրգնիքը:

Դավրա[44] գյուղը Սեբաստիա քաղաքին ամենամոտիկ գտնվող հայաբնակ գյուղն էր: Այն կառուցված էր Մայրագոմ կոչվող լեռնաշղթայի ստորոտում՝ բլրի վրա:

19-րդ դարի վերջին գյուղն ունեցել է ստվար հայ բնակչություն: Դեռևս 1870թ. նրանց թիվը գյուղում կազմում էր 200 տուն[45]: Եթե յուրաքանչյուր տան միջին շնչերի քանակն ընդունենք 8 մարդ, ապա ստացվում է 1600 շունչ:

Ուշագրավ է, որ գյուղը գրեթե չէր տուժել 1895-1896թթ. կոտորածի ժամանակ, թեև որոշ ժողովրդագրական տեղաշարժեր առկա են եղել: 1896թ., երբ շրջակայքից մեծ թվով մահմեդական խուժանը հարձակում է գործում գյուղի վրա, նրանք չեն համարձակվում մտնել գյուղ՝ վախենալով, որ տղամարդիկ գյուղում կլինեն: Նրանք գյուղի կանանց, երեխաների, ծերունիների մի մասին քշում են հեռու վայրեր[46]:

Կարծում ենք, որ այս տեղաշարժի հետևանքով հայ բնակչության թիվն այնքան էլ չէր նվազել, և 20-րդ դարի սկզբին հայերն այստեղ զգալի աճ ունեցան: Թեոդիկի մոտ հայերի թիվը հասնում էր 255 տան[47]: Ռայմոնդ Գևորգյանի և Փաուլ Փափուջյանի մոտ այդ թիվը նույնպես կազմում էր 255 տուն /1518 շունչ/[48]: Ըստ այդմ՝ յուրաքանչյուր տան միջին շնչերի թիվը կազմում էր 5-6 մարդ, որը, մեր կարծիքով, չի համապատասխանում իրականությանը: Այդ իսկ պատճառով հակված ենք կարծելու, որ ճշմարտացի են այն հեղինակները, որոնք գտնում են , որ 1914թ. գյուղն ուներ 300 տուն կամ 2400 շունչ բնակչություն[49]:

Բրգնիք զուտ հայաբնակ գյուղն ուներ շատ հին պատմություն: Նրա առաջին բնակիչները եղել են Բագրատունյաց տոհմից սերված և այդ պատճառով գյուղը հայտնի է եղել նաև Բագրատունիք անվամբ[50]:

---

[44] Ըստ ավանդության, երբ Սենեքերիմ Արծրունի հայոց արքան փոխադրվեց Սեբաստիա, նրա որդին՝ Դավիթը, Դավուռ կոչվող վայրում ամառանոց է կառուցում և իր անունով անվանում է Դավթագյուղ: Հետագայում գյուղը այստեղից էլ սկսեց կոչվել Դավրա:

[45] ՀՀ ԱԱ, ֆ. 193, ց. 1, գ. 111, թ. 1:

[46] Սապահ-Գյուլեան Ս., Փոքր Հայքի հիշատակներ, հ. Ա, Չիկագո, 1917, էջ 284-287, Առաքել Պատրիկ, նշվ.աշխ., էջ 299-300:

[47] Թէոդիկ, Գողգոթա հայ հոգեւորականութեան եւ իր հօտին աղետալի 1915 տարիին, Նիւ Եորք, 1985, էջ 111:

[48] Kevorkian R.H., Paboudjian P.B., նշվ.աշխ., էջ 239:

[49] Գաբիկեան Կ., նշվ.աշխ., էջ 597, տես նաև Առաքել Պատրիկ, նշվ.աշխ., նույն տեղում. նաև «Հայ ազգագրություն և բանահյուսություն», հ. Ա, նույն տեղում:

[50] 1631թ. գրված Սեբաստիայի Ս. Նշանի վանքի մի գրքի հիշատակարանում գրված էին հետևյալ տողերը. «Բագրատունիք, այն է Բոգնիք, ի սմանէ ասի յոմանց, թե էին ի ցեղէն Բագրատունեաց, և եկեալ աստ արարին հիմնարկութիւն և էին տունք իբր եօթն և յետոյ ի գոեհկաց դարձուցեալ զբագրատունիք Բոգնիք և է իբր ժամալ և կիսով հեռի ի քաղաքէ Սեբաստիոյ և այժմ են ի սմա տունք իբրև

Գյուղը միշտ եղել է հայաշատ կենտրոն: Այստեղի ծնունդ է հայ ժողովրդի արժանի զավակ, մեծ բանաստեղծ Դանիել Վարուժանը:

Դեռ 19-րդ դարի սկզբին գյուղն ուներ 100 տուն հայ բնակչություն[51]: Մինչև 19-րդ դարի 60-ական թթ. նկատելի է բնակչության զգալի աճ և տեղաշարժեր: Մասնավորապես բնակչության մեծ մասը գաղթեց Կ.Պոլիս[52]: Չնայած այս տեղաշարժերի, այնուամենայնիվ, այդ ժամանակամիջոցում գյուղում կար ստվար բնակչություն: 1863թ. դրությամբ գյուղն ուներ 165 տուն կամ 1300 հոգի[53]: Ի դեպ, գյուղի հայերը կաթոլիկներ էին: Արդեն 1880-ական թթ. կեսերին նրանց թիվը հասավ 1800 անձի[54]: Պատահական չէ, որ այդպիսի աճի դեպքում արդեն 1914թ. դրությամբ հայերի թիվն այստեղ հասնում էր 500 տան 4000 անձի[55]: Փաստորեն, հայ բնակչությանն հոծ զանգվածով այս գյուղը կազայում զիջում էր միայն Սեբաստիա քաղաքին:

Այսպիսով, մեր հաշվումների համաձայն ստացվում է, որ 1914-1915թթ. ողջ Սեբաստիայի կազայում բնակվող հայերի թիվն անցնում է 40 հազարից (40914մարդ): Մինչդեռ նույն ժամանակահատվածի համար որոշ եվրոպացի հեղինակներ[56], հենվելով թուրքական տվյալների վրա, պնդում են հօգուտ 26076 շնչի, որը, մեր կարծիքով, շատ հեռու է հավաստի լինելուց, այն դեպքում, երբ Սապահ-Գյուլյանը նույն ժամանակաշրջանի համար հայերի թիվը ցույց է տալիս 68550 մարդ[57]:

Նույն ժամանակ կազայում բնակվում էին նաև հույներ, որոնց թիվը աննշան էր և կազմում էր 728 հոգի[58]: Կազայում բնակվող մահմեդական տարրը կազմում էր 54819 շունչ[59]:

Փաստորեն, ստացվում է, որ նախքան մեծ եղեռնը Սեբաստիայի կազայի բնակչության ընդհանուր թիվը հասնում էր 96461 մարդու:

Այսպիսով, Սեբաստիայի գավառակը 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին իրենից ներկայացնում էր խայտաբղետ էթնիկ պատկեր ունեցող մի կազա, ուր հայերը մեծ թիվ էին կազմում և տեղաբաշխված

հնգետասան ի թուին հայոց ՌՁ» (Էփրիկեան Ս., Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, Վենետիկ, 1903-1905, հ. Ա, 2-րդ տպագրություն, էջ 436), Պոտուրեան Մ., Հայ հանրագիտակ, գիրք Գ., Պուքրեշ, 1938, էջ 413:

[51] Աղեքսանդրեան Ա., նշվ.աշխ., էջ 363:

[52] Տես նույն տեղում:

[53] ՀՀ ԱԱ, Ֆ. 193, ց. 1, գ. 109, թ. 3:

[54] Աղեքսանդրեան Ա., նշվ.աշխ., նույն տեղում:

[55] Գաբիկեան Կ., նշվ.աշխ., նույն տեղում, տես նաև Առաքել Պատրիկ, նշվ.աշխ., նույն տեղում:

[56] Justin Mac Carthy, The Arab world, Turkey, and the Balkans (1878-1914). A Handbook of historical statistics, Boston, 1982, p. 77, տես նույնը Kemal H.Karpat, Ottoman population 1830-1914. Demographic and Social Characteristic, p. 77, Paris, 1985.

[57] Սապահ-Գյուլեան Ս., Փոքր Հայքի հիշատակներ, Չիկագո, 1917, էջ 242:

[58] Justin Mac Carthy, նշվ.աշխ, նույն տեղում, տես նույնը Kemal H.Karpat, նշվ.աշխ., նույն տեղում:

[59] Նույն տեղում:

էին հիմնականում Սեբաստիա քաղաքում, ինչպես նաև Իշխանի, Շնքուռակ, Ղալտի, Ագղայա, Կողալի, Ղավրա և Բրգնիք գյուղերում:

3. ՍԵԲԱՍՏԻԱՅԻ ԳԱՎԱՌԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳԱՎԱՌԱԿՆԵՐ

ա. ՀԱՖԻՔԻ ԳԱՎԱՌԱԿ

Սեբաստիայի բազմաթիվ կազաներից (գավառակներից) հայաշատ, պատմա-ազգագրական հարուստ սովորություններով, սրբավայրերով շրջանը Հաֆիքի (Գոչ-Հիսարի) գավառակն էր:

Հաֆիքի կազան գտնվում է Սեբաստիայի սանջակի արևելքում: Վերջինս արևմուտքից սահմանակից էր Սեբաստիա քաղաքին, հյուսիսից Պոնտական լեռներով բաժանված էր Կոլյուհիսար, Անդրեաս կազաներից, իսկ հարավից սահմանակից էր Կանգալ և Տիվրիկ կազաներին:

Այս կազայի կենտրոնը Գոչ-Հիսար (Գոչասար) կամ Պետրոսի գյուղն էր, որը գտնվում է Ալիս գետի աջ ափին: Կազան բաժանված էր 16 գյուղախմբերի (նահիեների)[60]: Կազայի կայմակամը (կառավարիչը) նշանակվում էր հայերից[61]:

19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին Հաֆիքի կազան ուներ խայտաբղետ ազգային կազմ: Բնակիչները հայեր, թուրքեր, կզլբաշներ, հույներ և չերքեզներ էին: Չերքեզներն այստեղ էին տեղափոխվել 1878թ. Հյուսիսային Կովկասից[62]: Չերքեզների և կզլբաշների գյուղերը հիմնականում ընկած էին գավառակի հյուսիսային մասերում: Նշենք նաև, որ կազայի կազմում գտնվող թուրքերը, որոշ բացառությամբ, այստեղ հաստատվել էին միայն 19-րդ դարի սկզբին:

Այս կազայի բնակչության մեծամասնությունը կազմում էին հայերը, իսկ մնացածը՝ թուրքեր, հույներ, չերքեզներ և այլ ազգությունների ներկայացուցիչներ: Ուշագրավ է, որ հայերի բնական աճն ավելի բարձր էր: Այս կազայի հայությունը մի քանի անգամ կոտորվել է 1860-ական թթ. և 1895թ., բայց նորից աճել է և նոր գյուղեր ստեղծել հին գյուղերի կողքին:

Ալիս գետի երկու ափերին՝ բլրակների և դաշտերի միջև, ձգված էր հայկական գյուղերի երկարավուն շարքը տեղավորված միշտ դաշտավայրերում և բարեբեր գետերի հովիտներում: Այստեղից կարելի է եզրակացնել, որ հայերը շատ հին բնակիչներ են եղել այստեղ և ավելի վաղ են հաստատվել, քան թե մյուս ազգերը:

Կովտունը Ալիսի Վերին հովտի կենտրոնական հայաշատ մեծ գյուղերից էր: Վեր էր խոյանում լերկ սարահարթի վրա: Կովտունի

---

[60] ՀՀ ԱԱ, ֆ. 398, ց. 1, գ. 14, թ. 104, ֆ. 439, ց. 1, գ. 483, թ. 1, տես նաև «Հայկազեան հայագիտական հանդէս», հ. ԺԵ, Պեյրութ, 1995, էջ 499, տես նաև «Ընդարձակ օրացույց ազգային հիվանդանոցի», Կ.Պոլիս, 1903, էջ 187, տես նույն տեղում, էջ 240, տես նույնը Համբարձումեան Վ, Գիւղաշխարհ, Փարիզ, 1927, էջ 49, տես նաև Առաքել Պատրիկ, Նշվ.աշխ., հ. Ա., էջ 307, տես նույնը ՀՀ ԱԱ, ֆ. 476, ց. 1, գ. 940, թ. 11:

[61] Տես նույն տեղում:

[62] ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի ազգագրության բաժնի արխիվ (այսուհետև՝ ՀՀ ԳԱԱ ՀԱԻ ԱԲԱ), թղթապանակ 121/1, էջ 34:

արևելքում Գոչ-Հիսար, Հաղթ և Կավրա գյուղերն էին, արևմուտքում՝ Խանծառը[63]:

Ալիս գետի ձախ ափին էին գտնվում Կամիս, Խորսանա, Քոթնի, Բյուրակն (Բինգյոլ), Խանծառ, Հաղթ (Տուզասար), Յարասար, Ղավրազ, Պարտիզակ /Բախչեջիկ/ հայաբնակ գյուղերը:

Կամիս գյուղը գտնվում էր Ալիս գետի վերին հովտում՝ Սեբաստիա քաղաքից շուրջ 30 կմ դեպի արևելք : Կամիս գյուղի առաջին բնակիչները, ըստ կամիսցի Պ.Վարդան Տերտերյանի հաղորդած տեղեկության, եղել էին Աղայեկյան, Մինասյան, Մելքոնյան, Պալյան, Քեշիշյան, Լուսարևյան, Թախլճյան, Օհանյան և Ուզունյան ընտանիքները[64]:

Այս գյուղում 1875թ. ապրում էր 601 հայ բնակիչ, իսկ 1878թ. նրանց թիվը հասել էր 827-ի, մինչդեռ նույն ժամանակ թուրքերի թիվը կազմում էր 75 մարդ[65]:

Խորսանա գյուղը բնիկների ստուգաբանությամբ կոչվում է «Հարս Աննա»[66] իբր թե Սենեքերիմ արքայի հարսի անունով:

Այս գյուղը, ըստ Պ.Նաթանյանի, 1875թ. ուներ 58 տուն, 776 շունչ հայ բնակիչ[67]: Այս տվյալը կարելի է համարել ճշմարիտ, քանի որ 1900թ. դրությամբ այստեղ բնակվող հայերի թվաքանակը աճել էր՝ հասնելով 100-120 տան[68]: Նկատելի է, որ ինչպես Հաֆիքի կազայի այլ զուտ հայաբնակ գյուղերում, նույնպես և այստեղ հայ բնակչությունը 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին զգալիորեն աճել էր:

Քոթնի հայաբնակ գյուղը գտնվում է Գոչ-Հիսարից 10 կմ դեպի հարավ-արևելք: Ըստ ավանդության՝ ջալալիների ասպատակությունների ժամանակ Ագուլիսից շատ ընտանիքներ էին գաղթել այստեղ: Այդպես նաև Բաբերդից գաղթել էին Բաբելյանները, Մխիթարյանները, Գողթն գավառից՝ Բոզոյան ընտանիքը[69]: Այս գյուղում, ըստ 1875թ. տվյալի, բնակվում էր 27 տուն հայ և 347 մարդ[70]:

Մենք հակված ենք կարծելու, որ այս տվյալը ճշմարիտ է, քանի որ նույն փաստն է արձանագրվում նաև մեկ այլ պաշտոնական փաստաթղթում[71]:

Ալիս գետի աջ ափին տեղավորված էին Գոչ-Հիսար, Կավռա, Խոռոխոն, Բրաբերդ, Կովտուն հայաբնակ գյուղերը:

Գոչ-Հիսար (Գոչասար) գյուղի հայեցի անունը Պետրոսի է, որը Ալիսի վերին հովտի նահիեի կենտրոնն էր: Դեռ 19-րդ դարի վերջի

---

[63] ՀՀ ԱԱ, ֆ. 193, ց. 1, գ. 303, թ. 1 շրջ.:
[64] Առաքել Պատրիկ, նշվ.աշխ., էջ 352:
[65] ՀՀ ԱԱ, ֆ. 476, ց. 1, գ. 714, թ. 5:
[66] Առաքել Պատրիկ, նշվ.աշխ., էջ 363:
[67] Նաթանեան Պ., նշվ.աշխ., էջ 155:
[68] ՀՀ ԱԱ, ֆ. 425, ց. 1, գ. 50, թ. 11 շրջ.:
[69] Առաքել Պատրիկ, նշվ.աշխ., էջ 382:
[70] Նաթանեան Պ., նշվ.աշխ., էջ 159-160:
[71] ՀՀ ԱԱ, ֆ. 193, ց. 1, գ. 114, թ. 3:

քառորդին հայ բնակչությունը իր թվաքանակով թուրքերին գերակշռում էր: 1878թ. դրությամբ նրանց թիվը գյուղում հասնում էր 706 շնչի, մինչդեռ թուրքերի թիվը կազմում էր 470 շունչ[72]: Ըստ որոշ տվյալների արդեն 1902թ. գյուղն ուներ 200 տուն բնակիչ, որից 150 տունը հայեր էին[73]: Մեկ այլ տեղեկության համաձայն 1900-1915 թթ. ժամանակամիջոցում, ընդհանուր Պետրոսի գյուղում բնակվում էր շուրջ 4000 մարդ, որից 2500 հայ և 1500 թուրք[74]:

Այս տվյալներից որն էլ որ ընդունելու լինենք, պարզ է դառնում, որ Պետրոսի գյուղում բնակվող հայերն իրենց թվաքանակով ավելի շատ էին, քան թե թուրքերը:

Կավռա[75] գյուղը գտնվում է Սեբաստիա քաղաքից 20 կիլոմետր դեպի արևելք: Ավանդության համաձայն՝ գյուղի բնակչությունը եկել էր Դերջանից և Շաբին Կարահիսարի սանջակի Կթանոց գյուղից: Հետագայում ջալալիների, ենիչերների ասպատակությունների և կոտորածների հետևանքով գյուղացիները հաստատվեցին Կամիս, Գոչ-Հիսար գյուղերում, ոմանք էլ Սեբաստիայում[76]: Այս գյուղում 1875թ. կար 33 տուն, 432 շունչ հայ բնակչություն[77]: Իսկ 1878թ. տվյալների համաձայն՝ այս թիվը հասնում էր 438 մարդու[78]: Ինչպես երևում է, հայ բնակչությունը աճել է 19-րդ դարի վերջին:

Խոռոխոն (Խոռխոռունիք)[79] գյուղը գտնվում է Գոչ-Հիսար գյուղից հյուսիս, Չայ-Քուրդ գյուղից արևմուտք: Այստեղ հայերը 19-րդ դարի վերջին մեծ թիվ էին կազմում դեռ 1870թ. վիճակով 60 տուն[80]: 1878թ. նրանց թիվը հասնում էր 378, իսկ թուրքերինը 280 մարդու[81]: 20-րդ դարի սկզբին՝ մինչև Մեծ եղեռնը, հայ բնակչությունն այս գյուղում կազմում էր 1000 հոգի, մինչդեռ թուրքերը 350 հոգի էին[82]: Այս տվյալները ցույց են

---

[72] Սրվանձտեանց Գ., նշվ.աշխ, էջ 173:

[73] Պոտուրեան Վ.Ս., նշվ.աշխ., գիրք Գ., էջ 571:

[74] Առաքել Պատրիկ, նշվ.աշխ., էջ 369:

[75] Կավրա գյուղը, ըստ հույն աշխարագիր Ստրաբոնի, մ.թ.ա. 150 տարի առաջ Կապադովկիայի Պյութատորիս թագուհին է հիմնել և անվանել «Կաբերա»: Կաբերան (Գաբիրան) հետո դարձել է «Կաբրա» և այսպես տարիների ընթացքում ինչյունափոխվելով դարձել է Կավրա, իսկ ավելի ուշ «Կավռա»:

[76] Առաքել Պատրիկ, նշվ.աշխ., էջ 385.

[77] ՀՀ ԱԱ, ֆ. 476, ց. 1, գ. 718, թ. 19, տես նույնը Նաթանեան Պ., նշվ աշխ., էջ 156-157.

[78] ՀՀ ԱԱ, ֆ 476, ց. 1, գ. 718, թ. 19, տես նույնը, "Известия Кавказского отдела Императорского Русского географического общества", Тифлис, 1884/1885, т. 8, N 1-2, стр. 60.

[79] Գյուղի անունը վկայում է, որ այն եկել է Խոռխոռունի նախարարական տոհմի անունից, և այստեղ հայերը հաստատվել են շատ վաղ ժամանակներից:

[80] ՀՀ ԱԱ, ֆ. 193, ց. 1, գ. 111, թ. 1 շրջ.:

[81] ՀՀ ԱԱ, ֆ. 193, ց. 1, գ. 114, թ. 6:

[82] ՀՀ ԳԱԱ ՀԱԻ ԱԲԱ, նույն տեղում, էջ 242:

տալիս, որ 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին այստեղ ևս հայերը լիովին գերակշռում էին իրենց թվաքանակով:

Բռաբերդ (Բրաբերդ) գյուղը 1878թ. դրությամբ ուներ 33 տուն կամ 362 շունչ հայ բնակչություն, իսկ թուրքերն ընդամենը 231 հոգի էին[83]:

20-րդ դարի սկզբին այս գյուղի բնակչությունը ևս զգալիորեն աճել էր և 1914թ. վիճակով այն հասավ 100 տան և 1000 հոգու[84]: Կարապետ Գաբիկյանը հայերի թիվը նույն ժամանակ հասցնում է 200 տան և 1600 մարդու[85]:

Բյուրակն (Բինգյոլ) հայաբնակ գյուղը գտնվում է Սեբաստիա քաղաքի հարավարևելյան մասում: Դեռևս 1870թ. գյուղում կար 40 տուն հայ բնակչություն[86]: Իսկ Պ.Նաթանյանի բերած տվյալների համաձայն՝ 1875թ. բնակչության թիվը հասավ 67 տան և 344 անձի[87]: Երևում է, որ Բյուրակնը, իրոք, հանդիսացել է հայկական մի գյուղ, ուր հայերն ապրել են իրենց մշակութային կյանքով: Արդեն 1914թ. դրությամբ նրանց թիվը հասնում էր 1500 անձի[88]:

Խանծառ (Խանձար) զուտ հայաբնակ գյուղը գտնվում էր Սեբաստիան Կարինին միացնող խճուղու վրա: Այն 1875թ. տվյալներով ուներ շուրջ 33 հայ տուն՝ 388 շունչ բնակիչ, Ս. Սարգիս անունով եկեղեցի և մեկ դպրոց[89]: Իսկ 1878թ. մեկ այլ տվյալի համաձայն, որտեղ գյուղը հիշատակվում է «Խանկառ»[90] ձևով, հայ բնակչությունը կազմում էր 463 մարդ:

Նշենք, որ քաղաքական ու տնտեսական ճնշումների տակ Խանծառի երիտասարդների մի մասը 19-րդ դարի վերջին գաղթել էր Միացյալ նահանգներ[91]: Պետք է նկատենք, որ երիտասարդների մի մասն էլ հաստատվել էր Կիլիկիայում՝ Խաչիկ Տերտերյանի, Կովկասում՝ Բարթող ու Ստեփան Տերտերյանների, Թորոս ու Հովհաննես Թեյզյանների, Արսեն ու Թագվոր Քեչեչյանների գլխավորությամբ, որոնք շուտով դարձան հայ ազատագրության պայքարի մարտիկներ[92]: Այդ գաղթը, մեր կարծիքով, չի ընդունել զանգվածային բնույթ, և 20-րդ դարի

---

[83] ՀՀ ԱԱ, ֆ. 193, ց. 1, գ. 114, թ. 6:
[84] ՀՀ ԱԱ, ֆ. 193, ց. 1, գ. 303, թ. 2 շրջ., տես նույնը ՀՀ ԳԱԱ ՀԱԻ ԱԲԱ, նույն տեղում, էջ 27, տես նույնը Համբարձումեան Վ., նշվ.աշխ., էջ 49:
[85] Գաբիկեան Կ., նշվ.աշխ., էջ 597-598:
[86] ՀՀ ԱԱ, ֆ. 193, ց. 1, գ. 111, թ. 1:
[87] Նաթանեան Պ., նշվ.աշխ., էջ 154:
[88] «Հայ ազգագրություն և բանահյուսություն», նույն տեղում, տե՛ս նաև Գաբիկեան Կ., նշվ.աշխ., էջ 600, տես նաև ՀՀ ԳԱԱ ՀԱԻ ԱԲԱ, նույն տեղում, էջ 242:
[89] Նաթանեան Պ., նշվ.աշխ., էջ 162:
[90] ՀՀ ԱԱ, ֆ. 193, ց. 1, գ. 114, թ. 3:
[91] Առաքել Պատրիկ, նշվ.աշխ., էջ 365:
[92] Տես նույն տեղում:

սկզբին գյուղը պահպանել էր իր հայեցի դիմագիծը, քանի որ 1914թ այստեղ ապրում էր 100 տուն կամ 1000 շունչ[93]:

Հաղթ (Տուզասար, Աղտք) գյուղը գտնվում է Հաֆիք կազայի հարավային մասում, Գոչ-Հիսարի հետ կապող ճանապարհի վրա՝ ձորակի մեջ: Գյուղը 2-3 անունով էր հայտնի Հաղթ, Աղտք-Սարաճի, թուրքերեն Տուզ-Հիսար: Ժողովուրդը Տուզլասար կամ Տուզասար էր կոչում[94]:

1870թ. այստեղ բնակվող հայ բնակչության թիվը հասնում էր 100 տան[95]: Իսկ 1875թ. վիճակով հայ բնակիչների թվաքանակը հասնում էր 116 տան և 1144 շնչի[96]:

1895թ. համիդեական ջարդերից առաջ այս գյուղն արդեն ուներ 300 տուն և 2500 անձ հայ բնակիչ[97]: Այս տվյալներից երևում է, որ 19-րդ դարի վերջին երեսունամյակի ընթացքում Հաղթի հայ բնակչությունը զգալիորեն աճել էր:

Այս կոտորածը և գաղթը խեղաթյուրեցին Հաղթի ժողովրդագրական պատկերը: Սակայն 20-րդ դարի սկզբին գյուղը պահպանել էր իր հայեցի դեմքը, քանի որ, ըստ Հաղթ գյուղի 1914թ. մարդահամարի, հայ բնակիչների թիվը կազմում էր 2600 մարդ[98]:

Յարհիսար գյուղի անունը կապվում է թուրքերեն Յարը-Հիսար՝ կիսապարիսպ բառի հետ: Հայերն անվանում էին Շժղենիք: Գյուղի թուրքերն այստեղ էին հաստատվել 17-րդ դարում: Սակայն հայ բնակչությունը 19-րդ դարում ևս գերակշռում էր: 1878թ. արդեն հայերի թիվը կազմում էր 827 մարդ, մինչդեռ թուրքերն ընդամենը 300 հոգի էին[99]: Բնակչության այսպիսի բազմամարդությունը գյուղում պետք է բացատրել նրա նահիեի կենտրոն լինելու հանգամանքով: ռում 19-րդ դարի վերջին

---

[93] ՀՀ ԱԱ, ֆ. 193, ց. 1, գ. 303, թ. 2:
[94] Առաքել Պատրիկ, նշվ.աշխ., էջ 336:
[95] ՀՀ ԱԱ, ֆ. 193, ց. 1, գ. 111, թ. 1:
[96] Նաթանեան Պ., նշվ.աշխ., էջ 155-156:
[97] ՀՀ ԱԱ, ֆ 193, ց. 1, գ. 63, թ. 68:
[98] Դրանց թվում էին Անուշյան, Արծիվյան, Ասլանյան, Արմազանյան, Բաթոյան, Գալֆայան, Գահվեճյան, Գարագչյան, Գլասանյան, Գոճամանյան, Դարբինյան, Յարամյան, Երեմյան, Երկանյան, Թորոսյան, Թորունթճյան, Լեֆեսյան, Խորանյան, Կոճիկյան, Հայրապետյան, Ղազանճյան, Ղորլոխյան, Ղրղոշյան, Ճեվահիճյան, Մարատյան, Մալխասյան, Մարգարյան, Մադոյան, Մահտեսեղիկյան, Մուրադյան, Մխիկյան, Մրյան, Հակոբյան, Հավետյան, Եսայան, Հերոյան, Նրյան, Չիթճիպսշյան, Չորթանյան, Բասմաճյան, Պալիկյան, Բարաթյան, Անդրեասյան, Պողոսյան, Սարյան, Սաղաթելյան, Սրապյան, Սոլաքյան, Վարագյան, Տերտերյան, Տրդատյան, Փանոսյան, Քեոյան, Օհանյան, Փափազյան գերդաստանները: (ՀՀ ԱԱ, ֆ. 476, ց. 1, գ. 761, թ. 1, տե՛ս նաև Տրդատյան Տրդատ, Հաղթը և հաղթեցիները, Բոսթոն, 1959, էջ 4):

[99] ՀՀ ԱԱ, ֆ. 193, ց. 1, գ. 114, թ. 3:

Յարհիսարում բացի հայերից և թուրքերից, բնակվում էին նաև աննշան թվով չերքեզներ: Այդ մասին է վկայում 1876թ. Կ.Պոլսի գավառական տեղեկագիրը, ըստ որի, Յարհիսար գյուղի՝ հայերին պատկանող մշակության դաշտերի և արտերի մեջ տեղի մյուդիրը (գավառապետը) չերքեզներ է բնակեցնում, և որոշ հայ գյուղացիներ զրկվում են իրենց հողերից[100]: Սակայն կարելի է ենթադրել, որ նրանց թիվը եղել է աննշան:

Ղավրազ զուտ հայաբնակ գյուղն արևմտյան կողմից սահմանակից էր Խորսանա գյուղին: Ավանդության համաձայն՝ Ղավրազ գյուղի բնակչությունը եկել էր Պարսկաստանի Ուրմիա լճի շրջանից՝ փախչելով տեղի խաների կեղեքումներից: Դրանցից Թումանյան ընտանիքը եկել էր Սալմաստից[101]: Այստեղ 1878թ. դրությամբ բնակվում էր 20 տուն կամ 261 հոգի հայ բնակիչ[102]: Իսկ նախքան առաջին համաշխարհային պատերազմը, ըստ գյուղի մարդահամարի, այդ թիվը հասել էր 2600 մարդու[103]: Այսպիսի աճը, հավանաբար, տեղի է ունեցել բնակչության ներհոսքի արդյունքում: Պարզորոշ երևում է, որ այստեղ ևս 20-րդ դարի սկզբին հայերի թիվն աճել էր:

Պարտիզակ (Բախչեջիկ) գյուղում դեռ 1878թ. բնակվում էին 729 հայ և 40 թուրք[104], իսկ 1906թ. հայերի թիվը նվազեց մինչև 58 տան և 383 անձի[105]: Հայ բնակչության նվազման պատճառը 1895թ. Պարտիզակ գյուղի սարսափելի կոտորածն էր, որի պատճառով նաև բնակչության արտագաղթ եղավ :

1908թ. թուրքական սահմանադրությունը պատճառ եղավ, որ գյուղի երիտասարդները ենթարկվեին զորակոչի: Քսանմեկ տարեկանները զորակոչվեցին բանակ, իսկ մեծահասակները գաղթեցին Եվրոպա և ԱՄՆ: Այդ գաղթածներից Նշան Ջանիկյանը, Հակոբ Ասատրյանը, Տոնիկ Մքլյանը և Խաչատուր Քյոզիճկյանը 1909թ. ԱՄՆ-ի Մասաչուսեթս նահանգում հիմնադրեցին «Սեբաստիայի Պարտիզակ գյուղի Ուսումնասիրաց միությունը»[106]:

Բացի վերոհիշյալ գյուղերից, հայերը կենտրոնացած էին նաև Պարճին, Պորազիտ կամ Պորազուտ, Դդմաճ, Թոտորակ, Օռնովուտ, Չայ-Քուրդ, Ենի-Խան (Նոր-Խան), Ճանճի, Դավշանլու և այլ մի շարք գյուղերում, ուր ևս այս ժամանակահատվածում մեծամասնություն էին կազմել:

---

[100] Ռաֆֆի, Տաճկահայք: Հայկական հարցը, Վիեննա, 1913, էջ 49:
[101] Առաքել Պատրիկ, նշվ.աշխ., էջ 384:
[102] ՀՀ ԱԱ, ֆ. 193, ց. 1, գ. 114, թ. 3:
[103] ՀՀ ԳԱԱ ՀԱԻ ԱԲԱ, նույն տեղում, էջ 242:
[104] ՀՀ ԱԱ, ֆ. 193, ց. 1, գ. 114, թ. 6:
[105] Տե՛ս նույն տեղում:
[106] Տե՛ս նույն տեղում:

Հաֆիքի կազան իր հայեցի դիմագիծը պահպանել էր 1915թ. նախօրյակին: Մի վիճակագրության[106] համաձայն այն ուներ հետևյալ պատկերը.

Աղյուսակ 1

Զուտ հայաբնակ գյուղեր

Գյուղի անուններ	Տուն	Շունչ
Կովտուն	300	3000
Կավրա	150	1500
Աղտք-Սարաճի	400	3500
Խորսանա	150	1500
Քոքնի	100	1000
Քոյթյու-Եէնիճե	50	500
Բինգյոլ (Բյուրակն)	150	1500
Ագղայու	30	300
Իշխանի	150	1500
Դդմաճ	200	2000
Խանծառ	100	1000
Ղավրագ	90	900
	Ընդհանուր 1870	Ընդհանուր 18200

[106] ՀՀ ԱԱ, ֆ. 193, ց. 1, գ. 30, թ. 2, տես նաև ՀՀ ԳԱԱ ՀԱԻ ԱԲԱ նույն տեղում, Համբարձումեան Վ., Նշվ.աշխ., էջ 58-61:

Աղյուսակ 2

Խառը բնակչությամբ գյուղեր

Գյուղեր	Հայ տուն	Հայ շունչ	Թուրք տուն	Թուրք շունչ	Ընդհ. տուն	Ընդհ. շունչ
Խոռոխոն	100	1000	50	350	150	1350
Չայ-Քուրդ	10	100	90	630	100	750
Պարտիզակ	20	200	30	210	50	410
Օռնովուտ	10	100	90	630	100	730
Բռաբերդ	50	500	30	210	80	710
Գոչ-Հիսար	200	2000	150	1500	350	3500
Կամիս	100	1000	10	70	110	1070
Յարասար	100	1000	100	700	200	1700
Թոտորակ	100	1000	50	350	150	1350
Ճանճին	50	500	100	700	150	1200
Դավշանլու	20	200	50	350	70	550
Սթանոս	70	700	30	210	100	910
Պարճին	10	100	20	140	30	240
Դևոնա-Տևեքսե	70	700	50	350	120	1050
	Ընդ. 910	Ընդ. 9100	Ընդ. 850	Ընդ. 6400	Ընդ. 1760	Ընդ. 15520

Աղյուսակ 3

Թուրքաբնակ գյուղեր

Գյուղեր	Տուն	Շունչ
Նլնտուր	210	700
Սոֆլար	50	350
Պաչպոյուք	60	420
Բեյ-Փունղար	100	700
Գլխտեղ	70	490
Ըժղա	25	175
Թորոսա	40	280
Կեռնե	30	210
Ճիհին	100	700
Ղերեյուք	100	700
Ազ-Փունղար	100	700
	Ընդ. 885	Ընդ. 5425

Աղյուսակ 4

Զուտ կզլբաշների գյուղեր

Գյուղեր	Տուն	Բնակիչ
Հմյուր	20	140
Էմիե-Գյուղ	50	350
Ղարլու	100	700
Օրչայիլ	40	280
Մարրգեղ	5	35
Տիվկեր	150	1050
Օրակյոզ	50	350
Սերմեռ	40	280
Մազան	30	210
Թոխուճ	28	175
	Ընդ. 513	Ընդ. 3570

Այս տվյալների համաձայն ստացվում է, որ հայ բնակչության թիվը կազմում էր 27300 մարդ: Սակայն պետք է նկատենք որոշ անճշտություններ, որոնք տեղ են գտել այս ցուցակներում: Այդպես, օրինակ Իշխանի և Ագ Ղոյու հայաբնակ գյուղերը գտնվում էին ոչ թե Հաֆիքի, այլ Սեբաստիայի կազայի կազմում: Ինչպես նաև ուռճացված է ցույց տրված Հաղթ գյուղի հայ բնակչության թիվը, քանի որ, ըստ 1914թ. մարդահամարի, գյուղի հայ բնակչության թիվը կազմում էր 2600 մարդ և ոչ թե 3500, ինչպես նշված է այստեղ: Այսպիսով, մեր հաշվումների համաձայն՝ հայ բնակչության թիվը կազմում էր 24600 մարդ և ոչ թե 27300: Նույն տվյալի համաձայն կազայում բնակվում էին նաև 3570 կզլբաշներ, 11825 թուրքեր: Նույն աղբյուրը հավաստում է նաև, որ կազայում բնակվում էին նաև 3000 հույներ: Սակայն աղբյուրների բացակայության պատճառով հնարավոր չեղավ ճշտել նրանց բնակավայրերի անունները: Կազայում բնակվող էթնիկ տարրերից էին, ըստ Սապահ-Գյուլյանի, նաև քրդերն ու չերքեզները: Քրդերի թիվը հասնում էր 2800, իսկ չերքեզներինը 364 շնչի[107]: Փաստորեն ողջ կազայում 1914թ. դրությամբ բնակվում էր 46159 մարդ:

Այսպիսով, Հաֆիքի կազան Սեբաստիայի սանջակի ամենահայաշատ և կարևոր գավառակներից էր: Հայերն այս գավառակում ապրում էին ինչպես առանձին գյուղերում, այնպես էլ թուրքերի, չերքեզների, հույների և այլ ազգությունների հետ կողք կողքի և 20-րդ դարի սկզբին կազմում էին կազայի ընդհանուր բնակչության 53,3%, մինդեռ թուրքերը բնակչության 25,6% էին, կզլբաշները՝ 7,7%, հույները 6,5%, քրդերը 6,1%, չերքեզները 0,8%:

[107] Սապահ-Գյուլեան, նշվ.աշխ., նույն տեղում:

Հայերը այս կազայի հարուստ պատմամշակութային ժառանգության կրողներն էին, որոնք ապրում էին էթնիկ այնպիսի տարրերի հետ, ինչպիսիք էին՝ թուրքերը, կզլբաշները, հույները, քրդերը և չերքեզները:

Բ. ՁԱՌԱՅԻ ԳԱՎԱՌԱԿ

Ձառայի (Գոչկիրի) կազան կազմում էր Սեբաստիայի սանջակի արևելյան հատվածը: Վերջինիս հյուսիսային սահմանը Շաբին Կարահիսարի սանջակն էր, հարավում՝ Տիվրիկի, արևմուտքում Հաֆիքի կազաներն էին, արևելքում Երզրումի վիլայեթն էր: Կազան իր կենտրոնի՝ Ձառա գյուղաքաղաքի անունն էր կրում: Նրա թուրքական տարբերակը Գոչկիրի անվանումն էր:

Կազայի բնակիչներն էին հայերը, որոնք 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին կենտրոնացած էին հիմնականում Ձառա կենտրոնում և մի շարք գյուղերում, ինչպիսիք էին՝ Քեչեյուրդը, Ալաքիլիսեն, Կարաբողազը, Չայքուրդը, Կավակը և Միատունը: Սակայն, ինչպես և մյուս գավառակներում, հայ բնակչության մեծ մասը կենտրոնացած էր կազայի կենտրոնում:

Ձառա գյուղաքաղաքը գտնվում էր Ալիս գետի աջ ափին, դաշտավայրի վերջավորության վրա: Դեռ 19-րդ դարի սկզբին այստեղ բնակվում էր 300 տուն բնակիչ, որոնց մեծ մասը պատկանում էր հայերին[109]:

Նախքան 1895-1896թթ. կոտորածները Ձառան ուներ շուրջ 1000 տուն[110] բնակիչ, որոնց կեսից ավելին կազմում էին թուրքերը, մնացածը հայերը:

Թուրքերի գերակշռության առաջին պատճառն այն էր, որ գյուղաքաղաքի տիրակալ Հովսեփը թուրքացավ և իրեն ու տոհմին հանձնվեց փաշայություն՝ Ձառա Օղլու մականունով: Շուտով ուրիշները ևս կրոնափոխ եղան: Իսկ երկրորդ պատճառը՝ բազում թուրք գաղթականների ներհոսքն էր Ձառայի շրջակա գյուղերից:

Ուրախալի է, որ այս կենտրոնը 1895-1896թթ. համիդեական ջարդերի ժամանակ զերծ էր մնացել կոտորածներից: Դա կատարվել էր շնորհիվ տեղացի հայտնի Իսահակ բեյի[111]:

Արդեն 1914թ. հայերը կազմում էին 800 տուն կամ 6400 շունչ[112]:

Այս բազմամարդ լինելը պետք է բացատրել նաև Ձառայի նահիթի կենտրոն լինելու հանգամանքով: Ձառայի կենտրոնից դեպի արևելք,

---

[109] Աղեքսանդրեան Ա., նշվ.աշխ., էջ 365:
[110] ՀՀ ԱԱ, ֆ. 439, ց. 1, գ. 384, թ. 36:
[111] ՀՀ ԱԱ, ֆ. 439, ց. 1, գ. 384, թ. 290: Վերջինս իր ծիավորներով դուրս էր եկել թուրքերի դեմ և չէր թողել, որ նրանք մտնեն գյուղ:
[112] Գաբիկեան Կ., նշվ.աշխ., նույն տեղում, տես նաև Առաքել Պատրիկ, նշվ.աշխ., էջ 571:

Ալիս գետի աջ ափին էին գտնվում Ալաքիլիսե, Կարաբողազ, Չայքուրդ, Քարհատ, Միատուն, Քեչեյուրդ, Կավակ հայաբնակ գյուղերը:

Ալաքիլիսե գյուղը 19-րդ դարի վերջին ուներ բավականին ստվար հայ բնակչություն: 1878թ. դրությամբ հայերի թիվը գյուղում հասնում էր 663 շնչի, որոնք ունեին Ս. Մինաս անունով եկեղեցի, Նարեկյան վարժարան, ուր այդ ժամանակ հաճախում էին 150 աշակերտ[113]:

Իսկ 1895թ.՝ նախքան կոտորածները, գյուղը զուտ հայաբնակ էր և ուներ 120 տուն բնակչություն[114]: Բայց շուտով գյուղի ժողովրդագրական պատկերը փոխվեց սկսված համիդեական ջարդերի հետևանքով:

Այս կոտորածի հետևանքով հայ բնակչությունը զգալի կորուստներ կրեց, բայց, չնայած դրան, նախքան առաջին համաշխարհային պատերազմը հայերը գյուղում բացարձակ մեծամասնություն էին կազմում: 1914թ. նրանց թիվը հասնում էր 200 տան, 1600 շնչի, մինչ դեռ թուրքերի թիվը 1 տուն[115]:

Կարաբողազ հայաբնակ գյուղը 19-րդ դարի վերջին ուներ խայտաբղետ ժողովրդագրական կազմ: 1878թ. դրությամբ այնտեղ բնակվում էր 224 հայ, 40 թուրք, 25 քուրդ[116]: 20-րդ դարի առաջին քառորդին հայերը շարունակում էին մեծամասնություն կազմել այս գյուղում: 1914-1915թթ. վիճակագրության համաձայն գյուղը բաղկացած էր 462 շունչ հայերից և 104 շունչ թուրքերից[117]:

Զառայից դեպի արևելք՝ Շաբին Կարահիսար տանող ճանապարհի վրա էր գտնվում Քարհատ[118] զուտ հայաբնակ գյուղը: Նախքան մեծ եղեռնը այն ուներ 300 տուն, 2400 շունչ[119] հայ բնակչություն: Չայքուրդ գյուղը թուրքախառն էր: 20-րդ դարի սկզբին հայերի թիվը այստեղ հասնում էր 150 տան, 1200 շնչի[120]:

Քեչեյուրդ հայաբնակ գյուղը նույն ժամանակ ուներ 120 ընտանիք, 1100 հոգի հայ բնակչություն[121]: Համեմատաբար ավելի փոքր ծավալով հայ բնակչություն էին պարունակում Կավակ և Միատուն հայաբնակ գյուղերը: Կավակը 1914թ. ուներ 30 տուն՝ 240 անձ, Միատունը՝ 20 տուն՝ 160 շունչ[122] հայ ազգաբնակչություն:

---

[113] Սրվանձտեանց Գ., Թորոս Աղբար, մաս 1, Կ.Պոլիս, 1879, էջ 174:
[114] ՀՀ ԱԱ, ֆ. 439, ց. 1, գ. 472, թ. 1:
[115] Առաքել Պատրիկ, նշվ.աշխ., էջ 380, Գաբիկեան Կ., նշվ.աշխ., էջ 600:
[116] ՀՀ ԱԱ, ֆ. 476, ց. 1, գ. 488, թ. 17, տես նաև Սրվանձտեանց Գ., նշվ.աշխ., էջ 175:
[117] Kevorkian R.H., Paboudjian P.B., նշվ.աշխ., էջ 247:
[118] Գյուղի տարեցների վկայությամբ գյուղը հիմնվել էր 19-րդ դարի առաջին քառորդին Կարսից եկած գաղթականների կողմից (Առաքել Պ., նշվ.աշխ., էջ 378):
[119] Գաբիկեան Կ., նշվ.աշխ., նույն տեղում, Առաքել Պատրիկ, նշվ.աշխ., էջ 571:
[120] Տես նույն տեղում:
[121] Թէոդիկ, նշվ.աշխ., էջ 120, տես նույնը Kevorkian R.H., Paboudjian P.B., նշվ.աշխ., էջ 247:
[122] Գաբիկեան Կ., նշվ.աշխ., նույն տեղում:

Այսպիսով 1914-1915թթ. կազայի հայ բնակչությունը կազմում էր 13562 հոգի: Պետք է նկատենք, որ վերոհիշյալ ժամանակահատվածում կազայում բնակվող քրիստոնյա ազգություններից էին նաև հույները, որոնք 1914թ. կազմում էին շուրջ 6112 մարդ[123]: Նույն աղբյուրները վկայում են, որ կազայի մահմեդական բնակչության թիվը կազմում էր 47203 մարդ[124]: Կազայի մահմեդական բնակչության տարրերն էին թուրքերը և քրդերը: Սակայն այս տվյալը վերցված է թուրքական պաշտոնական վիճակագրությունից (սալնամե) և, մեր կարծիքով, չափազանցված է: Հայերի թվաքանակի համար նույն վիճակագրության մեջ ցույց է տրված 6056 շունչ, որը ինչպես տեսանք, չի համապատասխանում իրականությանը:

Այսպիսով, Զառայի գավառակը այս ժամանակահատվածում Սեբաստիայի գավառի արևելյան գավառակներից մեկն էր, ուր հայերը տեղաբաշխված էին հիմնականում համանուն կենտրոնում և Ալաքիլիսե, Կարաբողազ, Չայքուրդ, Քարհատ, Միատուն, Քեչեյուրդ, Կավակ գյուղերում: Կազայի էթնիկ տարրերն էին կազմում նաև հույները, թուրքերը և քրդերը:

Գ. ՏԻՎՐԻԿԻ ԳԱՎԱՌԱԿ

Տիվրիկի (Դիվրիկի) կազան 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին սահմանակից էր հյուսիսից Զառայի կազային, հարավից՝ Խարբերդի (Մամուրեթ-ուլ-Ազիզի)[125] վիլայեթին, արևմուտքից՝ Հաֆիքի կազային, արևելքից՝ Էրզրումի վիլայեթին:

Գավառակի կենտրոնը բարձր լեռներով շրջապատված, Ալիս գետի աջ ափին կառուցված Տիվրիկ քաղաքն էր[126]: 1882թ. «Մասիս» թերթի հաղորդած վիճակագրության համաձայն՝ քաղաքն ուներ 3500 տուն բնակչություն, որից 450-ը հայեր էին[127]: 1895թ. աղոթեն այնտեղ հաշվվում էր 500 տուն կամ 4000 շունչ հայ բնակչություն[128]: Հայությունը զբաղվում էր առևտրով, արհեստներով՝ երկաթագործությամբ, դարբնությամբ և այլն:

---

[123] Kemal H. Karpat, նշվ.աշխ., էջ 178, տես նաև Justin Mac Carthy, նշվ.աշխ., էջ 77:
[124] Տես նույն տեղում:
[125] ՀՀ ԳԱԱ ՀԱԻ ԱԲԱ, թղթապանակ 121/1, էջ 2:
[126] 855թ. Տևրիկ քաղաքը հիմնադրվել է պավլիկյան շարժման առաջնորդ Կարբեասի կողմից և դարձել շարժման կենտրոն: Հետագայում այն ենթարկվել է Սենեքերիմ Արծրունուն և միաժամանակ Սեբաստիայի էյալեթին: 1397թ. այն նվաճվել է սելջուկ-թուրքերի կողմից, բայց այդ ժամանակ քաղաքում գոյություն ուներ իշխանություն, որը մինչև 19-րդ դարի կեսերը գտնվում էր քուրդ դերեբեյների տիրապետության տակ:
[127] Մասիս, Կ.Պոլիս, 1882, թ. 3491, մայիսի 22:
[128] Դրօշակ, Թիֆլիս, 1895, դեկտեմբերի 15, N 21:

Թուրքերը զբաղեցնում էին քաղաքի հարավային և հարավարևմտյան մասերը[129], որոնք ավելի լայնարձակ և ծառավետ այգիներ ունեին:

Թեև 1895-1896թթ. կոտորածի հետևանքով Տիվրիկ քաղաքի հայ բնակչության թիվը նվազեց, և ժողովրդագրական պատկերը որոշ փոփոխություն կրեց, բայց 20-րդ դարի սկզբին հայերը բնական աճի շնորհիվ արդեն 1914թ. կազմեցին 1000 տուն և 7000 շունչ[130]:

Բացի այս խոշոր կենտրոնից, հայերը կազայում բնակվում էին Տիվրիկի շուրջը տարածված մոտ մեկ տասնյակ գյուղերում:

Կազայի հարավարևմտյան մասում՝ Լիկ գետի երկու ափերին էր տարածվում Օտուռ նահիեն: Այս նահիեի կենտրոնն էր Օտուռ հայաբնակ խոշոր գյուղը: Աղբյուրները, ինչպես այս գյուղի, այնպես էլ նահիեի այլ գյուղերի մասին վիճակագրական տեղեկություններ են հաղորդում հիմնականում նախապատերազմական շրջանի վերաբերյալ:

Բնակչության տեղաշարժերը ևս խիստ բնորոշ էին այս գյուղին: 1906թ. այստեղից գաղթած հայերի թիվը հասնում էր 90-100 անձի, որոնց մոտ կեսը ապրում էր Ամերիկայում, իսկ մնացածը ցրված էին Կ. Պոլսում, Եգիպտոսում, Բուլղարիայում[131]:

Այնուհանդերձ, 20-րդ դարի սկզբին գյուղը զուտ հայաբնակ էր և 1914թ. բաղկացած էր 102 տնից և ուներ 610 բնակիչ, որից 300-ը՝ արական, 310-ը՝ իգական սեռի[132]:

Նահիեի հայկական բնակավայր էր նաև Ս. Հակոբը, որն այդ անունը կրում էր համանուն վանքի անունից: Այն փոքրիկ գյուղ էր և 20-րդ դարի սկզբին ևս զուտ հայաբնակ էր: Սեբաստիայում լույս տեսնող «Հողդար» շաբաթաթերթը գյուղի համար 1914թ. վիճակով ցույց է տալիս 15-20 տուն[133] բնակիչ, իսկ Գ. Մուրադյանը՝ 12 տուն, 114 բնակիչ[134]: Իր աշխատության մեջ[135] բնակիչների նույն թվաքանակն է նշում նաև Թեոդիկը:

Նույն ժամանակաշրջանի հեղինակ Գաբիկյանի մոտ այդ թիվը հասնում է 70 տան, 560 անձի[136]: Սակայն մեր կարծիքով այդ թիվն այս փոքրիկ գյուղի համար չափազանցված էր: Պետք է ընդունել, որ գյուղն ունեցել է 12-20 տուն, շուրջ 114 բնակիչ, քանի որ արդեն 1919թ. կոտորածից փրկվածների թիվը գյուղում կազմում էր երկու մարդ[137],

---

[129] Մասիս, Կ.Պոլիս, 1882, թ. 3491, մայիսի 22:
[130] ՀՀ ԱԱ, ֆ. 439, ց. 1, գ. 500, թ. 1, տես նաև Գաբիկեան Կ., նշվ.աշխ., էջ 605:
[131] Մուրադեան Գ., Հայրենիքին ուխտաւորները, Կ.Պոլիս, 1920, էջ 23:
[132] Տես նույն տեղում, տե՛ս նաև Հողդար, Սեբաստիա, 1914, թիվ 3, «Տիվրիկի շրջակա հայ գյուղերը», էջ 4:
[133] Հողդար, նույն տեղում:
[134] Գաբիկեան Կ., նշվ. աշխ., էջ 605:
[135] Թէոդիկ, նույն տեղում, էջ 130:
[136] Տես նույն տեղում:
[137] Տես նույն տեղում:

նման փոքրիկ գյուղի համար բնակչության այդ թվաքանակը ճշմարտացի է, նամանավանդ, որ աղբյուրների հիմնական մասն այդ են վկայում:

Աշուշեն[138] գյուղը, գտնվելով Օտուռի նահիեեում, տեղակայված էր Օտուռ գյուղից հյուսիս-արևելք: Այն ուներ խայտաբղետ ժողովրդագրական կազմ: Ըստ մի վիճակագրության՝ 1914թ. բաղկացած էր 83 տնից, որից 7-ը կզլբաշ՝ 40, և 76 հայ տուն՝ 686 բնակիչներով[139]:

Գյուղի բնակիչների թվում էին նաև 10 տուն թուրքերը[140]: Փաստորեն, գյուղն ուներ 93 տուն, որից 76 տունը՝ հայ (686 շունչ), 10 տունը թուրք (յուրքանչյուր տան անձերի միջին քանակն ընդունելով 6 շունչ՝ 60 շունչ), 7-ը՝ կզլբաշ (40 շունչ): Գյուղը, այսպիսով, նախքան Մեծ եղեռնը ուներ 786 բնակիչ:

Նահիեի հաջորդ հայաբնակ գյուղը Բաղրամն էր[141], որը գտնվում էր Օտուռ գյուղից դեպի արևմուտք: Այն շրջակա գյուղերի մեջ ուներ ամենաբարձր դիրքը: Դեռ 19-րդ դարի վերջին Բաղրամ գյուղը զուտ հայաբնակ էր և 1895-1896թթ. դրությամբ բաղկացած էր 20 տուն ազգաբնակչությունից[142]: 1914թ. արդեն գյուղն ուներ 44 տուն, շուրջ 450 շունչ հայ բնակիչ, որից շուրջ 50-ը պանդուխտներ էին Կ.Պոլսում և Ամերիկայում[143]:

Նահիեի հայաբնակ գյուղերից էր Կյուրեսինը (Կուրասիս), որը գտնվում էր Օտուռ գյուղից հարավ: Այն 20-րդ դարի սկզբին իրենից ներկայացնում էր 140 տնից բաղկացած հայաբնակ գյուղ, որից 120 տունը հայեր էին, 20 տունը թուրքեր[144]: Հայերն ընդամենը 800 շունչ էին[145]:

Հայկական գյուղերի մի մասն էլ տեղավորված էր կազայի արևելյան և հյուսիսարևելյան մասերում: Հյուսիս-արևելքում տեղաբաշխված հայկական գյուղերը միավորված էին Կասմայի նահիեում: Վերջինիս կենտրոնը համանուն գյուղն էր: Այն Նորատունկյաց տոհմի ծննդավայրն էր, որոնք ժամանակին գաղթել էին Կ.Պոլիս: Ըստ Աղեքսանդրյանի՝ 20-րդ դարի սկզբին այս գյուղի բնակիչները հայեր ու թուրքեր էին: Հայերն իրենց թվաքանակով գերակշռում էին թուրքերին: Գյուղի ընդհանուր բնակիչների թիվը կազմում էր 700 մարդ, որից 500-ը՝

---

138 Վերջինս, հաստատված լինելով 1768թ. հարևան գյուղերի մեջ ամենահինն էր:
139 Մուրադեան Գ., նշվ. աշխ., էջ 43, տես նույնը Թէոդիկ, նշվ. աշխ., էջ 130:
140 Հողդար, Սեբաստիա, 1914, թիվ 3, էջ 4:
141 Այս գյուղի այլ անվանումը եղել է Ագրակ կամ Ագարակ, ուստի կարելի է ենթադրել, որ տարիների ընթացքում ընդլայնվելով դարձել է գյուղ:
142 Դրօշակ, Թիֆլիս, 1896, հունվարի 25, N 3, էջ 23-24, «Սեբաստիա և շրջականները»:
143 Մուրադեան Գ., նշվ. աշխ., էջ 33:
144 Թէոդիկ, նշվ.աշխ., էջ 130:
145 Տես նույն տեղում: Տես նաև Թեմուրճյան Կ., «Հայ ազգագրություն և բանահյուսություն», հ. Ա, էջ 138:

հայ և 200-ը՝ թուրք[146]: Սակայն, մեր կարծիքով, այս տվյալները վերաբերում են 19-րդ դարի վերջին, քանի որ արդեն 1914թ. հայերի թիվը հասավ 150 տան և 1200 անձի: Նրանք զբաղվում էին երկրագործությամբ, անասնապահությամբ, այգեգործությամբ[147]:

Այս նահիեի մեջ մտնող խոշոր հայաբնակ գյուղերից էր Եփրատի ափին ընկած Զիմառան (Զըմառան): Այս գյուղը նախքան 1895թ. կոտորածներն ուներ 80 տուն հայ բնակիչ[148]: Սակայն սկսված կոտորածի և հալածանքի հետևանքով եղան բնակչության տեղաշարժեր, և ժողովրդագրական պատկերը փոխվեց:

Հայ բնակչության նոր ներհոսքի հետևանքով արդեն 1914թ. գյուղն ուներ 150 տուն կամ 1200 շունչ հայ բնակիչ:

Նահիեի հայաբնակ հաջորդ գյուղը Խուռնավիլն էր[149]: Նշված ժամանակահատվածում գյուղը բաղկացած էր 130 տուն 1500 շունչ[150] բնակչությունից: Գյուղն ուներ նաև 240 անձ պանդուխտ, որոնք դեգերում էին Կ. Պոլսում, Եվրոպական տարբեր երկրներում[151]:

Նահիեի հայաբնակ գյուղերի շարքին էր դասվում նաև Բինկյանը (Բենկան): Այն 19-րդ դարի վերջին ուներ հայկական հոծ բնակչություն: Դա մենք արդեն նշեցինք Զիմառա գյուղի նկարագրության ժամանակ, երբ թուրք և քուրդ խուժանը 1895թ. հոկտեմբերին հարձակվել էր Զիմառա և Բինկյան գյուղերի վրա:

Այդ հարձակման հետևանքը եղավ այն, որ 1000 հոգի հայ բնակիչ Բինկյան գյուղից տեղափոխվեց Զիմառա: Թեպետ, այս տեղաշարժի հետևանքով գյուղի հայ բնակչությունը նվազեց, բայց դարասկզբին նրանց թիվը դեռ մեծ էր: 1914թ. նրանց թիվը կազմում էր 300 տուն, 2400 շունչ[152]:

Ինչպես նշեցինք, կազայի արևելյան հատվածում ևս տեղաբաշխված էին հայկական գյուղեր: Նրանք գտնվում էին Չալդա գետի աջ ափին: Վերոհիշյալ գյուղերի թվում էին Արմութաղը, Բալանկան (Բալանդա), Միրվանան (Մրվանա), Շիկիմը, Սինճանը:

Արմութաղը 1908թ. դրությամբ ուներ 76 տուն կամ 620 հայ բնակիչ, որոնցից 85-ը մինչև 1914թ. գաղթեց Կ.Պոլիս, Ամերիկա, Եգիպտոս[153]:

---

[146] Աղեքսանդրեան Ա., նշվ.աշխ., էջ 370:
[147] Թէոդիկ, նույն տեղում:
[148] ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի արխիվ, Լեոյի անձնական ֆոնդ 1, ց. 1, գ. 144, թ. 2 և թ. 25:
[149] Գյուղի անունը հավանաբար եկել է «Խուռնավեր կամ Խուռնավան» - բոլորովին ավերակ գյուղի իմաստով: Այդ ավերակները հելլենական կամ հռոմեական տիրապետության հետքեր էին, որը հաստատվում է մի քանի հունարեն գրերով ու արձանագրություններով: Այս գյուղը հիմնադրվել է Սենեքերիմ թագավորի ժամանակ:
[150] Մուրադեան Գ., նշվ. աշխ., էջ 46, տես նաև Թէոդիկ, նշվ. աշխ., էջ 131:
[151] Առաքել Պատրիկ, նշվ.աշխ., էջ 391:
[152] Գաբիկեան Կ., նշվ. աշխ., նույն տեղում:
[153] Մուրադեան Գ., նշվ. աշխ., էջ 35:

Հավանաբար, արտագաղթն ընդունել է ավելի մեծ չափեր, քանի որ 1914թ. գյուղում արդեն հաշվվում էր 32 տուն[154] (յուրաքանչյուր տան միջին անձերի քանակը ընդունելով 8 շունչ՝ ստացվում է 256 մարդ) բնակիչ:

Բալանկա գյուղի հայ բնակչությունն այստեղ էր հաստատվել դեռևս 18-րդ դարում, երբ Տիվրիկի կազայի այլ գյուղերից հողազուրկ ընտանիքները տեղափոխվել էին իբրև հողի վարձակալներ[155]: Մեծ եղեռնի նախօրյակին նրանց թիվը կազմում էր 30 տուն կամ 240 մարդ[156]:

Միրվանա գյուղում 20-րդ դարի սկզբին ապրում էին հայեր ու կզլբաշներ: Այն ժամանակ բաղկացած էր 54 տնից 290 բնակիչներով, որից 30 տունը կամ 210 հոգին հայեր[157] էին, 24 տունը (80 հոգի) կզլբաշներն էին և ազդեցիկ դիրք ունեին գյուղում[158]:

Շիկիմ (Շիկի) փոքրիկ գյուղը 20-րդ դարի սկզբին ուներ 20 տուն կամ 160 շունչ[159] հայ բնակիչ: Սինճանը, որը հայտնի էր Ս. Գևորգ անունով եկեղեցիով, 20-րդ դարի սկզբին ուներ 12 տուն կամ 100 շունչ բնակիչ[160]: Բացի վերոհիշյալներից գոյություն ունեին նաև այլ հայաբնակ և հայանուն գյուղեր, որոնց մասին տեղեկությունները սակավաթիվ են: Դրանցից են Արտեմետը, Բագրատունը: Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Արտեմենտն ուներ 15 տուն կամ 120 շունչ[161], իսկ Բագրատունը՝ 8 տուն կամ 75 շունչ[162] հայ բնակիչ:

Այսպիսով, մեր հաշվարկներով նախքան Մեծ եղեռնը Տիվրիկի կազայում հայ բնակչության թիվը կազմում էր 17121 մարդ:

Ինչպես տեսանք, առանձին գյուղերի օրինակով, գավառակում բացի հայերից ապրում էին նաև թուրքեր ու կզլբաշներ: Տիվրիկ քաղաքից ոչ այնքան հեռու էր Վանք անունով գյուղը, որը նախկինում հայկական էր, իսկ խնդրո ուսումնասիրության ժամանակամիջոցում բնակիչները կզլբաշներ էին: Նրանից ոչ այնքան հեռու էր գտնվում Արակա կոչվող գյուղը, որը 19-րդ դարի վերջին լիովին թուրքաբնակ էր: Պետք է նշենք նաև, որ կազայի բնակչության մեջ 19-րդ դարի վերջին բացի վերոհիշյալ էթնիկ տարրերից կային նաև քրդեր: 1881թ. դրությամբ, հայոց առաջնորդարանի հաղորդած վիճակագրության համաձայն նրանց

---

[154] Թէոդիկ, նշվ. աշխ., էջ 130:
[155] Մուրադեան Գ., նշվ. աշխ., էջ 41:
[156] Թեմուրճյան Կ., «Հայ ազգագրություն և բանահյուսություն», նույն տեղում, տես նաև Գաբիկեան Կ., նշվ. աշխ., նույն տեղում:
[157] Նույն տեղում, տե՛ս նաև Թէոդիկ, նշվ. աշխ., նույն տեղում, տե՛ս նաև Գաբիկեան Կ., նշվ. աշխ., նույն տեղում, տես նաև «Հայ ազգագրություն և բանահյուսություն», նույն տեղում (վերջին երկու աղբյուրում շնչերի քանակը հասնում էր 240-ի):
[158] Տես նույն տեղում, էջ 45:
[159] Գաբիկեան Կ., նույն տեղում:
[160] Թեմուրճյան Կ., «Հայ ազգագրություն և բանահյուսություն», նույն տեղում:
[161] Տես նույն տեղում:
[162] Տե՛ս նույն տեղում:

թիվը գավառակում կազմում էր 2000 հոգի[163]: Ըստ նույն վիճակագրության՝ թուրքերի և կզլբաշների ընդհանուր թիվը 43278 մարդ էր[164]:

Կարծում ենք, որ առաջնորդարանի հաղորդած տվյալները, որոնք վերաբերում են թուրքերին և կզլբաշներին, չի համապատասխանում իրականությանը, քանի որ, ըստ 1881-1882թթ. թուրքական պաշտոնական վիճակագրության, Տիվրիկի կազայի մահմեդական բնակչության թիվը հասնում էր 25178 մարդու, որից 12158-ը իգական, իսկ 13020-ը՝ արական սեռի ներկայացուցիչներ[165]:

Այս տվյալը կարելի է ճշմարիտ համարել, քանի որ արդեն 1914-1915թթ. կազայում բնակվում էին մոտ 30630 մահմեդականներ[166]: Իսկ հայերի թիվը, ինչպես արդեն նշեցինք, կազմում է մոտ 17121 մարդ:

Այսպիսով, 1914-1915թթ. ընթացքում Տիվրիկի կազան ուներ մոտ 47751 բնակիչ, որից 17121-ը կազմում էին հայերը, ովքեր այս գավառակի հիմնական էթնիկ տարրերից էին:

---

[163] Մասիս, Կ.Պոլիս, 1881, հոկտեմբերի 13, թ. 3015:

[164] Տե՛ս նույն տեղում:

[165] Kemal H Karpat . Ottoman population 1830-1914. Demographic and Social Characteristics. p.136

[166] Justin Mac Carthy. The Arab world, Turkey, and the Balkans 1878-1914. A Handbook of historical statistics. Boston, 1982, p.77

4. ՍԵԲԱՍՏԻԱՅԻ ԳԱՎԱՌԻ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՎ ՀԱՐԱՎԱՐԵՎՄՏՅԱՆ ԳԱՎԱՌԱԿՆԵՐ

ա. ԵՆԻԽԱՆԻ ԳԱՎԱՌԱԿ

Ենիխան (Նոր Խան, Յըլդըզելի) գավառակը, գտնվելով Սեբաստիայի գավառի մեջ, արևելքից սահմանակից էր Սեբաստիայի կազային, արևմուտքից՝ Անգորայի վիլայեթին, հյուսիսից՝ Թոխաթի սանջակին, հարավից՝ Թոնուսի կազային:

Կազայի մասին հայ և օտար սկզբնաղբյուրների հաղորդած տեղեկությունները շատ սակավաթիվ են:

Կազայի կենտրոնը համանուն գյուղաքաղաքն էր: Այստեղ էր կենտրոնացած գավառակի հայ բնակչության մեծագույն մասը:

1880թ. դրությամբ Ենիխան գյուղաքաղաքում բնակվում էր շուրջ 89 տուն, կամ 861 շունչ հայ բնակչություն[167]: Նրանց թիվը 20 տարվա ընթացքում գրեթե կրկնապատվել էր և 1900թ. կազմում էր 150 տուն, որոնք ունեին իրենց եկեղեցին Ս. Խաչ անունով և Սենեքերիմյան դպրոցը[168]:

Բնակչության այդպիսի աճը պետք է բացատրել Ենիխանի նահիեի կենտրոն լինելով: 20-րդ դարի սկզբին ևս այդ աճը շարունակվեց և մինչև 1915թ. հայերի թիվն արդեն հասել էր 300 տան և 2400 հոգու[169]:

Կազայի հայ բնակչությունը տեղաբաշխված էր նաև մի քանի հայ գյուղերում: Դրանցից էին Ալիս գետի արևմտյան ափին գտնվող Սարի Հասան և Պալախոր /Պալահոր/ գյուղերը:

Սարի Հասան գյուղը իր հայաշատությամբ Ենիխանից հետո երկրորդ կենտրոնն էր կազայում : Դեռևս 1875թ. նրանց թիվը հասնում էր 12 տան (100 անձ)[170]: Այս գյուղի հայ բնակչությունը ևս արագորեն աճեց և արդեն առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին կազմեց շուրջ 50 տուն (400 շունչ)[171]:

20-րդ դարի սկզբին հայեր էին բնակվում նաև Պալախոր, Սիվրի և Պորազըտ գյուղերում:

Նախքան մեծ եղեռնը Պալախորն ուներ 10 տուն (80 հայ բնակիչ), Սիվրի գյուղը՝ 8 տուն (64 հայ բնակիչ), Պորազըտը՝ 15 տուն (120 հայ շունչ)[172]:

---

[167] Մասիս, 1880, Կ.Պոլիս, նոյեմբերի 25:

[168] Էփրիկեան Ս., Նշվ.աշխ., Գիրք Բ., էջ 660:

[169] ՀՀ ԱԱ, ֆ. 476, ց. 1, գ. 144, թ. 11, տե՛ս նաև Գաբիկեան Կ., Նշվ.աշխ., էջ 602, տե՛ս նաև Առաքել Պատրիկ, Նշվ.աշխ., էջ 572:

[170] Նաթանեան Պ., Նշվ.աշխ., էջ 163-164:

[171] ՀՀ ԱԱ, ֆ. 476, ց. 1, գ. 144, թ. 11, տե՛ս նաև Գաբիկեան Կ., Նշվ.աշխ., նույն տեղում, նաև Առաքել Պատրիկ, Նշվ.աշխ., նույն տեղում:

[172] Գաբիկեան Կ., Նշվ.աշխ., նույն տեղում, տե՛ս նաև Առաքել Պատրիկ, Նշվ.աշխ., նույն տեղում:

Այսպիսով, 1914թ. Ենիխան կազայում բնակվող հայերի ընդհանուր թիվը հասնում էր 383 տան կամ 3064 հոգու:

Նույն ժամանակ կազայում բնակվող հույների թիվը 569 հոգի էր[173]:

Կազայում բնակվող էթնիկ տարրերից էին նաև քրդերն ու չերքեզները, որոնց թիվը համապատասխանաբար կազմում էր 145 և 876 հոգի[174]:

Այսպիսով, Ենիխանի կազան թեև աչքի չէր ընկնում իր բազմամարդությամբ, բայց այստեղ հայերը կազմում էին բնակչության 65,8%-ը, հույները՝ 12,2%-ը, քրդերը՝ 3,1%-ը, չերքեզները՝ 18,8%-ը:

բ. ԹՈՆՈՒՍԻ ԳԱՎԱՌԱԿ

Թոնուսի (Շար Գշլա, Շեհիր Գըշլա) կազան գտնվում էր Սեբաստիա քաղաքից դեպի հարավ-արևմուտք: Արևմուտքից այն սահմանակից էր Ազիզիեի, արևելքից՝ Սեբաստիայի, հյուսիսից՝ Ենիխան, հարավից Գյուրինի կազաներին:

Կազայի կենտրոնը Շար Գշլա գյուղաքաղաքն էր, որի հայ բնակչությունը վերաբնակեցված էր զանազան վայրերից, մանավանդ Կեսարիայից[175]: Նրանց թիվը կազմում էր 37 տուն կամ 300 բնակիչ[176]:

Կազայի կազմում գտնվող բազմաթիվ գյուղերից շուրջ երկու տասնյակում բնակվում էին հայեր: Այդ գյուղերի մի մասը հայաբնակ էր, մյուս մասն ուներ խառը ազգային կազմ:

Վարչական ամենամեծ հայկական կենտրոնը Կեմերեկ կամ Կամարակ գյուղաքաղաքն էր, որը նաև համանուն նահիեի կենտրոնն էր[177]: Արդեն 1880թ. Կեմերեկն ուներ 6650 բնակիչ, որից 4990-ը՝ հայ, 1660-ը թուրք[178]:

Այստեղի հոծ հայությունը զբաղվում էր երկրագործությամբ, ոչխարաբուծությամբ, գորգագործությամբ, ջուլհակությամբ, ներկարարությամբ, կաշեգործությամբ, առևտրով և այլն[179]:

---

[173] Justin Mac Carthy, նշվ.աշխ., էջ 77, տես նույնը Kemal H. Karpat, նշվ.աշխ., էջ 178:

[174] Սապահ-Գյուլեան, նշվ.աշխ., նույն տեղում:

[175] Թէոդիկ, նշվ. աշխ., էջ 123:

[176] «Հայ ազգագրություն և բանահյուսություն», նույն տեղում:

[177] Կեմերեկը հիմնադրվել է 15-րդ դարի սկզբներին հունական գյուղի ավերակների վրա, Կիլիկիայից եկած 20 տուն հայ գաղթականների կողմից (Էփրիկեան Ս., նշվ.աշխ., էջ 387): Հետագայում Գյուրինից, Հաճնից, Խարբերդից այլ բնակիչներ ևս տեղափոխվել են այստեղ: Մինչև 1768թ. Կեմերեկը զուտ հայ բնակչություն ունեցող գյուղ էր և միայն այդ թվականին թուրքական կառավարությունը այստեղ է բերել և բնակեցրել թուրքերին (Առաքել Պատրիկ, նշվ.աշխ., էջ 427):

[178] Էփրիկեան Ս., նշվ.աշխ., էջ 387:

[179] Ալպոյաճեան Ա., Պատմութիւն հայ Կեսարիոյ, Գահիրէ, 1937, հ. Ա, էջ 879: Այս գյուղաքաղաքի հայ ազգաբնակչությունը միշտ աչքի է ընկել իր հերոսությամբ և

Կեմերեկցիները 1895թ. պայքարեցին թուրք խուժանի դեմ, և դրա շնորհիվ քաղաքը զերծ մնաց կոտորածներից և շարունակեց բարգավաճ վիճակում մնալ մինչև 1915թ. Մեծ եղեռնը[180]:

1914թ. Կեմերեկը բաղկացած էր 1252 տնից, որից 902-ը (7200 շունչ) հայ և 350-ը թուրք[181]: Հետաքրքիր է, որ թուրքերը հասկանում և խոսում էին հայերեն. այնպես որ Կեմերեկը[182] ընդհանուր առմամբ այցելուների վրա հայկական քաղաքի տպավորություն էր թողնում:

Վերոհիշյալ նահիեի մեջ էին մտնում Լիսանլու, Չեփնի, Պուրհան, Տենտիլ, Թեքմեն, Կարագյոլ, Թոփաճ հայաբնակ գյուղերը:

Լիսանլու գյուղը, որը գտնվում էր Ալիս գետի հյուսիսում՝ Սեբաստիայից Կեսարիա տանող ճանապարհի մեջտեղում, ուներ հայ և թուրք բնակչություն: Տարբեր հեղինակներ տարբեր տեղեկություններ են հաղորդում 20-րդ դարի սկզբին գյուղի բնակչության թվաքանակի մասին:

Նրանցից Ս.Էփրիկյանը, հայերի համար ցույց է տալիս 200 տուն կամ 1200 բնակիչ[183]: 20-րդ դարի սկզբի մի այլ հեղինակ՝ Առաքել Պատրիկը, նշում է, որ 1914թ. գյուղն ուներ 330 տուն բնակչություն, որից 30 տունը թուրքեր, մնացածը հայեր էին[184]: Եթե յուրաքանչյուր տան համար շնչերի միջին քանակն ընդունենք 8 շունչ, ապա ստացվում է 2400 մարդ:

«Բյուզանդիոն» թերթը վկայում է, որ նույն ժամանակ գյուղի հայ բնակչության թիվը հասնում էր 217 հայ տան, այն է 1450 անձի[185]: Թերթը ևս թուրքերի թիվը հասցնում է 30 տան: Կ.Գաբիկյանը նույն ժամանակի համար գյուղի հայ բնակչության թիվը ևս հաշվում է 300 տուն կամ 2400 անձ[186]:

Այստեղ մեզ վստահություն են ներշնչում Առաքել Պատրիկի հաղորդած տվյալները, քանի որ հեղինակն այս տեղեկությունները քաղել էր բնիկ Լիսանլուցի Սողոմոն Թեմիրճյանի հուշագրությունից[187]: Փաստորեն ճիշտ պետք է համարել նաև Գաբիկյանի հաղորդած տվյալները: Այսպիսով, 1914թ. Լիսանլու գյուղն ուներ 300 տուն, (2400 անձ հայ) և 30 տուն թուրք բնակչություն:

Հաջորդ խոշոր հայաբնակ գյուղն այս նահիեում Կարագյոլն է: Վերջինս ևս գտնվում էր Սեբաստիա Կեսարիա ճանապարհի վրա և

սխրանքներով: Դեռևս 1828թ. նրանք ընդդիմացել են թուրք Ասետ փաշայի Կեմերեկը բնաջնջելու փորձերին:

[180] Տես նույն տեղում:

[181] ՀՀ ԱԱ, ֆ. 476, ց. 1, գ. 712, թ. 42, տես նույնը Բյուզանդիոն, Կ. Պոլիս, 1914, փետրվար, տես նաև Հնչակ, 1935, N 9, տես նաև Ալպոյաճեան Ա., նշվ.աշխ., էջ 878, տես նաև Գաբիկեան Կ.,նշվ.աշխ., էջ 602:

[182] Կեմերեկն ուներ իր ագարակները Յալիալ, Ղարաղոլ, Չբուք, Էքտիճի, Գարաթաղ, Գզելճաղշլա, Քոթյուտերե, Ղլըճ-թաղ, Հորոխ:

[183] Էփրիկեան Ս., նշվ.աշխ., էջ 388:

[184] Առաքել Պատրիկ, նշվ.աշխ., էջ 415:

[185] Բյուզանդիոն, Կ. Պոլիս, 1914, փետրվար:

[186] Գաբիկեան Կ., նշվ.աշխ., նույն տեղում:

[187] Առաքել Պատրիկ, նշվ.աշխ., էջ 415:

1914թ. ուներ 280 տուն, 2040 հոգի հայ բնակչություն[188]: Գյուղը հայաբնակ էր:

Չեփնին գտնվում էր Ալիս գետի հյուսիսային ափին: Վերջինս այս ժամանակ թուրքախառը գյուղ էր: Հայկական աղբյուրները հակասական տվյալներ են հաղորդում գյուղի բնակչության մասին: Այդպես, օրինակ Ս.Էփրիկյանի և Առաքել Պատրիկի մոտ հայ բնակչության թիվը հասնում է 150-160 տան, 1000 անձի[189]: Այլ աղբյուրներ այդ թիվը հաշվում են 1350-1900 մարդ[190]: Կ.Գաբիկյանը այդ թիվը համարում է 400 տուն (3200 մարդ)[191], որը մեր կարծիքով ճշմարիտ է:

Մենք այս գյուղի հայ բնակչության համար ավելի հակված ենք կարծելու, որ ճշմարտացի է վերջին հեղինակը, որը պնդում էր, որ գյուղի հայ բնակչությունը 20-րդ դարի սկզբին կազմում էր 400 տուն (3200 մարդ), քանի որ յուրաքանչյուր տան համար ստացվում է, որ միջին հաշվարկով բնակվում էր մոտ 8 մարդ, որը շատ հավանական է:

Պուրհան գյուղը ևս այս ժամանակահատվածում զուտ հայաբնակ էր: Այս գյուղի վերաբերյալ տարբեր տվյալներ են հաղորդում 20-րդ դարի սկզբի աղբյուրները:

Նրանցից 1900-ական թթ. համար Ս.Էփրիկյանը հաղորդում է, որ գյուղում տների թիվը հասնում էր 105-ի, իսկ մարդկանց թիվը 600-ի[192]: Ա.Աղեքսանդրյանը 1911թ. համար ցույց է տալիս 170 տուն[193]: Էփրիկյանի տվյալը, մեր կարծիքով, կասկածելի է, քանի որ յուրաքանչյուր տան շնչերի միջին թիվը նշված է շուրջ 6 մարդ:

1914թ համար Առաքել Պատրիկը հաղորդում է 250 տուն տվյալը, որոնք ունեին 1 լուսավորչական եկեղեցի և 1 ժողովարան բողոքականների համար[194]: Նույն ժամանակահատվածի համար այլ աղբյուր վկայում է, որ գյուղում բնակվում էր 1016 հայ[195]:

Մենք ևս ընդունում ենք, որ գյուղը 1914թ. ուներ 250 տուն, և եթե յուրաքանչյուր տան միջին անձերի թիվը ընդունենք 8 մարդ, ապա շնչերի թիվը հասնում է 2000-ի:

---

[188] Kevorkian R.H., Paboudjian P.B., նշվ.աշխ., էջ 240, տես նույնը «Հայ ազգագրություն և բանահյուսություն», հ. Ա, նույն տեղում, տես նաև Բյուզանդիոն, Կ. Պոլիս, 1914, փետրվար:

[189] Առաքել Պատրիկ, նշվ.աշխ., էջ 419, տես նույնի մասին Էփրիկյան Ս., նշվ.աշխ., էջ 387:

[190] Kevorkian R.H., Paboudjian P.B., նշվ աշխ., նույն տեղում, տես նույնը «Հայ ազգագրություն և բանահյուսություն», նույն տեղում:

[191] Գաբիկեան Կ., նշվ.աշխ., էջ 601:

[192] Էփրիկեան Ս., նշվ.աշխ., նույն տեղում:

[193] Աղեքսանդրեան Ա., նշվ.աշխ., էջ 377:

[194] Առաքել Պատրիկ, նշվ.աշխ., էջ 419, տես նաև ՀՀ ԱԱ, ֆ. 439, ց. 1, գ. 510, թ. 1:

[195] Kevorkian R.H., Paboudjian P.B., նշվ աշխ., էջ 240:

Տենտիլ[196] (Տանդել) զուտ հայաբնակ գյուղը 1903-1904թթ. ուներ 200 տուն 1300 շունչ[197] հայ բնակիչ: 1914թ. արդեն, ըստ որոշ աղբյուրների այն ուներ 250 տուն 1989 բնակիչ[198]:

Հաշվի առնելով դարասկզբի նախորդ տվյալները և բնական աճը, պետք է համարենք, որ այս տվյալը համապատասխանում է իրականությանը:

Թեքմեն գյուղը գտնվում էր Ալիս գետի հյուսիսային մասում: Այն զուտ հայաբնակ էր և հայախոս: 1903թ. դրությամբ ուներ 60 տուն (400 շունչ)[199] բնակիչ:

1911թ., ըստ Աղեքսանդրյանի հաղորդած տվյալի, գյուղում ապրում էր 130 տուն հայ բնակչություն[200]:

Նախքան Մեծ եղեռնը գյուղի բնակչության թվաքանակի մասին աղբյուրների տեղեկությունները բավական տարբեր են: Այսպես օրինակ, Առաքել Պատրիկը ցույց է տալիս 100[201], Թեոդիկը 124 տուն[202], իսկ մեկ այլ վիճակագրություն 819 շունչ հայ[203]: Կ.Գաբիկյանը գյուղի համար ներկայացնում էր 200 տուն 1600 բնակիչ[204]:

Փաստորեն 1914թ. վիճակով գյուղի բնակչության համար աղբյուրները ցույց են տալիս 90-120 տուն 600-819 հոգի:

Մենք ևս համակարծիք ենք, որ գյուղը նախքան Մեծ եղեռնը ունեցել է 100-120 տուն, 600-800 շունչ հայ բնակչություն:

Թուփաճ զուտ հայաբնակ գյուղը նույն ժամանակամիջոցում ուներ 100 տուն 600 շունչ բնակչություն[205]: Շար Գշլայի նահիեի մեջ էին մտնում Յափալթուն, Գայափունար հայակական գյուղերը:

Յափալթուն գյուղը խնդրո ուսումնասիրության ժամանակահատվածում ուներ հայ և թուրք բնակչություն: Ընդհանուր բնակչության թիվը 200 տուն (1386 շունչ) էր, որից 150 տուն կամ 1086 շունչը հայ, 50 տուն, 386 շունչ թուրք[206]: Գյուղի այս հոծ հայությունը

---

[196] Մինչև 19-րդ դարը գյուղը պատկանում էր Կեսարիայի կուսակալությանը (Ալպոյաճեան Ա. Պատմութիւն հայ Կեսարիոյ, Գահիրե, 1937, հ. Ա, էջ 879):
[197] Էփրիկեան Ս., նշվ.աշխ., նույն տեղում:
[198] Թեոդիկ, նշվ.աշխ., էջ 124, նաև Kevorkian R.H., Paboudjian P.B., նշվ.աշխ., նույն տեղում:
[199] Էփրիկեան Ս., նշվ.աշխ., էջ 387:
[200] Աղեքսանդրեան Ա., նշվ.աշխ., էջ 377:
[201] Առաքել Պատրիկ, նշվ.աշխ., էջ 420:
[202] Թեոդիկ, նշվ.աշխ., էջ 124:
[203] Kevorkian R.H., Paboudjian P.B., նշվ.աշխ., նույն տեղում:
[204] Գաբիկեան Կ., նշվ.աշխ., էջ 603:
[205] Առաքել Պատրիկ, նշվ.աշխ., էջ 430, Kevorkian R.H., Paboudjian P.B., նշվ.աշխ., նույն տեղում, տես նաև Թեոդիկ, նշվ.աշխ., նույն տեղում, Գաբիկեան Կ., նշվ.աշխ. նույն տեղում (Հեղինակի մոտ շնչերի քանակը հասնում էր 800-ի):
[206] Թեոդիկ, նշվ.աշխ., էջ 124, Առաքել Պատրիկ, նշվ.աշխ., էջ 412, տես նաև Աղեքսանդրեան Ա., նշվ.աշխ., նույն տեղում, Էփրիկեան Ս., նշվ.աշխ., էջ 388, տես նույնը Kevorkian R.H., Paboudjian P.B., նշվ.աշխ., նույն տեղում:

ամբողջապես լուսավորչականներ էր, ուներ դպրոց և եկեղեցի, զբաղվում էր հողագործությամբ:

Այս գյուղը ևս 20-րդ դարի սկզբին ուներ հայ և թուրք բնակչություն: 1903թ. գյուղի հայ բնակչության թիվը հասնում էր 70 տան 400 անձի[207], իսկ արդեն նախքան առաջին համաշխարհային պատերազմը նրանց թիվն աճեց մինչև 90 տան և 700 անձի[208]:

Նահիեների կազմում գտնվող հայկական գյուղերի մեծ մասը տեղադրված էր Ալիս գետի երկու ափերին: Արևմտյան ափին ապաստանած գյուղերից էին Ալաքիլիսե և Փաշա գյուղերը:

Ալաքիլիսե գյուղի մասին խոսելիս պետք է նշենք, որ համանման գյուղ կար նաև Սեբաստիայի սանջակի Ջառա կազայի կազմում: Այս գյուղն Աղեքսանդրյանի տվյալներով 1911թ. ուներ 30 տուն զուտ հայ ազգաբնակչություն[209]: 1914թ. արդեն գյուղում կար 40 տուն (275 անձ) հայ բնակչություն[210]:

Փաշա գյուղը ուներ 53 տուն 383 շունչ հայ բնակիչ[211]:

Թոնուսի և Քարաջինարի լեռնային զանգվածների միջև է ընկած հայկական գյուղերի մյուս խումբը, որը բնակեցված էր բացառապես հայերով:

Այդ գյուղերից էր Մաղարան կամ Ղազի-Մաղարան: Գյուղը, հավանաբար, 19-րդ դարի 70-ական թթ. ունեցել է 170 հայ տուն:

Ամերիկաբնակ Կարապետ Մահտեսյանն իր ծննդավայրի մասին նշում է. «Իմ նախահայրերս վախէն հալածական, եկած այդ գիւղը հիմնած են: Գիւղը դպրոց ունեցած է 1879 թվականէն ի ւէր: Ղազու Մաղարա գյուղը շինուած էր երկու լեռներու կողքերուն վրայ, այնպէս որ մէկուն դուռը կը բացուէր մյուսին տանիքին վրայ: Մեծերէ լսածիս համաձայն գյուղը կըբաղկանար 170 ընտանիքէ...»[212]:

19-րդ դարի վերջին ի թիվս այլ բնակավայրերի, գյուղի ժողովրդագրական պատկերը խաթարվեց և այդ պատճառով 1914-1915թթ. միջոցում Ղազի-Մաղարան ուներ ընդամենը 150 տուն (1200 շունչ) բնակչություն[213]:

Մյուսը Ղանթարոս գյուղն էր, ուր ապրում էր 70-80 տուն ,640 շունչ հայ բնակիչ[214]:

Ղանթարոսից հարավ էր ընկած Պատրին Քյոյ կամ Պատրենոս հայաբնակ գյուղը, որը հայտնի է նաև Չևիրնե /Չնիրմե/ անունով և

---

[207] Էփրիկեան Ս., նշվ.աշխ., էջ 388:
[208] ՀՀ ԱԱ, ֆ. 476, ց. 1, գ. 144, թ. 11:
[209] Աղեքսանդրեան Ա., նշվ.աշխ., նույն տեղում:
[210] Թէոդիկ, նշվ.աշխ., նույն տեղում, տես նաև Kevorkian R.H., Paboudjian P.B., նշվ.աշխ., նույն տեղում:
[211] Տես նույն տեղում:
[212] Առաքել Պատրիկ, նշվ.աշխ., էջ 379:
[213] ՀՀ ԱԱ, ֆ. 476, ց. 1, գ. 144, թ. 15, տես նաև Գաբիկեան Կ., նշվ.աշխ., էջ 603:
[214] Տես նույն տեղում, տես նաև Թէոդիկ, նշվ.աշխ., էջ 124:

նախքան առաջին համաշխարհային պատերազմը բնակեցված էր 845 հայերով[215]:

Այս գյուղերից վերջին զուտ հայաբնակ գյուղը Կուրտլու Կայան էր 40 տուն կամ 300 անձ հայ բնակչությամբ[216]:

Կազայում գոյություն ունեին նաև խառը բնակչությամբ այլ գյուղեր:

Դրանցից Թեմեճյուկում հաշվվում էր 80 տուն (640 շունչ) հայ բնակիչ, Պավրոզը 45 տուն (325 բնակիչ), Փաթրին-գյուղը 35 տուն (280 շունչ), Գարասարը 45 տուն (325 անձ), Սեքանքը կամ Սոհքանքը 60 տուն (400 անձ), Գարահաճըլը 16 տուն (115 անձ), Սարը Օղլանը 70 տուն (560 շունչ):

Այսպիսով, Թոնուսի կազան խնդրո ուսումնասիրության ժամանակամիջոցում իրենից ներկայացնում էր հայաշատ մի բնակավայր, ուր հայերի թիվը 1913-1914թթ. հասնում էր 27217 մարդու:

Նույն ժամանակ մահմեդականներից կզլբաշները էլիճե նահիեում ունեին 38 գյուղ[217]:

Թոնուսի կազայում ապրող ժողովուրդների մեջ պետք է հիշատակել նաև չեչեններին:

1866թ. Օսմանյան կայսրություն տեղափոխված 4989 չեչենական ընտանիքներից 1200-ը բնակեցվեցին Բաս-ուլ-Այնում: Մնացածը բնակեցվեցին կայսրության այլ հատվածներում, այդ թվում նաև Սեբաստիայի սանջակում: 47 ընտանիքների մեծ մասը բնակեցվեց Շարկշլայ (Թոնուս) և Ազիզիե կազաներում[218]:

Սակայն մահմեդական տարրի մեջ ամենամեծ թիվը կազմում էին թուրքերը: Ինչպես արդեն տեսանք որոշ գյուղերի օրինակով, նրանք բնակվում էին ինչպես հայերի հետ, այնպես էլ առանձին գյուղերում: Այդպես, օրինակ, Գավագ գյուղախումբը բաղկացած էր 35 թուրք և կզլբաշ գյուղերից[219]:

Այսպիսով, Թոնուսի կազայում բնակվում էին նաև մահմեդական տարրեր, որոնց հավաքական թիվը 1881-1882 թթ. դրությամբ հասնում էր 30919, իսկ 1914թ. 40868 շնչի[220]:

Գ. ԿԱՆԳԱԼԻ ԳԱՎԱՌԱԿ

---

[215] Kevorkian R.H., Paboudjian P.B., նշվ.աշխ., էջ 241:

[216] Տես նույն տեղում, տես նաև «Հայ ազգագրություն և բանահյուսություն», հ. Ա, էջ 138:

[217] Թեոդիկ, նշվ.աշխ., նույն տեղում:

[218] Авакян А., Черкесский фактор в Османской империи и Турции, Ереван, 2001, стр. 126.

[219] Թեոդիկ, նշվ.աշխ., նույն տեղում:

[220] Kemal H. Karpat. նշվ.աշխ., էջ 136, էջ 178:

Կանգալի կազան 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին գտնվում էր Սեբաստիայի սանջակի մեջ: Այն արևմուտքից սահմանակից էր Թոնուսի, արևելքից՝ Տիվրիկի, հյուսիսից՝ Սեբաստիայի կազաներին: Նրա վարչական կենտրոնը Կանգալ (Ղանղալ) քաղաքն էր: Հայերը կազմում էին բնակչության մեծամասնությունը:

20-րդ դարի առաջին քառորդին, ըստ Ա.Աղեքսանդրյանի և Կ.Գաբիկյանի հաղորդած տվյալների այս քաղաքն ուներ 250 տուն (2000 շունչ) հայ բնակչություն իրենց եկեղեցիով և վարժարանով[221]: Այս տվյալն ընդունելի է նաև մեզ համար, քանի որ յուրաքանչյուր տան համար շնչերի միջին թիվը ընդունված է 8 մարդ:

Հայկական գյուղերը տեղավորված էին կենտրոնից դեպի հյուսիս և հարավ- արևմուտք: Հյուսիսային հատվածի հայկական գյուղերի թվում էին Ուլաշը, Գոմսուռը, Փաթռին:

Կազայի հայաշատ գյուղերի մեջ առանձնանում էր Ուլաշ գյուղը: Վերջինս գտնվում էր Սեբաստիա-Բաղդադ տանող ճանապարհի վրա, դաշտավայրի մեջ, Ուլաշ լճի մոտ: Գյուղի մոտ էր գտնվում Թեճիր անտառապատ լեռը, որի ստորոտին բնակվում էին քրդեր[222]:

Ուլաշը 19-րդ դարի առաջին կեսին զուտ հայաբնակ էր: 1835թ. գյուղ ալցելած եվրոպացի ճանապարհորդ Ջեյմս Բրանտը վկայում էր, որ գյուղը զուտ հայաբնակ էր բաղկացած 60 ընտանիքներից[223]:

XIX դարավերջին՝ 1886թ. փետրվարի 15-ին, Կ.Պոլսի պատրիարքարանին ուղղված գրության մեջ ասվում է, թե «այս զուտ հայաբնակ գյուղը 150 տնից ավելի բնակչություն ունի»[224]:

Կ. Գաբիկյանը 20-րդ դարի առաջին քսանամյակին գյուղում հաշվում է 400 տուն կամ 3200 անձ[225]:

1914-1915թթ. համար Թեոդիկը վկայում է, որ գյուղն ուներ 220 տուն (1800 շունչ) զուտ հայ բնակչություն[226]:

Եթե հաշվի առնենք, որ 1835-1886թթ. ընթացքում բնակչությունն աճել էր 90 տնով, ապա մեզ ավելի վստահություն է ներշնչում, որ 1886թ. մինչև 1915թ. բնակչությունը աճած լինի 70 տնով, քան թե 250 տնով, մանավանդ այն պարագայում, որ 1895-1896թթ. տեղի էին ունեցել համիդեական ջարդերը:

Այսպիսով, 1835թ. մինչև 1915թ. գյուղի բնակչությունը աճել էր շուրջ 4 անգամ:

---

[221] Աղեքսանդրեան Ա., նշվ. աշխ., էջ 376, տե՛ս նաև Գաբիկեան Կ., նշվ. աշխ., էջ 604:
[222] ՀՀ ԱԱ, ֆ.193, ց. 1, գ. 413, թ. 8:
[223] Տե՛ս նույն տեղում:
[224] Նույն տեղում, թ. 10:
[225] Գաբիկեան Կ., նշվ. աշխ., նույն տեղում:
[226] Թեոդիկ, նշվ. աշխ., էջ 121:

Հյուսիսային հատվածում ընկած գյուղերի մասին տեղեկությունները շատ սակավաթիվ են: Հայտնի է միայն, որ ըստ որոշ աղբյուրների Գոմսուռն ուներ 50 տուն (400 շունչ), Մաղարան՝ 300 տուն (2400 շունչ), Փաթռին՝ 200 տուն (1600 շունչ) հայ բնակչություն[227]:

Կազայի հարավային սահմանի վրա է գտնվում Մանջիլիկ գյուղը: 1879թ. «Մասիս» թերթի թղթակից Նազարեթ Իսթամպոլյանը հետևյալ տեղեկություններն է հաղորդել գյուղի մասին. «Մանճլըգը խիստ ընդարձակ և բազմահայ վիճակմընէ: Ժողովուրդը հավատարիմ, գործունեա, հաղթանդամ, քաջառողջ, ազգասէր և կրոնասէրէ...»[228]:

Այս բազմահայ գյուղի մեջ 1895թ. համիդեական կոտորածի հետևանքով զոհ էր գնացել հայ բնակչության կեսը[229]: Այդուհանդերձ, 20-րդ դարի սկզբին հայերը շարունակում էին մեծ թիվ կազմել այստեղ: Գյուղը 1914թ. ուներ 300 տուն (2400 շունչ)[230] բնակչություն:

Հարավային հատվածում տեղ գտած գյուղերից էին Կարա-Օրենը, որը նախքան եղեռնն ուներ 50 տուն (400 շունչ) և Յարահիսարը՝ (200 տուն կամ 1600 շունչ հայ բնակչությամբ)[231]:

Կազայի կազմում գտնվող 14 թուրքական, քրդական և կզլբաշական գյուղերից միայն հյուսիս-արևմուտքում ընկած Պոզ-Արմուտը 1914թ. ուներ 30 տուն կամ 240 շունչ հայ բնակչություն[232]:

Այսպիսով 1914-1915թթ. Կանգալի կազայում բնակվում էր շուրջ 12840 շունչ հայություն:

1911-1912թթ. թուրքական համընդհանուր վիճակագրությունում, որն իր աշխատության մեջ վկայակոչում է թուրք հեղինակ Ք. Քարփաթը, հայերի թիվը ցույց է տրված ընդամենը 3111 մարդ[233]:

Սակայն, այն հեռու է ճշմարտացի լինելուց:

---

[227] Գաբիկեան Կ., նշվ. աշխ., նույն տեղում, տե՛ս նաև Առաքել Պատրիկ, նշվ. աշխ., նույն տեղում:
[228] Մասիս, Կ. Պոլիս, 1879, նոյեմբերի 10:
[229] ՀՀ ԱԱ, ֆ. 439, ց. 1, գ. 472, թ. 3:
[230] Գաբիկեան Կ., նշվ. աշխ., նույն տեղում, տե՛ս նաև Առաքել Պատրիկ, նշվ. աշխ., նույն տեղում:
[231] Տե՛ս նույն տեղում:
[232] ՀՀ ԱԱ, ֆ. 476, ց. 1, գ. 144, թ. 11:
[233] Kemal H. Kharpat, նշվ. աշխ., նույն տեղում, Justin Mac Carthy, նշվ.աշխ., նույն տեղում:

5.ՍԵԲԱՍՏԻԱՅԻ ԳԱՎԱՌԻ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԳԱՎԱՌԱԿՆԵՐ

ա. ԱԶԻԶԻԵԻ ԳԱՎԱՌԱԿ

Ազիզիեի կազան Սեբաստիայի գավառի հարավային գավառակներից մեկն էր, որը արևելքից սահմանակից էր Թոնուսի կազային, արևմուտքից՝ Կեսարիայի սանջակին, հյուսիսից՝ Անկարայի վիլայեթին, հարավից՝ Գյուրինի կազային:

Կազայի կենտրոնը Ազիզիե քաղաքն էր, որը երբեմն կոչվել էր նաև Բունար Պաշը[234]:

Նախքան թուրքերի տիրապետությունը այստեղ եղել է ստվար հայ բնակչություն , որոնք ևս տեղափոխվել էին Վասպուրականից: Թուրքերի կողմից իրականացված զանգվածային կոտորածների հետևանքով այստեղ հայերի թիվը խիստ նվազեց[235]: Միայն 19-րդ դարում հայերը այստեղ փոքրիկ գաղութ կազմեցին: 1884թ. բնակվում էր 75 տուն հայ բնակիչ, որոնք Ազիզիե էին տեղափոխվել Կեսարիայից, Հաճնից, Ակնից և Գյուրինի գավառակներից[236]:

20-րդ դարի սկզբին՝ 1914-1915թթ. միջոցում Ազիզիեն արդեն ուներ 1000 տուն բնակչություն, որից միայն 100-120 տունը 800 շունչը[237] կազմում էին հայերը:

Ազիզիե կազայի մյուս խոշոր հայաբնակ կենտրոնը Ագարակ (Ագրակ) գյուղն էր, որի աղավաղված ձևը էքրեքն է[238]: Այն կենտրոնն էր 60-70-ի չափ գյուղերի, որոնք կոչվում էին Բոզուքի գյուղեր[239]: Ագարակը նախքան Մեծ եղեռնն ուներ 350 տուն (2700-2800 շունչ) հայ բնակչություն[240]:

Կազայի մյուս խոշոր կենտրոնը Բյունյուսն Համիդ կամ Սարմուսակլը գյուղն էր, որը նույն ժամանակ ուներ 250 տուն (2000 շունչ) հայ բնակիչ: Կազայի հայաբնակ գյուղերից պետք է հիշատակել Ալիս գետի աջ ափին գտնվող Սարրոզլան, Սըվըղն ու Կիկին: 1914թ. Կիկին ուներ 150 տուն (1200 շունչ)[241], Սարըոզլանը՝ 50 տուն (336 շունչ)[242], Սըվըղն՝ 150տուն (1100 շունչ)[243] հայ բնակիչ:

---

[234] Ալպոյաճեան Ա., Պատմութիւն հայ Կեսարիոյ, Գահիրէ, 1937, հ. Ա, էջ 875:
[235] Տե՛ս նույն տեղում:
[236] Առաքել Պատրիկ, նշվ. աշխ., հ. Բ, էջ 423:
[237] Տե՛ս նույն տեղում, տե՛ս նաև Գաբիկեան Կ., նշվ. աշխ., էջ 606, տե՛ս նաև Ազաքել Պատրիկ, նշվ. աշխ., էջ 572:
[238] Ալպոյաճեան Ա., նշվ. աշխ., նույն տեղում, տե՛ս նաև Առաքել Պատրիկ, նշվ. աշխ., էջ 423:
[239] Տե՛ս նույն տեղում:
[240] Kevorkian R.H., Paboudjian P.B., նշվ.աշխ., էջ 241, տե՛ս նաև Գաբիկեան կ., նշվ. աշխ., նույն տեղում:
[241] Գաբիկեան Կ., նշվ. աշխ., էջ 600:
[242] Kevorkian R.H., Paboudjian P.B., նշվ.աշխ., էջ 241:
[243] «Հայ ազգագրություն և բանահյուսություն», հ. Ա, նույն տեղում:

Այսպիսով 20-րդ դարի սկզբին Ազիզիեի կազան բաղկացած էր 8236 շունչ հայ բնակչությունից:

Պետք է նշել, որ նույն ժամանակ կազան ուներ խայտաբղետ էթնիկ կազմ: Այստեղ ապրում էին չերքեզներ, ավշարներ, կզլբաշներ, քրդեր:

Մեծամասնություն կազմող չերքեզները 1903թ. բնակեցված էին հետևյալ կերպ[244]. Կլիչ-Մեհմեդ գյուղ՝ 30 տուն, Կարաբողազ՝ 25 տուն, Ներքին և Վերին Կարալեզ՝ 80 տուն, Օրանդերե՝ 30 տուն, Հալիբ-բեյ՝ 25 տուն, Ալտիկեսեկ՝ 40 տուն, Ալտիքայ՝ 25 տուն, Պեվերենք՝ 45 տուն, Կարակույու՝ 30 տուն, Կարակալախ՝ 40 տուն, Ափրիսուք՝ 25 տուն, Քասափքեփե՝ 20 տուն, Բեքչաիր (Վերին և Ներքին) 50 տուն, Գյումուշխան՝ 50 տուն:

Ստացվում է, որ կազայում բնակվող չերքեզների ընդհանուր թիվը հասնում էր 515 տան, և եթե յուրաքանչյուր տան համար միջին հաշվով ընդունելու լինենք 7 անձ (քանի որ Հաֆիքի կազայի օրինակով, մենք տեսանք, որ մահմեդական բնակչության համար վիճակագրության մեջ յուրաքանչյուր տան համար ընդունված է միջինը 7 անձ, որն ընդունելի է նաև մեզ համար), ապա ստացվում է, որ կազայում ապրող չերքեզների թիվը հասնում էր շուրջ 3605 անձի: Մահմեդական բնակչության մեջ մեծ զանգված էին կազմում նաև ավշարները, որոնք բնակեցված էին հետևյալ կերպ. Սալակլաուր՝ 25 տուն, Օխուլիջելե՝ 30 տուն, Կեմեր՝ 50 տուն, Քուրուդերե՝ 20 տուն, Դոլուխ՝ 40 տուն, Ճոթախթերեսի՝ 35 տուն, Ինժամաղար՝ 30 տուն, Ղարաքիլիսա՝ 40 տուն[245]:

Այսպիսով, 20-րդ դարի սկզբին Ազիզիե կազայում բնակվում էին շուրջ 270 տուն ավշարներ, և եթե նորից յուրաքանչյուր տան համարշնչերի միջին թիվը ընդունելու լինենք 7 անձ, ապա ստացվում է, որ ավշարների թիվը հասնում էր շուրջ 1890 անձի:

Հայոց առաջնորդարանի հաղորդած տվյալների համաձայն 1881-1882թթ. ընթացքում Ազիզիե կազայում ապրող քրդերի թիվը հասնում էր 5500 շնչի[246]:

19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին Ազիզիե գավառակի մեջ մահմեդական բնակչության այս բազմամարդությունը պետք է բացատրել նրանով, որ հատկապես 1877-1878թթ. պատերազմից հետո մեծ քանակությամբ մահմեդական բնակչություն այլ գավառակներից եկավ և հաստատվեց այստեղ: Այս մասին «Մասիս» օրաթերթը հետևյալն է գրում. «Վերջին պատերազմէն ի վեր անհամար իսլամ Չերքեզներ, իսլամ Պուլկարք և Լազք գաղթեցին այդ նահանգն (Սեբաստիա - Ա.Ս.), ուր յառաջագույն Քրիստոնէից թիւը գրեթէ կը հաւասարվի իսլամաց թուոյն: Արդ, Սեբաստիոյ նահանգն առաջին տեղը կը բռնէ այն

---

[244] Маевский В., Путь Малой Азии в районе между Самсуном и Александрийским заливом, Тифлис, 1903, стр. 96-97.
[245] Տե՛ս նույն տեղում:
[246] Մասիս, Կ. Պոլիս, 1881, հոկտեմբերի 13:

նահանգաց մէջ, ուր ամեն ցեղէ գաղթականք ղրկուած են հաստատուելու համար, մանավանդ Ազիզիէի գավառն և այլ տեղեր...»[247]:

Ամփոփելով նշենք, որ Ազիզիեի կազան XIX դարի վերջին և XX դարի սկզբին Սեբաստիայի գավառի հարավային գավառակներից մեկն էր, ուր ոչ մեծ քանակությամբ հայեր էին տեղաբաշխված: Հայերի հետ կազայի էթնիկ ընդհանուր պատկերն էին կազմում նաև քրդերը, չերքեզները և ավշարները:

Բ. ԳՅՈՒՐԻՆԻ ԳԱՎԱՌԱԿ

Գյուրինի կազան Սեբաստիայի սանջակի հարավային գավառակներից մեկն էր: Վերջինիս սահմաններն էին հյուսիսից Կանգալի կազան, հարավից՝ Հալեպի վիլայեթը, արևմուտքից՝ Ազիզիեի, արևելքից՝ Տարենտեի կազաները:

Վարչական կենտրոնն էր համանուն Գյուրին քաղաքը, որը 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին հայաշատ մի կենտրոն էր: Քաղաքը բաժանված էր բազում թաղերի, որոնց մեծ մասը հայաբնակ էր:

Շուղուլ (Շաղալ) թաղը բնակեցված էր գլխավորապես հայերով, որոնց թիվը հասնում էր 200 տան, որոնցից 60 տուն հայերը բողոքականներ էին[248]:

Էորեն թաղը բաժանված էր 2 մասի՝ Վերի ու Վարի և բաղկացած էր 150 հայ տնից, որից 30 տունը՝ բողոքականներ[249]: Տաբեր թաղն ուներ 50 տուն մահմեդական բնակչություն[250]:

Սմկնա թաղն ուներ 20 տուն բնակիչ, որից 10-ից ավելին բնակեցված էին հայերով[251]:

Չերչի-Կոբը շրջապատված էր բարձրադիր լեռներով՝ շուրջ 20 տուն հայերով, որոնցից նշանավոր էր Մավուսախալյան գերդաստանը[252]:

Յաշ-Թեփե թաղը բաղկացած էր 40 տուն հայ բնակչությունից[253]:

Սև-բլուրն ուներ 100 տուն հայ, որոնցից 30 տունը բողոքականներ էին[254]: Այս թաղի բնակչության թվում էին մի քանի տուն մահմեդականներ[255]:

Սաղ թաղում էր գտնվում հայոց մայր եկեղեցին: Այստեղի հայ բնակչության մասին խոսելիս պետք է անդրադառնալ հետևյալ հանգամանքին: Գյուրին քաղաքի մեջ 60 տնից ավելի կաթոլիկ հայեր

---

[247] Նույն տեղում, հոկտեմբերի 15:
[248] ՀՀ ԱԱ, ֆ. 425, ց. 1, գ. 64, թ. 26, տե՛ս նաև Էփրիկեան Ս., նշվ. աշխ., էջ 436, տե՛ս նաև Առաքել Պատրիկ, նշվ. աշխ., էջ 396:
[249] Տե՛ս նույն տեղում:
[250] Տե՛ս նույն տեղում:
[251] Տե՛ս նույն տեղում:
[252] Տե՛ս նույն տեղում:
[253] Տե՛ս նույն տեղում:
[254] Տե՛ս նույն տեղում:
[255] Տե՛ս նույն տեղում:

կային: Նրանք սովորաբար բնակվում էին Սմկնա, Շուղուլ և Սաղ թաղերի մեջ[256]:

Խաս-պաղ թաղը գրեթե ամբողջովին հայաբնակ էր և ուներ շուրջ 200 հայ տուն[257]: Ձախ- ծորը[258] քաղաքի բոլոր թաղերից առաջինն էր թե՛ բազմամարդության և թե՛ ընդարձակության տեսակետից: Ուներ 400 տուն հայ բնակիչ, որից 90-ը՝ բողոքականներ[259]:

Այսպիսով, Գյուրին քաղաքի հայ բնակչության թիվը հասնում էր 1180 տան: Այս տվյալը թույլ է տալիս ենթադրելու, որ այն վերաբերում էր 1870-ական թթ., քանի որ արդեն 1883թ. նրանց թիվը հասնում էր 1300 տան[260]:

Գյուրին քաղաքի անտանելի վիճակը, ցորենի ու հացի չլսված թանկությունը օրական պարենը հայթայթող կյուրինցիների մեծ մասին ստիպում էր արտագաղթել: Գյուրինցիները գաղթում էին խումբ-խումբ[261]: Մնացող գյուրինցիների հիմնական զբաղմունքը արհեստագործությունն ու առևտուրն էր:

1889թ. մի հոդվածագիր այսպես է բնորոշել գյուրինցիներին. «Գյուրինի հայերն քաջարի արուեստի, վաճառականութեան և զինավարժութեան մէջ մեծ համբաւ ունին իբրև նրբամիտ վաճառականներ և արիասիրտ ճամբորդներ, անվախ ի տուր եւ առս: Ունին վաճառականական տներ հաստատուած Հալէպ, Պոնտոս, Կարին, Պոլիս, Սեբաստիա, Տիգրանակերտ, նաեւ՝ Լոնտոն, Մանչեսքըր»[262]:

Ցավոք այս գավառակը ևս չխուսափեց 1895-1896թթ. թուրքական ջարդերից: Գյուրին քաղաքի բնական աճը խաթարվեց: Թեև այս արհավիրքը խաթարեց հայ ժողովրդի բնական աճը Գյուրին քաղաքում, բայց հայերը շարունակեցին գերակշռել քաղաքի բնակչության մեջ:

1898-1900թթ. քաղաքն ուներ 2000 տուն՝ 12000 բնակիչ, որից 1400 տունը կազմում էին հայերը[263]:

Արդեն առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Գյուրինն ուներ 2000 տուն կամ 14000 շունչ հայ բնակչություն[264]:

Գյուրինի կազայի հայկական գյուղերից էին Գարա-Սարը, Գարա-էորեն, Ձախրն-Քյոյիվը, որոնք գտնվում էին Գյուրին քաղաքից հյուսիս: 20-րդ դարի առաջին քառորդին այստեղ հետևյալ ժողովրդագրական

---

256 Տե՛ս նույն տեղում:
257 Տե՛ս նույն տեղում:
258 Ոմանք Ձաղաց-ծոր են անվանում՝ ծորերի մեջ ջաղաց ունենալու պատճառով:
259 Տե՛ս նույն տեղում:
260 Մասիս, Կ.Պոլիս, 1883, մարտի 25, թ. 3441:
261 Տե՛ս նույն տեղում:
262 Արաքս, Պետերբուրգ, 1889, էջ 76-82:
263 ԳԱԹ, Թ. Ազատյանի ֆ., բաժ. 3, գ. 23, թղթ. 1 և 5, տե՛ս նաև Արևելք, Կ.Պոլիս,1898, հուլիս:
264 Գաբիկեան, նշվ. աշխ., նույն տեղում, Առաքել Պատրիկ, նույն տեղում, նաև Աղեքսանդրեան, նշվ. աշխ., էջ 373:

պատկերն էր. Գարա-Սար 72 տուն հայ բնակիչ, Գարա-Էորեն՝ 80 տուն հայ և 20 տուն թուրք, Չախրն-Քյոյիվ՝ 20 տուն հայ բնակչություն[265]:

Թուրքաբնակ գյուղեր էին Թելին (60 տուն), Գուբյուքը (50 տուն), Թուխմիշը (60 տուն), Յազիքեյը (15 տուն)[266]:

Կազայում գոյություն ունեին շուրջ 50 թուրքաբնակ դարձած գյուղեր՝ 2000 տուն բնակչությամբ[267]: Այդ թուրքական գյուղերից միայն մի քանիսում էին բնակվում հայեր, որոնց թիվը հասնում էր 53 տան: Այսպես, օրինակ Գյուրին քաղաքի շրջակայքում գտնվող գյուղերից միայն Եէլքեն ուներ 5 տուն, Կավակը՝ 20 տուն հայ բնակիչ[268]:

Գարատորագ գյուղախմբի 12 թուրքական գյուղերից միայն Գարավերենն ուներ 19 տուն հայ բնակչություն, իսկ Կեռպեք Վերեն գյուղախմբի 30 թուրքական գյուղերից միայն Քյուրքճի և Քյաֆիր-Վերեն գյուղերն ունեին խառը բնակչություն[269]:

Գյուրին քաղաքից բացի, կազայում 20-րդ դարի սկզբին ապրում էին ընդհանուր հաշվով 225 տուն հայեր: Եթե ընդունենք յուրաքանչյուր տան համար բնակիչների միջին թիվը 8 հոգի, ապա ստացվում է շուրջ 2000 անձ: Այսպիսով, 1914-1915թթ. մեր հաշվարկով կազայում բնակվում էր շուրջ 16000 հայ բնակիչ:

Թեև հայերի մեծագույն մասը 20-րդ դարի սկզբին կենտրոնացած էր Գյուրին քաղաքում, բայց այնուամենայնիվ ընդհանուր կազայում նրանք ավելի մեծ թիվ էին կազմում, քան թե մյուս էթնիկ տարրերը:

Դեռ 1881թ., հայոց առաջնորդարանի հաղորդած վիճակագրության համաձայն,[270] Գյուրինում և շրջակա գյուղերում բնակվում էին 7900 շունչ թուրքեր և կզլբաշներ, 8830 շունչ հայեր, 1600 շունչ քրդեր: Կզլբաշներն ու քրդերը ավելի քիչ էին: Հայերի մասին հայոց առաջնորդարանի ցույց տված տվյալները պետք է համարել մոտավոր: Հայտնի է, որ հարկերից խուսափելու նպատակով հայոց առաջնորդարանը թուրքական կառավարությանը ներկայացնում էր հայ բնակչության նվազեցված տվյալներ, որը դժվարալուծելի խնդիրներ է առաջ բերում հայ բնակչության իսկական թվերը հաշվարկելիս ժամանակ:

Փաստորեն հայերը դարավերջին այստեղ կազմում էին ընդհանուր բնակչության մոտ 48,2%-ը, մինչդեռ թուրքերը և կզլբաշները միասին 43,1%-ը, քրդերը 8,7%-ը:

Ամփոփելով նշենք, որ Գյուրինի կազան XIX դարի վերջին և XX դարի սկզբին ուներ խայտաբղետ ժողովրդագրական կազմ, որի

---

[265] Առաքել Պատրիկ, նշվ.աշխ., հ. Բ, էջ 411, տես նույնը Աղեքսանդրեան Ա., նշվ.աշխ. էջ 375:
[266] Տե՛ս նույն տեղում:
[267] Աղեքսանդրեան Ա., նշվ. աշխ., նույն տեղում:
[268] Թէոդիկ, նշվ. աշխ., էջ 128:
[269] Նույն տեղում, էջ 128-129:
[270] Մասիս, Կ.Պոլիս, 1881, հոկտեմբերի 13, թ. 3015:

բաղկացուցիչ էթնիկ տարրերն էին հայերը, թուրքերը, կզլբաշները, քրդերը: Հայերը, գերակշռող տոկոսը կազմելով այս բնակչության մեջ, այս հատվածի մշակութային հարստության կրողն էին:

դ. ՏԱՐԵՆՏԵԻ /ԴԵՐԵՆԴԵ/ ԳԱՎԱՌԱԿ

Տարենտեի կազան այս ժամանակամիջոցում հանդիսանում էր Սեբաստիայի սանջակի հարավային գավառակներից մեկը: Վերջինս արևմուտքից սահմանակից էր Գյուրինի կազային, արևելքից՝ Խարբերդի վիլայեթին, հյուսիսից՝ Տիվրիկի կազային:

Կազայի կենտրոնն էր Տարենտե[271] (Դերենդե) գյուղաքաղաքը: Այն տարածվում էր Թոխմա-Սու (Մելոս) գետի երկու եզրերին, Գյուրինից դեպի Մալաթիա տանող ճանապարհի վրա:

Այստեղ հայ բնակչության թիվը դեռևս 1888թ. կազմում էր 500 տուն[272]:

Սակայն նախքան առաջին համաշխարհային պատերազմը հայերի թիվը այս կենտրոնում նվազել էր: Ըստ Աղեքսանդրյանի կազմում էր 380 տուն կամ 1700 շունչ[273], որոնք բնակվում էին Հայեկ լեռան ստորոտում ընկած հինգ թաղերում: 200 տուն բնակեցված էր եկեղեցու, 40 տուն՝ Գալարմի, 20 տուն՝ Հայի-Գոգ, 70 տուն՝ Եփմահլեում, 30 տուն՝ Հաղեր (Հատիր) թաղերում: «Հայ ազգագրություն և բանահյուսություն» աշխատության մեջ տրված է 310 տուն կամ 1700 շունչ[274] տվյալը, և այս բնակչությունը բնակեցված էր վերոհիշյալ կերպ:

Սակայն նկատենք, որ երկու տեղում էլ տների քանակը չի համապատասխանում իրականությանը, քանի որ ամենապարզ հաշվարկի դեպքում այն կազմում է 360 տուն և ոչ թե 310 կամ 380 տուն: Կասկածելի է նաև 1700 շունչ տվյալը, քանի որ 360 տան դեպքում յուրաքանչյուր տան համար շնչերի թիվը կազմում է շուրջ 5 անձ, որը մեր կարծիքով, հեռու է ճշմարտացի լինելուց: Ընդունելով յուրաքանչյուր տան համար շնչերի միջին թիվը 8 մարդ՝ ստացվում է, որ Տարենտե գյուղաքաղաքը նախքան առաջին համաշխարհային պատերազմը ունեցել է 2880 շունչ հայ բնակիչ:

---

[271] 699թ. արաբները գրավեցին այս գյուղաքաղաքը հույների ձեռքից, բայց շուտով հույները նորից ետ գրավեցին այն և այս տիրափոխությունը կատարվել է բազում անգամներ:

[272] Արևելեան մամուլ, Զմյուռնիա, 1888, էջ 105, Թուրեան Մ., «Տարենտե», տե՛ս նաև Առաքել Պատրիկ, հ. Բ, էջ 40:

[273] Աղեքսանդրեան Ա., նշվ.աշխ., էջ 379:

[274] Հայ ազգագրություն և բանահյուսություն, էջ 40:

Տարենտե կազայի կազմում գտնվող մյուս հայաշատ ու մեծ կենտրոնը Աշոտի[275] գյուղն էր: Վերջինս նահիեի կենտրոնն էր և Մեծ եղեռնից առաջ ուներ 250 հայ տուն և 120 տուն թուրք բնակչություն[276]: Յուրաքանչյուր տունը, հաշված 8 շնչով, կազմում էր 2000 շունչ:

Այս կազայում բացի հայերից ապրում էին նաև թուրքեր և քրդեր, որոնք բնակվում էին 45 գյուղերում: Վերջիններս միավորված էին Կարմիր Դար և Այվազու նահիեներում[277]:

1873թ. ողջ կազայում բնակվող հայերի թիվը հասնում էր 4950 անձի[278]: Իսկ արդեն 20-րդ դարի սկզբին այդ թիվը, ըստ որոշ աղբյուրների, հասավ 6000-ի[279]:

Փաստորեն, Սեբաստիայի ողջ սանջակում նախքան առաջին համաշխարհային պատերազմը մեր հաշվումների համաձայն հայ բնակչության թիվը կազմում էր 169554 մարդ:

---

[275] 888թ. Մեղրիկ-Մելի կամ Մելիաս հայ իշխանը, Կ.Պոլսից գալով Փոքր Հայք, եկավ Տարենտե կազա և այս գյուղը հանուն Աշոտ Ա. Բագրատունու անվանեց Աշոտի (Աղեքսանդրեան Ա., նշվ. աշխ., էջ 380):

[276] Առաքել Պատրիկ, նշվ. աշխ., հ. Բ, էջ 414:շ

[277] Թէոդիկ, նշվ. աշխ., էջ 127:

[278] Ալթունեան Ա., Տեղեկագրութիւն հայոց գաղթականութեան, որք ի Մոլտո-Վալաքիա, Հունգարի եւ ի Լեհաստան, Ֆոքշան, 1877, էջ 203:

[279] Առաքել Պատրիկ, նշվ. աշխ., հ. Բ, էջ 413:

ՇԱԲԻՆ ԿԱՐԱՀԻՍԱՐԻ ԳԱՎԱՌ
ՔԱՐՏԵԶԱԳԻՐ՝ Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՍԵԲԱՍՏԻԱՅԻ ՆԱՀԱՆԳԻ ՇԱԲԻՆ ԿԱՐԱՀԻՍԱՐ ԳԱՎԱՌԻ ՎԱՐՉԱԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ 19-ՐԴ ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ԵՎ 20-ՐԴ ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

1. ՇԱԲԻՆ ԿԱՐԱՀԻՍԱՐԻ ԳԱՎԱՌԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԵՎ ՀԱՐԱՎԱՐԵՎՄՏՅԱՆ ԳԱՎԱՌԱԿՆԵՐ

Սեբաստիայի վիլայեթի հյուսիսային գավառների թվին պետք է դասել Շաբին Կարահիսարի գավառը:

Մինչև 1846թ. այն մտնում էր Էրզրումի էյալեթի կազմի մեջ[280]: Դրանից հետո այն կցվեց Սեբաստիայի վիլայեթին և 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին իրենից ներկայացնում էր բազում հայկական գյուղերով մի սանջակ: Այն հյուսիսից սահմանակից էր Տրապիզոնի վիլայեթին, հարավից՝ Սեբաստիայի սանջակին, արևմուտքից՝ Թոխաթի սանջակին, արևելքից՝ Էրզրումի վիլայեթին: Այն բաղկացած էր Շաբին Կարահիսար, Ալուջա (Ալիջորա), (Մինթովալ նահիե), Անդրեաս (Սու-Շեհրի) նահիեների, Կոյլուհիսար (Քյուփրուհիսար) (Նահիվլու նահիե), Համիդիե (Համիդիե նահիե) կազաներից[281]:

ա. ՇԱԲԻՆ ԿԱՐԱՀԻՍԱՐԻ ԳԱՎԱՌԱԿ

Գավառի կենտրոնական կազան Շաբին Կարահիսարն էր, որի սահմաններն արևելքում կազմում էին Ալուջա կազան, Արևմուտքում՝ Կոյլուհիսարը, հյուսիսում՝ Տրապիզոնի վիլայեթը, հարավում Անդրեասի կազան:

Ինչպես ողջ սանջակի, այնպես էլ կազայի կենտրոնն էր Շաբին Կարահիսար քաղաքը[282]: 19-դարի կեսերին քաղաքի բնակչության կազմի մեջ էին մտնում հայերը, թուրքերը և հույները: Ըստ Ն.Սարգսյանի՝ հայերի թիվը հասնում էր 400 տան[283]:

---

[280] Birken, նշվ. աշխ., էջ 148, տես նաև Մելքոնյան Ա., Էրզրումի նահանգի հայ ազգաբնակչությունը XIX դարի առաջին երեսնամյակին, Երևան, 1994, էջ 31:

[281] Гиппиус А.И., Статистические таблицы вилайетов Турецкой империи ближайших к Закавказью, Тифлис, 1889, стр. 9.

[282] Շաբին Կարահիսարի հիմնումը հասնում է շատ հին ժամանակների: Շ.Կարահիսար քաղաքը գրավվել է դեռևս Պոմպեոս զորավարի կողմից: Հետագայում հռոմեական տիրապետության անկումով քաղաքը անցավ հունական Նիկողայոս կայսրին, որը իր անունով քաղաքը մկրտեց Նիկոպոլիս: 18-րդ դարի վերջին քաղաքը անցավ թուրքական իշխանության տակ: Քաղաքի շուրջը բարձրաբերձ սև լեռների և մոտը գտնվող պաղլեղի (շաբ) հանքերի պատճառով քաղաքը սկսեց կոչվել Շաբին Կարահիսար՝ (տե՛ս Գանարեան Գ., Հուշեր և խոհեր Շապին Գարահիսար, Պոլիս, Կիլիկիա և Լիբանան, Պեյրութ, 1960, էջ 8):

[283] Սարգսեան Ն. Վ., Տեղադրութիւնք ի Փոքր եւ Մեծի Հայս, Վենետիկ, 1864, էջ 66:

Արդեն 1878թ. քաղաքի հայ տների թիվը, ըստ Գ.Սրվանձտյանցի հաղորդած վիճակագրության, հասնում էր 700 տան 5224 շնչի[284]: Նույն ժամանակ քաղաքի հույների թիվը կազմում էր 1050, իսկ թուրքերինը՝ 12000 շունչ: Կարծում ենք թուրքերի տակ պետք է հասկանալ մահմեդական ազգաբնակչությանը, քանի որ նույն ժամանակ կազմում բնակվում էին նաև մահմեդական այլ տարրեր, ինչպես օրինակ, չերքեզներ, քրդեր, կզլբաշներ, թուրքմեններ:

Եվ արդեն 1890-ական թթ. սկզբին՝ նախքան համիդեական կոտորածները, քաղաքն ուներ 1200 տուն՝ 7000 շունչ հայ բնակչություն[285]:

Շաբին Կարահիսարի 1895թ. դաժան կոտորածը զգալի կերպով ազդեց հայ բնակչության ընդհանուր թվի վրա, բայց, այնուամենայնիվ, քաղաքը իր ազգային դիմագիծը պահպանեց նաև 20-րդ դարի սկզբին: 1914թ. դրությամբ քաղաքի բնակչության թիվը հասնում էր 20000-ի, որոնց թվում հայեր, թուրքեր, հույներ, քրդեր: Ընդ որում 13000-ը կազմում էին հայերը[286]:

Բացի այս հայաշատ կենտրոնից, 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին հայերը կազմում բնակվում էին Թամզարա գյուղաքաղաքում և 4 հայկական մեծ գյուղերում, որոնք տեղաբաշխված էին համապատասխանաբար Շաբին Կարահիսար քաղաքից դեպի հյուսիս-արևմուտք և հարավ-արևմուտք: Նշենք, որ այդ գյուղերից Թամզարան գտնվում էր քաղաքի հյուսիս-արևմուտքում, իսկ Պուսեիդ, Սենեղրի, Օիպեռի, Չրտախ գյուղերը՝ հարավ-արևմուտքում և հարավում:

Շաբին Կարահիսարից հետո իր հայաշատությամբ աչքի էր ընկնում Թամզարա գյուղաքաղաքը: Դեռ 1878թ. դրությամբ այն բաղկացած էր 2500 շունչ հայ, թուրք, հույն բնակչությունից, որից 1980-ը հայեր էին, 477-ը՝ թուրք, 43-ը՝ հույն[287]: Իսկ արդեն նախքան 1895-1896թթ. կոտորածը գյուղում բնակվող ընդհանուր բնակչության թիվը հասնում էր 600-700 տան[288]:

Սկսված համիդեական ջարդերը խախտեցին գյուղի ժողովրդագրական պատկերը: 1895թ. հոկտեմբերի 15-ին տեղի է ունեցել առաջին կոտորածը, որի ընթացքում զոհվել է 16 հոգի հայ բնակիչ[289]: Դրանից հետո իրականացվել է ավելի մեծ կոտորած, որի հետևանքով

---

[284] ԳԱԹ, Գարեգին Սրվանձտյանցի ֆոնդ, բաժին 1, գ. 18, թ. 1, տես նույնը Սրվանձտյանց Գ., Երկեր, հ. Բ, Երևան, 1982, էջ 162, տես նաև Աղանեան Գ., Դիւան հայոց պատմութեան, գիրք ԺԳ, Թիֆլիս, 1915, էջ 530, տե՛ս նաև ՀՀ ԱԱ, ֆ. 476, ց. 1, գ. 869, թ. 8:

[285] Հայկազ Ա., Շապին-Գարահիսար ու իր հերոսամարտը, Նիւ Եորք, 1957, էջ 17:

[286] Օոցիկյան Մ., Արևմտահայ աշխարհ, Նյու Յորք, 1947, էջ 491:

[287] ԳԱԹ, Գարեգին Սրվանձտյանցի ֆոնդ, բաժին 1, գործ 18, թ. 1, տե՛ս նաև Թորոս Ազատյանի ֆոնդ, բաժին 3, գործ 50, թ. 1:

[288] Տեովլեթեան Ս., Յուշեր Շապին Գարահիսարեն, Փարիզ, 1954, էջ 27:

[289] ՀՀ ԳԱԱ, պատմության ինստիտուտի արխիվ, Լեոյի անձնական ֆոնդ 1, ց. 1, գ. 135, թ. 6:

զոհվել է 200-ից ավելի հայ բնակիչ[290]: Այդուհանդերձ, 1914-1915թթ. ընթացքում այստեղ հայ բնակչության թիվը հասավ 450 տան կամ 3600 շնչի[291]:

Շաբին Կարահիսարից 5 կմ դեպի հարավ-արևմուտք է գտնվում Պուսեիդ զուտ հայաբնակ գյուղը: 1872-1873թթ. այն ուներ 25 հայ տուն, որոնք մեծամասամբ հողագործ և ջորեպաններ էին[292]: Արդեն մինչև 1878թ., աճելով նրանց թիվը հասել էր 30 տան կամ 258 անձի[293]: Այս աճը բերեց նրան, որ գյուղը նախքան 1895-1896թթ. արհավիրքն ունենար 50 տուն 400 շունչ հայ բնակչություն[294]: Ըստ որոշ վիճակագրության, նախքան առաջին համաշխարհային պատերազմը գյուղն ուներ 86 տուն 510 բնակիչ[295]: Այլ վիճակագրության համաձայն այդ թիվը համապատասխանաբար կազմում էր 80 տուն, 640 հոգի[296]:

Մենք հակված ենք կարծելու, որ երկրորդ վիճակագրությունն ավելի մոտ է ճշմարտությանը, քանի որ այդ վիճակագրության մեջ յուրաքանչյուր տան միջին անձերի թիվը կազմում էր 8 շունչ, որն այդպես էր նաև 19-րդ դարի վերջի քառորդին:

Պուսեիդի մոտ էր գտնվում Աներդի[297] գյուղը: Այն 19-րդ դարի վերջին զուտ հայաբնակ էր: Արդեն 1872-1873թթ., ըստ Շաբին Կարահիսարի առաջնորդարանի հաղորդած տվյալի, գյուղն ուներ 45 տուն բնակչություն, որոնց մեկ քառորդը պանդուխտ էր, մնացածը՝ հողագործ, ջորեպան, քարագործ և այլն[298]: Այս փաստը պետք է համարել ճշմարիտ, քանի որ 1878թ., ըստ այլ վիճակագրության գյուղի բնակչությունը կազմում էր 46 տուն, 444 շունչ[299]: Բնականաբար կարելի է համաձայնվել նաև այն փաստի հետ, ըստ որի 1895թ. կոտորածից առաջ գյուղն ուներ 60 տուն հայ բնակչություն[300]:

Բնակչության այդ աճի միտումը շարունակվեց նաև 20-րդ դարի սկզբին և հայերի թիվն այստեղ նախքան մեծ ողբերգությունը հասնում էր 80 տան կամ 640-650 մարդու[301]: Հայ հեղինակներից Հայկազ Արամը ևս

---

290 Տե՛ս նույն տեղում:
291 ՀՀ ԱԱ, ֆ. 476, ց. 1, գ. 144, թ. 17, տե՛ս նաև Գաբիկեան Կ., նշվ. աշխ., էջ 604:
292 «Համարատվութիւն Ազգային կենդրոնական վարչութեան 1872-1873 Ամի Ա.Ո. Ազգային ընդհանուր ժողովն», Կ.Պոլիս, 1874, էջ 51:
293 ԳԱԹ, Գարեգին Սրվանձտյանցի ֆոնդ 1, բաժին 1, գործ 18, թ. 1:
294 Հայկազ Ա., նշվ. աշխ., նույն տեղում:
295 Kevorkian R.H., Paboudjian P.B., նշվ.աշխ., էջ 249:
296 Գաբիկեան, նշվ. աշխ., նույն տեղում:

297 Գյուղի բուն անունը Անեղրի է, գյուղի մեջ բուրդ գզողներ շատ կային և նրանց աղեղը ÏáãíáõÙ ¿ñ §³Ý»Õ¡ª (ï»'e Ð³ÙÏ³½ ²ñ³Ù, ÝßÍ. ³ßË., ¿ç 20):
298 «Համարատվութիւն Ազգային կենդրոնական վարչութեան 1872-1873 Ամի Առ Ազգային ընդհանուր ժողովն», Կոստանդնուպոլիս, 1874, էջ 51:
299 ԳԱԹ, Գարեգին Սրվանձտյանցի ֆոնդ, բաժին 1, գործ 18, էջ 1, տե՛ս նաև Աղանեան Գ., Դիւան հայոց պատմութեան, գիրք ԺԳ, Թիֆլիս, 1915, էջ 530:
300 Տեվլեթեան Ս., նշվ. աշխ., էջ 27, տե՛ս նաև Էփրիկեան Ս., նշվ. աշխ., էջ 181:
301 Գաբիկեան Կ., նշվ. աշխ., նույն տեղում, ՀՀ ԱԱ, ֆ. 476, ց. 1, գ. 144, թ. 17:

իր վերոհիշյալ աշխատության մեջ բերում է այս տվյալները, սակայն նա մատնանշում է, որ դրանք վերաբերում են նախքան 1895թ. կոտորածը[302]: Սակայն, ինչպես երևում է, այդ փաստերն ամենայն հավանականությամբ վերաբերում են 1914-1915թթ.:

Աներդիից ոչ այնքան հեռու էր գտնվում մյուս հայաբնակ գյուղը Օիպեռին: 19-րդ դարի վերջին բացի հայերից ապրում էին նաև թուրքեր: 1872-1873թթ. դրությամբ գյուղում բնակվում էին 60 տուն հայ և 6 տուն թուրք[303]: Մի քանի տարի անց՝ արդեն 1878թ., գյուղում բնակվող ազգաբնակչության պատկերը հետևյալն էր. 66 տուն հայ, 456 շունչ, իսկ թուրքերի թիվը հասնում էր 60 անձի[304]: Նկատելի էր թուրքական կառավարության ժողովրդագրական քաղաքականության հստակ միտումը:

Այս գյուղը ինչպես նաև հարևան Թամզարա, Աներդի և մի շարք այլ գյուղեր կոտորածի ենթարկվեցին 1895-1896թթ. և նույնիսկ, ըստ որոշ աղբյուրների, կորցրեցին բնակչության մոտ 50%-ը[305]: Այս փաստը հնարավոր է, որ մի քիչ չափազանցված լինի, բայց այն, որ իրոք գյուղի ժողովրդագրական պատկերը խիստ խեղաթյուրվեց, ակնհայտ է:

Պատահական չէ, որ մինչև 1914-1915թթ. գյուղի հայ բնակչության թիվը ավելացել էր ընդամենը 14 տնով՝ կազմելով 80 տուն, 650շունչ[306]:

Աղեքսանդրյանն, իր աշխատության մեջ 1911թ. դրությամբ ցույց է տալիս 30 տուն հայ բնակչություն, սակայն դա չի համապատասխանում իրականությանը և քիչ հավանական է: Այդ մասին են վկայում հեղինակի հետևյալ խոսքերը. «Այս հաշիվները ճշտության կարոտ են»[307]:

Չրտախ (Չրագ) գյուղը զուտ հայաբնակ էր 1872-1873թթ. ընթացքում և ուներ 70 տուն բնակչություն[308]: Այս թիվն է վկայակոչում նաև մեկ այլ աղբյուր, ըստ որի նախքան 1895-1896թթ. այն ուներ 70 տուն՝ 500 հոգի հայ բնակչություն[309]: Ակնհայտ է, որ 1895-1896թթ. կոտորածները ծանր են անդրադարձել գյուղի վրա, քանի որ մինչև 1915թ. ցեղասպանությունը գյուղի բնակչությունն աճել էր ընդամենը 167 բնակչով՝ կազմելով 667 մարդ[310]:

Այսպիսով, Շաբին Կարահիսարի կազայի հայ բնակչությունը 20-րդ դարի սկզբին կազմում էր 19207 մարդ:

---

302 Հայկազ Ա., նշվ. աշխ., նույն տեղում:
303 «Համարատվութիւն Ազգային կենդրոնական վարչութեան 1872-1873 Ամի Առ Ազգային ընդհանուր ժողովն», Կ. Պոլիս, 1874, նույն տեղում:
304 ԳԱԹ, նույն տեղում:
305 Համբարձումեան Վ., նշվ. աշխ., էջ 208:
306 ՀՀ ԱԱ, ֆ. 476, ց. 1, գ. 144, թ. 17:
307 Աղեքսանդրեան Ա., նշվ. աշխ., էջ 358:
308 «Համարատվութիւն Ազգային կենդրոնական վարչութեան 1872-1873 Ամի Առ Ազգային ընդհանուր ժողովն», Կ.Պոլիս, 1874, էջ 51:
309 Տեվլեթեան Ս., նշվ. աշխ., նույն տեղում:
310 Kevorkian R.H., Paboudjian P.B., նշվ.աշխ., նույն տեղում:

Պարզ է դառնում, որ ճշմարտությունից հեռու է Վիտալ Քինեն: Ըստ այդմ, կազայի բնակչությունը 1890-ական թթ. սկզբին կազմում էր 18800 մարդ[311], որից 9000-ը՝ մահմեդական, 4800-ը հայ, 5000-ը հույն:

Ամփոփելով Շաբին Կարահիսարի գավառակի ժողովրդագրական դրության մասին մեր խոսքը նշենք, որ այն համանուն գավառի կենտրոնական գավառակն էր: Բնակչության մեջ մեծ էր հայերի թիվը, որոնք հիմնականում բնակեցված էին Շաբին Կարահիսար քաղաքում: Եթե նախքան 1895-1896թթ. կոտորածները նրանց թիվը հասնում էր 7000 շնչի, ապա նախքան Մեծ եղեռնը այն արդեն հասել էր 13000-ի: Հայերը տեղաբաշխված էին նաև Թամզարա, Պուսեիդ, Անեղրի, Օիպեռի, Չրտախ գյուղերում:

Նշենք նաև, որ բացի հայերից կազայի էթնիկ տարրերն էին թուրքերը և հույները, որոնք կազմում էին բնակչության ավելի քիչ տոկոսը:

Բ. ԱՆԴՐԵԱՍԻ ԳԱՎԱՌԱԿ

Անդրեասի կազան Շաբին Կարահիսարի սանջակի հարավարևմտյան գավառակն էր, հյուսիսից սահմանակից էր Շաբին Կարահիսարի կազային, հարավից՝ Սեբաստիայի սանջակին, արևմուտքից՝ Թոխաթի կազային, արևելքից՝ Էրզրումի վիլայեթին: Վերջինս իրենից ներկայացնում էր մի կողմից խայտաբղետ ժողովրդագրական պատկերով, մյուս կողմից հայաշատ մի կազա:

Հայկական գյուղերը տեղաբաշխված էին Շաբին Կարահիսար քաղաքից մոտ 30 կմ հարավ-արևմուտք, Աշխարհ-Օվա կոչվող հարթավայրում: Այստեղ էին գտնվում Անդրեաս, Այծպտեր[312], Ուրքանոս, նահիեները[313]: Քաղաքի հարավային և հարավ-արևելյան մասում էին գտնվում Աղվանիս և Արղավիս նահիեները:

Այս նահիեներից կարևորագույնը Անդրեասի նահիեն էր, ուր տեղավորված էր հայկական գյուղերի մեծագույն մասը: Հայերը բնակվում էին շուրջ մի շարք խոշոր գյուղերում: Ընդհանուր մանր գյուղերն էլ հաշված՝ հայաբնակ գյուղերի թիվը հասնում էր շուրջ երեք տասնյակի: 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի այստեղի բնակչության վերաբերյալ աղբյուրների հաղորդած վիճակագրական տվյալները բավական տարբեր են:

---

[311] Quinet Vital. նշվ. աշխ., էջ 790:

[312] Այծպտերն իր հերթին բաժանված էր Վերի և Վարի Այծպտերի:

[313] ՀՀ ԱԱ. ֆ. 476, ց. 1, գ. 1041. թ 45.

Այսպես, օրինակ 1870-ական թթ. սկզբի Անդրեասի կազայի վերաբերյալ հետևյալ վիճակագրությունն է ներկայացնում Շաբին Կարսհիսարի առաջնորդարանը[314],

Աղյուսակ 5

գյուղ	տուն (հայ)	տուն (թուրք)
Անդրեաս /Սուշեհրի/	160	60
Սիս	35	25
Բուրգ	120	
Մշակնոց	80	
Կթանոց	35	25
Գոմեշտուն	20	2
Աբանա	30	15
Արղավիս	55	2
Վարի Այծպտեր	80	40
Վերի Այծպտեր	123	40
Ալամոնիկ	20	
Աղվանիս	40	20
Սևենտիք	23	
Դմլուճ	10	20
Ենի Գյուղ (Քյոյ)	13	
Աֆսունտու	10	25
Ընդամենը	854	274

1870-ական թթ. վերջի համար արդեն այլ վիճակագրական տեղեկություններ են հաղորդում հայկական աղբյուրները[315]:

Ըստ այդ աղբյուրների՝ 1878թ. Անդրեասի կազայի ժողովրդագրական պատկերը հետևյալ էր.

Աղյուսակ 6

գյուղ	տուն հայ	բնակիչ	բնակիչ թուրք
Անդրեաս	210	1898	400
Սիս	60	540	
Բուրգ	30	1170	
Մշակնոց	100	909	
Կրթանոց	56	500	150

[314] «Համարատվութիւն Ազգային կենդրոնական վարչութեան 1872-1873 Ամի Առ Ազգային ընհանուր ժողովն» Կ. Պոլիս, 1874, էջ 51-52:

[315] Սրվանձտյանց Գ., Երկեր, հ. Բ, էջ 162-165, տես նաև Աղանեան Գ., նշվ. աշխ., էջ 530, տես նույնը ԳԱԹ, Գարեգին Սրվանձտյանցի ֆոնդ, բաժին 1, գ. 18, թ. 2-5, տես նաև ՀՀ ԱԱ, ֆ. 476, ց. 1, գ. 232, թ. 49, ֆ. 476, ց. 1, գ. 249, թ. 27, ֆ. 476, ց. 1, գ. 278, թ. 67, ֆ. 476, ց. 1, գ. 938, թ. 95, ֆ. 476, ց. 1, գ. 799, թ 76, ֆ. 476, ց. 1, գ. 794, թ. 21:

Գոմեշտուն	14	128	21
Աբանա	29	298	200
Դմլուճ	8	70	160
Աֆսունտու	10	102	100
Սևենտիք	28	235	
Վերին Այծպտեր	180	1996	300
Վարի Այծպտեր	130	1200	300
Այամոնիկ	32	288	
Աղրավիս	45	480	75
Ղուաճ	15	235	
Յուսուֆ Բեյի Չիֆթլիկ	3	108	40
Աղվանիս	70	630	130
Տիշքոյիվ	3	15	50
Տեմիրճիլիկ	7	26	-
Լթառիճ	3	14	-
Մահմադ	25	225	113
Ընդամենը	1055	11052	1989

Նկատելի է, որ այս 2 վիճակագրությունների մեջ կան էական տարբերություններ: Նախ նշենք, որ առաջին վիճակագրության մեջ բացակայում են որոշ գյուղեր, ինչպես օրինակ Յուսուֆ Բեյի Չիֆթլիկը, Ղուաճը, Տիշքոյիվը, Լթառիճը, Մահմադը:

Երկու վիճակագրությունների մեջ կան էական տարբերություններ նաև կապված բնակչության թվաքանակի հետ: Օրինակ, Անդրեասը, որը նաև նահիեի կենտրոն էր, ըստ 1872-1873թթ. վիճակագրության, ուներ 160 տուն, իսկ ըստ 1878թ. 210 տուն կամ 1898 շունչ բնակիչ:

Մեր կարծիքով 1878թ. վիճակագրությունն ավելի մոտ է ճշմարտությանը: Նախ այն պատճառով, որ Անդրեասը նահիեի կենտրոն էր և նրան ավելի բնորոշ էր բնակչության այդպիսի բազմամարդությունը: 1872-1873թթ. մինչև 1878թ. հնարավոր չէ, որ բնակչության աճը կազմած լիներ 50 տուն, իսկ այդ տարիներին բնակչության նոր ներհոսք չի արձանագրվել: Երկրորդ վիճակագրությունը ներկայացված է Գ. Սրվանձտյանցի կողմից, որն անձամբ էր եղել այդ վայրերում: Այս ամենի հետ մեկտեղ երկրորդ վիճակագրությունում բացակայում է Համամ գյուղը: Վիճահարույց են նաև երկրորդ վիճակագրության մեջ Տիշքոյիվ, Տեմիճիլիկ, Լթառիճ, Մահմադ գյուղերի հայ ազգաբնակչության թվերը, քանի որ յուրաքանչյուր տան համար շնչերի միջին թիվը կազմում է 4-5 շունչ: Եթե յուրքանչյուր տան համար շնչերի միջին թիվը վերցնելու լինենք 8 շունչ, ապա Տիշքոյիվն ուներ 24, Տեմիրիլիկը՝ 56, Լթառիճը՝ 24, Մահմադը՝ 200 հայ բնակիչ:

Այս կազայում 1880-ական թթ. նկատվել են մի շարք ժողովրդագրական տեղաշարժեր:

Երզնկայի զինվորական իշխանությունն ամեն տարի սովորություն էր դարձրել տեղի բանակի մի մասը ուղարկել Գարահիսար՝ ձմեռելու համար: 1882թ. ևս 300-400 հեծյալ բնակություն հաստատեցին Բուրգ, Աղրավիս, Կթանոց, Գոմեշտուն գյուղերում[315]:

Նույն ժամանակ Անդրեաս էին տեղափոխվել շուրջ 200 տուն կարսեցի գաղթականներ, որոնք հավանաբար եղել են մահմեդականներ: Այս մասին է խոսում Անդրեասից գրված մի նամակ[316], որում մասնավորապես ասված էր. «Սրանից 15 օր առաջ Գարահիսարից այստեղ եկող 200 տան չափ կարսեցի գաղթականներ գյուղի մեջ օթևանեցին Սեբաստիա մեկնելու պայմանով: Այս գաղթականները, դեռ այստեղ չհասած, Գայմագամին խնդրել էին իրենց փոխադրման համար սայլեր և ձիեր տրամադրել: Այս գաղթականները պատուհաս դարձան խեղճ հայ ժողովրդի գլխին»:

Բնակչության այս ներհոսքի հետևանքով մահմեդական բնակչությունը որոշ չափով աճեց: Սակայն նախքան 1895թ. կոտորածը կազայում հայ բնակչության որոշակի աճ արձանագրվեց:

Հետևյալ ցուցակն է բերվում վերոհիշյալ վիճակագրության[317] մեջ:

Աղյուսակ 7

գյուղ	տուն	շունչ
Անդրեաս	500	3600
Սիս	120	900
Բուրգ	400	2400
Մշակնոց	65	720
Կթանոց	60	750
Գոմեշտուն	15	56
Աբանա	80	640
Արղավիս	200	1600
Ծարի Այծպտեր	150	956
Ծերի Այծպտեր	140	900
Աղվանիս	150	1200
Ալամոնիկ	30	240
Սևենտիք	80	700
Դմլուճ	30	-
Ենի գյուղ	35	280
Աֆսունտու	100	-
Չիֆթլիկ	70	500
Ղուաճ	15	120
Համամ	8	60

[315] Մասիս, Կ.Պոլիս, 1882, փետրվարի 4:
[316] Նույն տեղում, սեպտեմբերի 16:
[317] Հայկազ Ա., նշվ. աշխ., նույն տեղում:

Ընդամենը	2248	15622

Դմլուճ և Աֆսունտու գյուղերի ծխերի միջին թիվը եթե ընդունելու լինենք 8 անձ, ապա ստացվում է, որ Աֆսունտուն ուներ 800 շունչ հայ բնակիչ, իսկ Դմլուճը՝ 240 շունչ:

Մինչև 1895թ. ջարդերը կազայի ժողովրդագրական պատկերի վերաբերյալ մեկ այլ հայ հեղինակ[318] այլ վիճակագրություն է ներկայացնում.

Աղյուսակ 8

գյուղ	տուն (հայ)	տուն թուրք և այլ մահմեդ.
Անդրեաս	500	-
Սիս	300	100 (թուրք)
Սևենտիք	250	-
Դմլուճ	80	-
Աֆսունտու	100	100
Ապանա	150	-
Աղվանիս	100	50
Այծպտեր[319]	800	-
Ենի Քյոյ (գյուղ)	20	7
Մշակնոց	350	-
Բուրգ	450	-
Ղուաճ	250	-
Ալամոնիկ	300	-
Գոմեշտուն	75	-
Կթանոց	200	100
Ընդամենը	3925	357 (Հաշվարկն իմն է - Ա.Ս.)

Մի շարք հանգամանքներից ելնելով՝ երկու վիճակագրություններից ճշմարտությանն ավելի մոտ ենք համարում առաջինը: Նախ երկրորդ վիճակագրությունում թերի է ներկայացված գյուղերի ցանկը: Նույն տեղում ուռճացված է որոշ գյուղերի տների թվաքանակը: Հավանաբար դրանց տակ հեղինակը նկատի է ունեցել շնչերի քանակը: Օրինակ, եթե համեմատում ենք 2 վիճակագրություններում տեղ գտած Ալամոնիկ գյուղի տվյալները, ապա նկատելի է, որ եթե առաջին վիճակագրությունում հեղինակը ցույց է

[318] Տեվլեթեան Ս., Հուշեր Շապին Գարահիսարէն, Փարիզ, 1954, էջ 27-30:
[319] Նախքան 1895թ. ջարդերը Վ.Այծպտերը միացած էր Ն.Այծպտերին (տես նշվ. աշխ., նույն տեղում):

կարծիքով՝ այս փոքր գյուղը դժվար թե ունենար այդքան բնակիչ: Նույնը կարելի է նկատել նաև Գոմեշտուն փոքր գյուղի օրինակով:

Այսպիսով, եթե առաջին վիճակագրությունը ընդունում ենք ճշմարտությանը մոտ, ապա նախքան համիդեական կոտորածները Անդրեասի կազան ուներ մոտ 2248 տուն, 15622 շունչ հայ բնակչություն: Սակայն այս թվերը ևս մոտավոր են: Թեև այս վիճակագրությունն ավելի համալրված է գյուղերի ցանկով, այնուամենայնիվ, նրանում բացակայում է Տեմիճիլիկ, Լթառիճ, Տիշքյոյիվ, Մահմադ գյուղերը:

Այս հոծ զանգված հայությունը, ցավոք, շուտով ենթարկվեց կոտորածի, որից հատկապես տուժեցին Սուշեհրի կազայի Անդրեաս (էնտիրես), Այծպտեր նահիեները[321]: Թուրքերն այրեցին Անդրեասի եկեղեցին, որտեղ ապավինած էին ծերեր, կանայք և երեխաներ[322]:

Անդրեասում, Մշակնոցում, Այծպտերում, Սիսում, Բուրգում թուրքերը բնաջնջեցին բնակչության մոտ 50%-ը[323]:

Սակայն այդ ժամանակ ևս խոսեց հայ ժողովրդի մաքառող ոգին: Դա երևում է Բուրգ գյուղի օրինակով: 1895թ. գյուղացիները Դանիել Չավուշի[324] գլխավորությամբ դիմադրության անցան, որի շնորհիվ զոհերի թիվը համեմատաբար փոքր եղավ:

Եվ այն, որ կազայում 20-րդ դարում հայ ժողովուրդը շարունակում էր գոյատևել և բավական մեծ թիվ կազմել, երևում է մի շարք վիճակագրություններից, որոնք վերաբերում են նախապատերազմական շրջանին:

Դրանցից Կարապետ Գաբիկյանի տվյալները[325] ներկայացնում ենք ստորև.

---

321 ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի արխիվ, Լեոյի անձնական ֆոնդ 1, ց. 1, գ. 153, թ. 5:
322 ՀՀ ԱԱ, ֆ. 193, ց. 1, գ. 130, թ. 1 շրջ.:
323 Համբարձումեան Վ., նշվ. աշխ., էջ 207:
324 Տեռվլեթեան Ս., նշվ. աշխ., էջ 32:
325 Գաբիկեան Կ., նշվ. աշխ., նույն տեղում:

գյուղ	տուն	շունչ
Անդրեաս	500	4000
Սիս	200	1600
Բուրգ	300	2400
Մշակնոց	60	480
Կթանոց	60	480
Վերի Այծպտեր և Խյուրտյուկ	300	2400
Վարի Այծպտեր	250	2000
Ղրաճ	15	120
Արղավիս	200	1600
Աղվանիս	150	1200
Համամ	8	64
Ալամոնիկ	30	240
Աբանա	80	640
Սևենտիք	25	200
Դմլուճ	40	320
Ենի Գյուղ	25	200
Ընդամենը	2243	17944

Ըստ այդ վիճակագրության հայ բնակչության թիվը կազմում էր 17944 մարդ: Մեկ այլ վիճակագրություն իր աշխատության մեջ ներկայացնում է Թեոդիկը[325], որի համաձայն կազայի ժողովրդագրական պատկերը նախքան առաջին համաշխարհային պատերազմը հետևյալն էր.

[325] Թեոդիկ, նշվ. աշխ., էջ 143-147:

Աղյուսակ 10

գյուղ	հայ տուն
Անդրեաս	420 (2750 լուսավորչական, 50 բողոքական շունչ)
Մշակնոց	128
Բուրգ	400
Սիս	90
Կթանոց	78
Գոմեշտուն	18
Պալատիզ	4
Քեչելի	15
Չիֆթլիկ	15
Յուզենկի	4
Չամլճա	5
Թանտրճգ	6
Ղավալ	22
Վերի Ենի գյուղ	50
Վարի Այծպտեր	140
Արղավիս	160
Ղրաճ	20
Ընդամենը	1575

Աղյուսակ 11

գյուղ	տուն (հայ)	տուն (թուրք)
Ալամոնիկ	50	-
Խյուրտյուկ	20	-
Սևենտիք	40	-
Ավսունտու	25	25
Ապանա	40	15
Համամ	25	-
Աղվանիս	75	-
Չոգրախ	15	-
Ընդամենը	290	40

Նույն ժամանակահատվածի համար վիճակագրություն են կազմել նաև Ռայմոնդ (Հարություն) Գևորգյանը և Փաուլ Փաբուջյանը[327]:

Կազայի հայաշատ գյուղերը հետևյալներն են.

[327] Kevorkian R.H., Paboudjian P.B., նշվ. աշխ., էջ 249:

Աղյուսակ 12

գյուղ	հայ տուն	բնակիչ	թուրք բնակիչ
Սիս	109	785	425
Բուրգ	304	1716	-
Մշակնոց	167	844	-
Կթանոց	78	325	190
Ալամոնիկ	-	219	-
Այծպտեր (Խյուրտյուկ)	-	352	-
Ղուաճ	-	104	-
Սևենտիք	61	375	-
Վերին Այծպտեր	-	1614	-
Վարի Այծպտեր	-	875	-
Ապանա	50	444	-
Ենի գյուղ	-	214	-
Դմլուճ	20	173	-
Աղվանիս	-	700	-
Գոմեշտուն	-	107	-
Բեյ Չիֆթլիկ	-	76	-
Արղավիս	-	923	-
Ավսունտու	-	126	-
Համամ	-	197	-
Ընդամենը	789	10169	615

Այսպիսով, համեմատելով 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին հեղինակների և աղբյուրների գյուղացուցակները, կարող ենք եզրակացնել, որ հայերն Անդրեասի կազայում բնակվում էին հիմնականում հետևյալ խոշոր գյուղերում. Անդրեաս, Սիս, Բուրգ, Մշակնոց, Կթանոց, Գոմեշտուն, Աբանա, Դմլուճ, Աֆսունտու, Սևենտիք, Վերի Այծպտեր, Վարի Այծպտեր, Ալամոնիկ, Տիշքյոիվ, Լթառիճ, Մահմադ, Արղավիս, Ղուաճ, Յուսուֆ Բեյի Չիֆտլիկ, Աղվանիս, Ենի Գյուղ, Պալատիզ, Քեչելի, Յուզենկի, Չամլճա, Ղավալ, Խյուրտյուկ, Չոգրախ:

Բացի վերոհիշյալ գյուղերից գոյություն ունեին նաև այլ հայաբնակ գյուղեր: Ըստ վերջին աղբյուրի՝ ընդհանուր թիվը հասնում էր 35-ի, իսկ ընդհանուր հայ բնակչության ընդհանուր թիվը կազմում էր 13430 շունչ[327]:

[327] Տե՛ս նշվ. աշխ., նույն տեղում:

Ըստ օտար այլ աղբյուրների՝ նույն ժամանակ կազայում բնակվող հայ բնակչության թիվը՝ 11337[329] կամ 11240[330] մարդ: Նույն աղբյուրների հավաստմամբ կազայում բնակվող հույները կազմում էին 2040, իսկ մահմեդականները՝ 22871 մարդ[331]:

Մեր կարծիքով այս վիճակագրություններից Կ.Գաբիկյանինը այնքան էլ մոտ չէ ճշմարտության: Նախ՝ նա չի ներառել կազայի բոլոր գյուղերը, իսկ եղած գյուղերի բնակչության համար 17944 հոգի տվյալը փոքր-ինչ ուռճացված է, իսկ Թեոդիկի ներկայացրած վիճակագրության մեջ թեև գյուղերի ցուցակներն ավելի լրացված ձևով էին ներկայացված, սակայն դրանց մեջ ներկայացված են միայն տները: Օտար աղբյուրները հիմնված են հիմնականում թուրքական սալնամեների վրա և այդ պատճառով հայ բնակչության թիվը նվազեցված է: Այդ պատճառով իրականությանն ավելի մոտ ենք համարում, այն մոտեցումը, ըստ որի նախքան առաջին համաշխարհային պատերազմը կազան ուներ 13430 հայ շունչ բնակչություն:

Այսպիսով, ամփոփելով նշենք, որ Անդրեասը 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին հանդիսանում էր Շաբին Կարահիսարի հարավարևմտյան գավառակը, և բնակչության կազմի մեջ էին մտնում հայերը, որոնք բնակվում էին շուրջ երկու տասնյակ գյուղերում: Որոշ վիճակագրական տվյալներ ցույց են տալիս, որ նրանց թիվը մեծ է եղել ինչպես 1870-ական թթ., այնպես էլ Մեծ եղեռնի նախօրյակին: 1894-1896թթ. կոտորածի հետևանքով այդ հայկական գյուղերում տեղ գտան ժողովրդագրական տեղաշարժեր, և հայ բնակչության թիվը զգալիորեն նվազեց:

Բացի հայերից բնակչության կազմի մեջ էին մտնում նաև թուրքերը, որոնք իրենց թվով կազմում էին բնակչության ավելի փոքր տոկոսը:

---

[329] Justin Mac Carthy, նշվ. աշխ., նույն տեղում:
[330] Kemal H. Karpat, նշվ.աշխ., նույն տեղում, p. 119:
[331] Տես նույն տեղում:

2. ՇԱԲԻՆ ԿԱՐԱՀԻՍԱՐԻ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՎ ՀՅՈՒՍԻՍԱՐԵՎՄՏՅԱՆ ԳԱՎԱՌԱԿՆԵՐ

ա. ԿՈՅԼՈՒՀԻՍԱՐ ԵՎ ԱԼՈՒՋԱ ԳԱՎԱՌԱԿՆԵՐ

Կոյլուհիսարը հանդիսանում էր Շաբին Կարահիսարի սանջակի արևմտյան կազան: Այն հյուսիսից սահմանակից էր Համիդիե (Ալուջրա) կազային, արևմուտքից՝ Թոխաթի, արևելքից՝ Շաբին Կարահիսարի սանջակներին:

Կոյլուհիսար կազան՝ պատմական Գոլոնիան, խնդրո ուսումնասիրության ժամանակահատվածում բաղկացած էր 65 գյուղերից, որոնք ընդգրկված էին Նայիպլի և Սիս-Օրթա նահիեներում[332]:

Այս կազայի մասին տեղեկությունները շատ սակավաթիվ են: Հայտնի է միայն, որ այս 65 գյուղերից, Մշաղը կամ Մուշաղը զուտ հայաբնակ էր և նախքան Մեծ եղեռնը բաղկացած էր 25 տնից կամ 175 անձից[333]: Վերջիններս տեղավորված էին անտառոտ և կանաչախիտ վայրում և հայտնի էին իրենց այծաբուծությամբ և ոչխարաբուծությամբ և ունեին Սուրբ Աստվածածին[334] եկեղեցին:

Ալուջան Շաբին Կարահիսարի սանջակի հյուսիսարևմտյան կազան էր: Այն սահմանակից էր հյուսիսից Տրապիզոնի վիլայեթին, հարավից և արևելքից՝ Կոյլուհիսարի կազային, արևմուտքից՝ Թոխաթի սանջակին:

Վերջինիս մասին ևս տեղեկությունները սակավաթիվ են:

Ալուջա կազայում 20-րդ դարի սկզբին հայաշատ էին համարվում կազայի կենտրոն Համիդիե քաղաքը և զուտ հայաբնակ համարվող Մելիտ[335] (Մեսուտիե) գյուղը:

Կազայի համանուն քաղաքում 20-րդ դարի սկզբին հայերի թիվը կազմում էր 60-70 տուն[336], և եթե ընդունենք, որ յուրաքանչյուր տան համար բնակիչների հավանական թիվը կազմում էր 8 շունչ, ապա ստացվում է, որ քաղաքում բնակվում էր շուրջ 500 շունչ հայ բնակչություն:

Մյուս խոշոր կենտրոնը հանդիսանում էր Մելիտ (Մեսուդիե) զուտ հայաբնակ գյուղը, ուր նույն ժամանակահատվածում բնակվում էին 70 տուն հայեր[337]:

Եթե այս գյուղի բնակչության թվաքանակը հաշվարկենք նույն սկզբունքով, ապա ստացվում է, որ այստեղ ևս բնակվում էր 500 հայ:

---

[332] Տեվլեթեան Ս., նշվ. աշխ., էջ 32-33:
[333] Հայկազեան հայագիտական հանդէս, հ. ԺԵ, Պեյրութ, 1995, էջ 515:
[334] Kevorkian R.H., Paboudjian P.B., նշվ. աշխ., էջ 281:
[335] Տե՛ս նշվ. աշխ., նույն տեղում:
[336] Տեվլեթեան Ս., նշվ. աշխ., էջ 30:

[337] Kevorkian R.H., Paboudjian P.B., նշվ. աշխ., նույն տեղում:

Այսպիսով, ստացվում է, որ նախքան առաջին համաշխարհային պատերազմը կազայում բնակվում էր շուրջ 1000 հայ բնակիչ:

Փաստորեն երկու վերոհիշյալ կազաների հայ բնակչության թիվը այդ ժամանակ կազմում էր մոտ 2 հազար մարդ:

Ալուջայի կազայում բնակչության մեջ մեծ թիվ էին կազմում թուրք, հույն և այլ էթնիկ տարրերը: Նրանց թիվը մեծ էր հատկապես Գյումուշխանեի և Մինթովալ նահիեներում:

Ահա թե ինչ է վկայում Ս.Տեովլեթյանը Գյումուշխանեի վերաբերյալ. «Կյումուշխանէ վրայ չեմ ուզեր ծանրանալ, որովհետեւ տեղւոյն բնակչութեան մէկ մեծ մասը Յոյներէ և Թուրքերէ կը բաղկանայ և ժամանակին ցանցառ թուով հայեր միայն կային շրջանին մէջ...»[338]: Վերջիններս հոծ զանգվածով հաստատված էին Շաբին Կարահիսար և Անդրեասի կազաներում, ավելի քիչ՝ Կոյլուհիսարում և Ալուջայում: Նրանց թիվը կարող էր շատ ավելի մեծ լիներ, եթե չլինեին 1894-1896թթ. կոտորածները, որոնց հետևանքով գավառակները կորցրեցին իրենց բնակչության զգալի հատվածը:

Ամփոփելով այս կազաների մասին մեր խոսքը՝ նշենք, որ սրանք ևս հայկական օջախներ էին, իսկ էթնիկ այլ տարրերից մեծ թիվ էին կազմում թուրքերը և հույները:

Փաստորեն, ընդհանուր հայ բնակչության թիվը ողջ Շաբին Կարահիսարի սանջակում նախքան մեծ եղեռնը կազմում էր 34637 մարդ:

---

[338] Տեովլեթեան Ս., նշվ. աշխ., էջ 32:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
ՍԵԲԱՍՏԻԱՅԻ ՆԱՀԱՆԳԻ ՀՅՈՒՍԻՍԱՐԵՎՄՏՅԱՆ ԳԱՎԱՌՆԵՐԻ ՎԱՐՉԱԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ 19-ՐԴ ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ԵՎ 20-ՐԴ ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

1. ԹՈԽԱԹԻ (ԵՎԴՈԿԻԱՅԻ, ԹՈՔԱԹԻ) ԳԱՎԱՌ

Ի. ԹՈԽԱԹԻ ԳԱՎԱՌԱԿ

Թոխաթի գավառը, լինելով Սեբաստիայի վիլայեթի հյուսիսարևմտյան սանջակներից մեկը, հյուսիսից սահմանակից էր Տրապիզոնի, հարավից Անգորայի վիլայեթներին, արևելքից՝ Շաբին Կարահիսարի, արևմուտքից՝ Ամասիայի սանջակներին:

Թոխաթի սանջակը 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին բաժանված էր Թոխաթի (Եվդոկիա) Նիքսարի, Հերեքի (Արպաա, Էրպաա), Զիլեի կազաների[339]:

Թոխաթի սանջակի, ինչպես նաև համանուն կազայի կենտրոնն էր համանուն քաղաքը:

19-րդ դարի 70-ական թթ. վերջին Թոխաթ քաղաքն ուներ խայտաբղետ ժողովրդագրական պատկեր:

1878թ. քաղաք այցելած Գ.Սրվանձտյանցը հետևյալ կերպ է ներկայացնում բնակչությունը. հայեր՝ 8819 մարդ, որից 1579-ը կաթոլիկ և բողոքական, հույներ և «հայ-հոռոմք»՝ 2600 մարդ, հրեաներ՝ 906 մարդ, թուրքեր՝ 10500 մարդ[340]: «Հայ-հոռոմք» հավաքական անվան տակ հեղինակը նկատի է ունեցել քաղկեդոնականություն ընդունած հայ ազգաբնակչությանը: Նրանք 19-րդ դարի վերջին որոշ թվով բնակություն էին հաստատել նաև Թոխաթի սանջակի այլ գյուղերում: 1878թ. դրությամբ Թոխաթի սանջակում նրանց թիվը կազմում էր 170 տուն /1514 շունչ/, որից 714 շունչն արական սեռի ներկայացուցիչ էին, 800-ը՝ իգական[341]: Սրվանձտյանցը նշում էր, որ նրանք խոսում էին , կարդում և գրում հայերեն[342]:

1870-ական թթ. Թոխաթի վերաբերյալ իր աշխատության մեջ այլ տվյալներ է ներկայացնում Անդրեաս Աղեքսանդրյանը, ըստ որի թուրքերը կազմում էին 2500 տուն, 15000 անձ, հայերը՝ 1800 տուն, 10800 շունչ.

---

[339] Ալպոյաճեան Ա., Պատմութիւն Եվդոկիոյ հայոց, Գահիրէ, 1952, էջ 434, տես նույնը «Հայկազեան հայագիտական հանդէս», հ. ԺԵ, Պեյրութ, 1995, էջ 511, տես նաև Աղեքսանդրեան Ա., նշվ.աշխ., էջ 348, տես նաև Гиппиус А.И., Статистические таблицы вилайетов Турецкой империи ближайщих к Закавказью, Тифлис, 1889, стр. 9.

[340] Սրվանձտյանց Գ., Երկեր, հ. Բ, Երևան, 1982, էջ 229, տես նաև ԳԱԹ, Թորոս Ազատյանի ֆոնդ, բաժին 12, գ. 10522, թ. 3:

[341] Սրվանձտյանց Գ., նշվ. աշխ., նույն տեղում:

[342] Տես նույն տեղում:

հույները 300 տուն, 1800 մարդ, հրեաները 220 տուն, 1300 շունչ[343]: Ընդ որում հայերից 200 տունը կամ 1200 շունչը կազմում էին կաթոլիկ հայերը: Ընդհանուր քաղաքի բնակչությունը կազմում էր 4820 տուն (28900 շունչ):

Այս երկու վիճակագրություններում էլ հեղինակները մեր կարծիքով թուրքերի անվան տակ միավորել են նաև այլ մահմեդական տարրերին, քանի որ ինչպես ողջ սանջակում, այնպես էլ Թոխաթ քաղաքում բացի թուրքերից բնակվում էին նաև բավականին թվով այլ մահմեդականներ:

Համեմատելով այս երկու վիճակագրությունները մենք ընդունում ենք, որ 1870-ական թթ. քաղաքում բնակվում էին շուրջ 10000 հայեր, շուրջ 2000 հույներ, շուրջ 1000 հրեաներ:

1906-1907թթ., Թոխաթի ազգային վարժարանի աշակերտների համար պատրաստված ամփոփ տեղեկագրի համաձայն, Թոխաթն ուներ 40 հազար բնակչություն, որից 29 հազարը՝ մահմեդական (թուրք, չերքեզ և այլն), 8 հազարը՝ հայ առաքելական, 1000 հայ կաթոլիկ, 50 բողոքական[344], 1000 հույն: Այսինքն ընդհանուր հայ բնակչության թիվը կազմում էր 9050 շունչ:

Այստեղ ապրում էին նաև բոշաներ (գնչուներ), որոնք հաստատվել էին այստեղ դեռևս 19-րդ դարի վերջին: 1890թ. դրությամբ Ամասիայում, Մարզվանում, Թոխաթում բնակվում էին 7000 բոշաներ, որոնք լուսավորչական քրիստոնյաներ էին[345]:

Բողոքականությունը քաղաքում տարածվել էր 19-րդ դարի կեսերին: Այդ մասին իր աշխատության մեջ նշում է եվրոպացի հեղինակ Հենրի Վան Լեննեփը, որին 1860թ. Թոխաթից Նիքսար քաղաք ուղևորության ժամանակ ուղեկցել է մի հայ բողոքական[346]:

Մինչև 1915թ., ըստ մի վիճակագրության, հայ բնակչության թիվը հասնում էր 11980 շնչի[347] (այսինքն շուրջ 12000 շունչ): Մ.Ծոցիկյանի հաղորդած տվյալների համաձայն 1914թ. քաղաքն ուներ 50 հազար բնակիչ, որից 14000-ը հայեր էին[348]:

Այսպիսով, 1906-1907թթ. հայ բնակչության թիվը կազմել է շուրջ 9000 մարդ, ապա նախքան եղեռնը բնակչության թիվը հասել է 12000-ից մինչև 14000-ի:

Բացի այս հայաշատ կենտրոնից կազմում հայերը տեղավորված էին նաև մի շարք գյուղերում, որոնք ներառված էին համապատասխան նահիեներում:

---

[343] Աղեքսանդրեան Ա., նշվ.աշխ., էջ 347:

[344] Ալպոյաճեան Ա., Պատմութիւն Եվդոկիոյ հայոց, Գահիրէ, 1952, էջ 435:

[345] «Թուրքիայի հայերն և իրենց դրացիներ», Սարսէլ, 1890, էջ 16:

[346] Henry J. Van Lennep, Travels in Little known parts of Asia Minor, Vol. I, London, 1870, p. 322.

[347] Kevorkian R.H., Paboudjian P.B., նույն տեղում:

[348] Ծոցիկյան Մ., նշվ.աշխ., էջ 184:

Կազայի հարավարևելյան մասում՝ Արթ-Օվա դաշտի մեջ էր տարածված հայկական գյուղերի մի մասը: Այս դաշտավայրն իր մեջ ներառում էր 2 նահիե Չիֆթլիկը և Գըզլճան[349]: Նահիեների գյուղերից վեցը զուտ հայաբնակ էին:

Դրանցից Չիֆթլիկը, որը համանուն նահիեի կենտրոն էր, 1878թ., ըստ Գ.Սրվանձտյանցի հաղորդած տվյալների, ուներ 39 տուն կամ 326 հայ բնակիչ[350]:

Նույն թիվն է հիշատակում Ս.Էփրիկյանը[351] սակայն այն ներկայացնելով իբրև 1897թ. տվյալ: Հավանաբար հեղինակի բերած այս հաղորդումը վերցված է հենց Սրվանձտյանցի աշխատությունից:

20-րդ դարի սկզբին Չիֆթլիկը շարունակում էր պահպանել իր հայեցի դիմագիծը: Նախքան 1915թ. այն, ըստ մի փաստաթղթի, ուներ 400 տուն 1650 մարդ բնակիչ[352]: Կ.Գաբիկյանի մոտ այդ թիվը հասնում է մինչև 400 տան և 3200 անձի[353]:

Նկատելի է, որ երկու տեղում էլ հայ բնակչության թիվը նշված է 400 տուն, որը համապատասխանում է իրականությանը:

Եվ եթե յուրաքանչյուր տան համար ընդունենենք միջինը 8 շունչ, ստացվում է, որ գյուղի բնակչությունը կազմում էր շուրջ 3200 մարդ: Եվ փաստորեն Կ.Գաբիկյանի տվյալը ընդունելի է նաև մեզ համար:

Այս նահիեներում գտնվող հաջորդ զուտ հայաբնակ գյուղը Պոլիսն էր: Այն դեռ 1863թ. դեկտեմբերի 31-ի վիճակագրության համաձայն ուներ 128 այր բնակիչ[354]:

1878թ. Գ Սրվանձտյանցի հաղորդած տվյալով հայերի թիվը կազմում էր 200 շունչ[355]:

20-րդ դարի սկզբին գյուղի բնակչությունն ավելացավ բնական աճի շնորհիվ: Ա.Աղեքսանդրյանի հաղորդած տվյալների համաձայն 1911թ. դրությամբ այն ուներ 35 տուն 300 շունչ բնակիչ[356]:

Նախքան Մեծ եղեռնը նույն թիվն են հաշվում նաև Փ.Փափուջյանը և Ռ.Գևորգյանը 300 մարդ[357]:

Նույն ժամանակաշրջանի վերաբերյալ Կ.Գաբիկյանը գյուղի բնակչությունը տեսնում է 300 տուն կամ 2400 շունչ[358], որը, մեր կարծիքով, համապատասխանում է իրականությանը:

---

[349] Ալպոյաճեան Ա., նշվ.աշխ., էջ 507:
[350] Սրվանձտյանց Գ., նշվ.աշխ., տես նույնը ԳԱԹ, նույն տեղում:
[351] Էփրիկեան Ս., նշվ.աշխ., էջ 748:
[352] ՀՀ ԱԱ, ֆ. 476, g. 1, գ. 144, թ. 19:
[353] Գաբիկեան Կ., նշվ.աշխ., էջ 602:
[354] Ալպոյաճեան Ա., նշվ.աշխ., էջ 509:
[355] Սրվանձտյանց Գ., նշվ աշխ., էջ 230, տես նույնը ԳԱԹ, Թորոս Ազատյանի ֆոնդ. նույն տեղում:
[356] Աղեքսանդրեան Ա., նշվ.աշխ., էջ 351:
[357] Kevorkian R.H., Paboudjian P.B., նշվ.աշխ., նուն տեղում:
[358] Գաբիկեան Կ., նշվ.աշխ., նույն տեղում:

Այս բնակավայրերի շարքում հաջորդ գյուղը Գետաղազն էր, ուր 1878թ. բնակվում էր 308 շունչ[358]: 1897թ. համար նույն տվյալն է հաղորդում Ս.Էփրիկյանը[359]:

Մեր կարծիքով, 20 տարվա ընթացքում հայ բնակչության թիվը չէր կարող մնալ նույն քանակությամբ: Այն բնական աճի կամ ներհոսքի պատճառով կամ պետք է ավելացած լիներ, կամ էլ 1895-1896թթ. կոտորածների և արտագաղթի հետևանքով նվազած լիներ: Կարող ենք եզրակացնել, որ Էփրիկյանի տվյալը, թեև բերված է 1897թ. վիճակով, բայց այն վերաբերում է 1878թ., այսինքն հեղինակը օգտվել է Գ. Սրվանձտյանցի աշխատությունից:

Այսպիսով, 20-րդ դարի նախաշեմին գյուղն ուներ մոտ 300 շունչ հայ բնակչություն:

Քարվանսարա գյուղում 1863թ. դեկտեմբերի 31-ի վիճակագրության համաձայն կար 146 այր բնակիչ[360], իսկ 20-րդ դարի նախաշեմին 56-60 տուն հայ բնակչություն[361]: Եթե յուրաքանչյուր տան համար միջին շնչերի թվաքանակը ընդունենք 8 շունչ, ապա ստացվում է, որ 19-րդ դարի վերջին այնտեղ հաշվվում էր մոտ 500 հայ բնակչություն:

Յաթմիշ գյուղում, 1863թ. դեկտեմբերի 31-ի վիճակագրության համաձայն, արական բնակչության թիվը կազմում էր 173 մարդ[362]: 1878թ. համար Գ.Սրվանձտյանցը ցույց է տալիս 374 շունչ հայ բնակիչ[363]:

Թախքըպա գյուղը նույն 1863թ. վիճակագրության համաձայն, ուներ 99 շունչ այր բնակչություն[364], իսկ 1878թ. գյուղի բնակչության թիվը հասավ 262 շնչի[365]:

Այսպիսով, 19-րդ դարի վերջին Արթ-Օվայի դաշտավայրում բնակվում էր շուրջ 4000 հայ:

Թոխաթ քաղաքի արևմտյան մասում՝ Ղազ-Օվա դաշտում էր տարածված կազայի հայկական գյուղերի մի մասը, ուր 1870-ական թթ. հետևյալ ժողովրդագրական պատկերն էր[366].

Աղյուսակ 13

գյուղ	տուն	շունչ
Էնտիզ	40	280
Պիսկվինճիք	-	550

[358] Սրվանձտյանց Գ., նշվ.աշխ., 229:
[359] Էփրիկեան Ս., նշվ.աշխ., նույն տեղում:
[360] Ալպոյաճեան Ա., նշվ.աշխ., նույն տեղում:
[361] Ալպոյաճեան Ա., նշվ.աշխ., նույն տեղում:
[362] Ալպոյաճեան Ա., նույն տեղում:
[363] Սրվանձտեանց Գ., նույն տեղում:
[364] Ալպոյաճեան Ա., նույն տեղում:
[365] Սրվանձտյանց Գ., նույն տեղում:
[366] Kevorkian R.H., Paboudjian P.B., նույն տեղում, Աղեքսանդրեան Ա., նշվ.աշխ., էջ 351-352:

Կեսարե	9	100
Սյունկյուտ	25	160
Չերչի	30	220
Կուրճի (Գուրջի)	10	80
Վարազ	10	90
Բազար	15	130
Ընդամենը	139	1610

Այսինքն Ղազ-Օվայի դաշտում բնակվող հայերի թիվը հասնում էր մոտ 1600-ի:

Թոխաթ քաղաքից դեպի արևելք՝ Թոխաթից Ամասիա տանող ճանապարհի վրա են գտնվում Գրիգորիս Պիծեռի և Կեքսի գյուղերը:

Գրիգորիս գյուղը, որը գտնվում էր Իրիս գետի ձախ ափին, դեռ 1878թ. ուներ 245 շունչ հայ բնակիչ[367]

Այս գյուղի հայ բնակչությունը 20-րդ դարի սկզբին աճեց և 1910-ական թթ. սկզբին կազմեց 100 ծուխ, կամ 600 շունչ[368]:

Պիծեռի գյուղը, որը նույնպես ընկած էր Իրիս գետի աջ ափին, 1870-ական թթ. վերջին բաղկացած էր 280 հայ բնակչից[369]

Կեքսի գյուղում ապրում էին նաև հույներ: 1878թ. դրությամբ գյուղում բնակվող հայերի թիվը կազմում էր 18 շունչ, հույների թիվը կազմում էր 24 շունչ[370]:

Այսպիսով, այս հատվածում գտնվող հայ բնակչության թիվը հասնում էր մոտ 900 հոգու: Ամբողջ կազայում, մեր հաշվարկով, 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին բնակվում էր շուրջ 20500 հայ:

Թոխաթի կազան 19-րդ դարի վերջին շատ խայտաբղետ ժողովրդագրական կազմ ուներ: Բացի հայերից կազայի բնակիչներն էին հույները, քրդերը, չերքեզները, թուրքերը և այլք

1878թ. մի վիճակագրության[371] մեջ հստակ պատկերված են էթնիկ այլ տարրերը՝ ըստ իրենց բնակության գյուղերի, որոնց հավաքական պատկերը հայ բնակչության հետ միասին հետևյալն էր

Աղյուսակ 14

Նահիե Թուրխալ	տուն	այր	կին
մահմեդական	1246	3292	3499
քուրդ	61	110	120
Նահիե Կոմանադ			

[367] Սրվանձտյանց Գ., նույն տեղում, տես նաև ԳԱԹ, Թորոս Ազատյանի ֆ., նույն տեղում:

[368] Աղեքսանդրեան Ա., նշվ.աշխ., էջ 35, տես նաև Ալպոյաճեան Ա., նշվ.աշխ., էջ 484, տես նույնը Kevorkian R.H., Paboudjian P.B., նշվ.աշխ., նույն տեղում:

Kevorkian R.H., Paboudjian P.B., նշվ.աշխ., նաև տես Սրվանձտյանց Գ., նույն տեղում:

[369] Սրվանձտյանց Գ., նշվ.աշխ., էջ 230:

[371] ԳԱԹ, Թորոս Ազատյանի ֆ., բաժին 3, գ 41, թ. 35.

մահմեդական	1351	4211	4391
հայ	68	152	135
հույն	117	228	232
չերքեզ	161	366	341
Նահիե Սելամի			
մահմեդական	1184	2566	2580
հույն	36	98	100
չերքեզ	180	683	706
ընդհանուր	4404	11706	12104

Նահիե Գազապատ			
մահմեդական	1460	4227	4094
հայ	84	205	225
հույն	12	26	16
քուրդ	201	423	473
չերքեզ	700	1782	1815
Նահիե Արթրքապատ			
մահմեդական	1667	5019	5346
հայ	224	753	778
հույն	138	341	365
չերքեզ	272	940	962
ընդհանուր	4758	25422	26178

Ակնհայտ է, որ վիճակագրության մեջ մեծ թիվ էին կազմում քրդերը, չերքեզները, որոնք լինելով մահմեդական տարրեր, ներկայացված էին առանձին

Նկատենք նաև, որ մահմեդական ազգաբնակչության բաղկացուցիչ մասն էին նաև կզլբաշները որոնք 1903թ. դրությամբ միայն Թոխաթի կազայում տեղաբաշխված էին հետևյալ գյուղերում[172].

Աղյուսակ 15

Քեմենեկ	15 տուն
Կզլքեյ	30 տուն
Կզլյանիզ	40 տուն
Դելիք	15 տուն
Բիգենի	40 տուն
Ակմուս	25 տուն
Օքքաբ	45 տուն
Դոնեսկե	40 տուն

[172] Маевский В., Путь Малой Азии в районе между Самсуном и Александретским заливом, Тифлис, 1903, стр. 99.

Այսպիսով, Թոխաթի գավառակը իրենից ներկայացնում էր հայաշատ կենտրոն, ուր հայերը մեծամասնություն էին կազմում հատկապես համանուն կենտրոնում: Բացի հայերից կազայի բնակիչներն էին նաև կզլբաշները, հույները, քրդերը, չերքեզները, որոնք տեղաբաշխված էին հիմնականում Թուրխալ, Կոմանադ, Սելամի, Գազապատ, Արթընքապատ նահիեներում:

II. ԹՈՒՆԱԹԻ ԳԱՎԱՌԻ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԵՎ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԳԱՎԱՌԱԿՆԵՐ

Ա. ՆԻՔՍԱՐԻ ԳԱՎԱՌԱԿ

Նիքսարի գավառակը (կազան) գտնվում է Թոխաթ քաղաքից մոտ 53 կմ հյուսիս: Այն խնդրո ուսումնասիրության ժամանակահատվածում հյուսիսից սահմանակից էր Տրապիզոնի վիլայեթին, հարավից Թոխաթի կազային, արևելքից Շաբին Կարահիսարի սանջակին:

Նիքսարի կազան 1864թ. դրությամբ ենթարկվում էր Տրապիզոնի վիլայեթին[374]: 1870-ական թթ. վերջին այն արդեն պատկանում էր Թոխաթի սանջակին և նրա նշանավոր կազաներից մեկն էր:

Վերջինիս կենտրոնը համարվում էր Նիքսար քաղաքը: Այն գտնվում էր Գայլ գետի հյուսիսային ափին: Նիքսարի մասին հետաքրքիր տվյալներ է հաղորդում եվրոպացի ճանապարհորդ Հենրի Վան Լեննեփը: Հեղինակը վկայում է, որ քաղաքը 1860թ. ուներ 1800 տուն, որից 500-ը հայ, 35-ը՝ հույն, մնացածը թուրք[375]: Կարծում ենք, որ հեղինակը թուրքերի անվան տակ միավորել է նաև այլ մահմեդական տարրերին:

Հեղինակը փորձում է նաև տալ քաղաքի բնակչության թվաքանակն ըստ շնչերի: Նա նշում է, որ եթե 1 տան համար ընդունենք նվազագույնը 1 շունչ, ապա ստացվում է, որ քաղաքն ուներ 1000 բնակիչ, որից 300-ը հայեր էին[376]:

Գ.Սրվանձտյանցը, որը 1878թ. այցելել էր Նիքսար, նշում է, որ քաղաքում թուրքերը 3390 հոգի էին, հայերը 2053, հույները 315[377]:

Կարող ենք թույլ տալ մեզ ենթադրելու, որ այս երկու տասնամյակների ընթացքում տեղ են գտել բնակչության լուրջ տեղաշարժեր, որի հետևանքով հայ և քրիստոնյա այլ ազգությունների թվաքանակը զգալիորեն նվազել էր:

Մեկ այլ 1888թ. վիճակագրության համաձայն՝ Նիքսար քաղաքը ուներ 400 տուն թուրք, 300 տուն հայ, 300 տուն հույն բնակչություն[378]:

Հավանաբար վիճակագրության մեջ հեղինակը թուրքերի անվան տակ ի նկատի ունի ընդհանուր մահմեդական տարրերին: Ի հաստատումն այս պնդման՝ նշենք միայն, որ կազայի մահմեդական բնակչության թվում էին նաև կզլբաշները, որոնք 20-րդ դարի սկզբին կազմում էին մոտ 285 ծուխ[379]:

---

[374] Ալպոյաճեան Ա., նշվ.աշխ., էջ 518:
[375] Henry Van Lennep. Travels in Little known parts of Asia Minor. Vol. 1. London. 1870. p. 336.
[376] Տես նույն տեղում:
[377] Սրվանձտյանց Գ., նշվ.աշխ., 230:
[378] Ալպոյաճեան Ա., նշվ.աշխ., նույն տեղում:
[379] Маевский В., նշվ.աշխ., էջ 99:

Անդրադառնալով այս վերջին վիճակագրությանը նշենք, որ եթե յուրաքանչյուր ծխի համար ընդունենք միջին 8 շունչ, ապա ստացվում է մոտ 2400 շունչ հայ բնակիչ:

Այսպիսով, մենք ընդունում ենք, որ 1870-1880-ականթթ. Նիքսար քաղաքն ուներ շուրջ 2400 շունչ հայ բնակչություն: Իսկ արդեն 1914թ. քաղաքում բնակվում էր շուրջ 2830 հայ բնակիչ[380]:

Կազայում բացի այս հայաշատ կենտրոնից գոյություն ունեին նաև 2 զուտ հայկական գյուղեր Ղափու-Աղզին և Կարամաշենը: Վերջիններս գտնվում էին Նիքսար քաղաքից հարավ, Գայլ գետի հարավային ափին:

Կափու-Աղզի գյուղի հայ բնակչությունը, խուսափելով հավատափոխ լինելուց, 18-րդ դարում այստեղ էր տեղափոխվել Համշենից: Արդեն 1878թ. Կափու-Աղզիում բնակվող հայերի թիվը հասնում էր 360 անձի[381]: Հետաքրքրաշարժ պատմություն է պահպանվել կապված 1895-1896 թթ. դեպքերի հետ: Կոտորածի ժամանակ 1896թ. հունիսից դեկտեմբեր ընկած ժամանակահատվածում, գյուղի հայությունը ժամանակավորապես իսլամացվել էր և այդպիսով փրկվել կոտորածից, իսկ հաջորդ տարի նորից վերադարձել քրիստոնեական կրոնի: Արդեն 1914թ. նրանց թիվը հասնում էր 650 մարդու[382]:

Կարամաշեն գյուղը հաստատվել էր 1880-ական թթ. սկզբին[383]: Թերևս այդ էր պատճառը, որ 1913թ. արդեն ուներ 9 տուն շուրջ 80 շունչ բնակիչ[384]:

Փաստորեն, ստացվում է այնպես, որ Մեծ եղեռնի նախօրեին Նիքսարի կազայում ապրում էր 3560 հայ բնակիչ:

բ. ՀԵՐԵՔԻ (ԷՐՊԱԱ) ԳԱՎԱՌԱԿ

Հերեքի կազան ևս հանդիսանում էր Թոխաթի սանջակի հյուսիսային գավառակներից մեկը: Այն հյուսիսից սահմանակից էր Տրապիզոնի վիլայեթին, հարավից Թոխաթի կազային, արևմուտքից Ամասիայի սանջակին, արևելքից Նիքսարի կազային: Այն ևս 1864թ. գտնվում էր Տրապիզոնի վիլայեթի կազմում և միայն 1870-ական թթ. միացվել է Թոխաթի սանջակին:

Կազայի կենտրոնն էր Հերեք ավանը, որը գտնվում էր Իրիս գետի ձախ ափին և կառուցված էր Թաչ-Օվա ընդարձակ հարթավայրում: Այս ավանը կազայի հայկական բնակավայրերից խոշորագույնն էր:

---

[380] Տես նույն տեղում:
[381] Սրվանձտյանց Գ., նշվ.աշխ., նույն տեղում:
[382] Kevorkian R.H., Paboudjian P.B., նշվ.աշխ., նույն տեղում:
[383] Ալպոյաճեան Ա., նշվ.աշխ., էջ 555:
[384] Տես նույն տեղում, տես նույնը Kevorkian R.H., Paboudjian P.B., նշվ.աշխ., նույն տեղում:

Հերեք ավանը 19-րդ դարի 70-ական թթ. վերջին ուներ խայտաբղետ ժողովրդագրական պատկեր: Ըստ 1878թ. վիճակագրության ուներ 452 տուն մահմեդական բնակչություն՝ 1202 այր, 1470 կին, 158 տուն հայ՝ 421 այր, 328 կին, 3 տուն հույն՝ 11 այր, 9 կին[385]:

Նույն ժամանակաշրջանի համար Գ.Սրվանձտյանցը ցույց է տալիս 1126 շունչ հայ բնակչություն[386]:

Համեմատելով այս երկու վիճակագրությունները կարող ենք եզրակացնել, որ հայ բնակչությունը 1878թ. դրությամբ կազայում կազմել է մոտ 1000 հոգի:

Հայ բնակչության այս համեմատաբար սակավությունը պետք է համարել օրինաչափ, քանի որ հայերը Հերեք ավան ներգաղթել էին 1860-1870-ական թթ. Կեսարիայի շրջակայքից և Թոխաթ քաղաքից[387]: Ի դեպ, Կեսարիայի գաղթականները խոսում էին թուրքերեն, իսկ Թոխաթի հայությունը պահպանել էր իր ազգային լեզուն:

«Բյուրակն» լրագրի հաղորդած տվյալների համաձայն 1899թ. Հերեք քաղաքի բնակչության ընդհանուր թվաքանակը հասնում էր շուրջ 4000 շնչի թուրքեր, հայեր, հույներ, հրեաներ[388]:

20-րդ դարի սկզբին քաղաքի հայ բնակչությունը զգալի աճեց՝ 1914թ. կազմելով էր 4950 շունչ[389]: Կարող ենք ենթադրել, որ դա կատարվել է նաև շնորհիվ բնակչության նոր ներհոսքի:

Բացի այս գլխավոր կենտրոնից, հայերը բնակություն էին հաստատել կազայի նահիեների մի քանի գյուղերում:

Կազայի ողջ ժողովրդագրական պատկերը ըստ բնակավայրերի 1878թ. վիճակով[390] ներկայացված է նաև Անդրեաս Աղեքսանդրյանի[391] մոտ:

Բնակչության կտրուկ աճ է գրանցվել կազայի այս հայաբնակ գյուղերում նաև 20-րդ դարի սկզբին: 1913-1914թթ. Աղաբաղ գյուղում բնակվում էր 279, Չողշարում՝ 292, Էյվազայում՝ 313, Սարը-Գայայնում՝ 263, Սախար-Չալում՝ 180 հայ բնակիչ[392]:

Այսպիսով, Աղաբաղ, Չոզլար, Էյվազա, Սարա-Կայա, Սախար-Չալ գյուղերում 20-րդ դարի սկզբին բնակվում էին 1327 հայ բնակիչ: Հերեք քաղաքի հայերի հետ միասին ստացվում է, որ կազան ուներ շուրջ 6277 հայ բնակիչ:

---

385 ԳԱԹ, Թորոս Ազատյանի ֆ., բաժին 3, գ. 41, թ. 7:
386 Սրվանձտյանց Գ., նշվ. աշխ., նույն տեղում
387 Բյուրակն, 1899, Կ. Պոլիս, հոկտեմբերի 13, թիվ 41:
388 Տես նույն տեղում:
389 Kevorkian R.H., Paboudjian P.B., նշվ.աշխ., էջ 255:
390 ԳԱԹ, նույն տեղում, թ. 7-14, (Տես հավելված N 1):
391 Աղեքսանդրեան Ա., նշվ.աշխ., էջ 354:
392 Kevorkian R.H., Paboudjian P.B., նշվ.աշխ., նույն տեղում:

Գ. ՉԻԼԵԻ ԳԱՎԱՌԱԿ

Չիլեի գավառակը գտնվում էր Թոխաթի գավառի արևմտյան հատվածում: Այն 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին հյուսիսից սահմանակից էր Ամասիայի սանջակին, հարավից և արևմուտքից Անգորայի վիլայեթին, արևելքից Թոխաթի սանջակին:

Վերջինիս կենտրոնն էր Չիլե քաղաքը, որը միաժամանակ հանդիսանում էր նաև հայկական կենտրոն:

Այսպես, ըստ 1871թ. ներկայացված կառավարական մի արձանագրության Չիլե քաղաքն ուներ 2500 տուն բնակչություն, որից 250 տունը հայեր էին [393]: Եթե յուրաքանչյուր տան շնչերի միջին թիվն ընդունենք ութը, ապա ստացվում է 2000 մարդ:

Թեև Չիլե քաղաքը 1894-1896թթ. ենթարկվեց կոտորածի և ժողովրդագրական պատկերը խեղաթյուրվեց, սակայն հայ բնակչությունը շարունակեց ոչ միայն գոյատևել այստեղ, այլև զգալի աճ արձանագրվեց: Այսպես, եթե 1897թ. քաղաքն ուներ 400 տուն հայ բնակչություն[394], ապա 1914թ. այդ թիվը հասավ 500 տան, 4000 անձի[395]:

Նշենք նաև, որ բացի Չիլե քաղաքից հայերը բնակվում էին նաև կազայի գյուղերում: Ցավոք, աղբյուրներն այդ մասին լռում են: Այն, որ հայերը 20-րդ դարի սկզբին բացի այս կենտրոնից բնակվում էին նաև այլ գյուղերում, երևում է այն փաստից, որ 1914թ. վիճակով ողջ Չիլեի կազայում ապրող հայ բնակչության թիվը հասնում էր 1100 ծխի, 7700 անձի[396]:

19-րդ դարի վերջին Չիլեի կազայում բացի հայերից ապրում էին նաև մահմեդականներ հատկապես չերքեզներ և քրդեր: 1878թ. նրանք տեղաբաշխված էին հետևյալ գյուղերում[397].

Աղյուսակ 16

Քուրդ			
Գյուղ	տուն	այր	կին
Սաֆրանը	65	200	208
Գարը Քյոյ	3	10	13
Ճիկեր Պաղը	10	26	20
Լեյխ Քյոյ	15	40	41
Ալի Դոճա	35	90	95
Գըրգ Տիլիմ	40	125	121
Իգիմլիկ	8	22	21
Թորաման	33	60	63

393 Ալպոյաճեան Ա., նշվ.աշխ., էջ 575:
394 Էփրիկեան Ս., նշվ աշխ., էջ 783, տես նաև Ալպոյաճեան Ա., նույն տեղում:
395 Գաբիկեան Կ., նշվ.աշխ., նույն տեղում:
396 «Հայկազեան հայագիտական հանդէս», հ. ԺԵ, Պեյրութ, 1995, էջ 511:
397 ԳԱԹ, Թորոս Ազատյանի ֆ., բաժին 3, գ. 41, թ. 20-21:

Յիր Օղլու	8	26	24
Քեոսրելիկ	28	84	88
Սանճը	12	35	36
Քենիճե	12	40	41
Գրրըմճլուք	5	12	10
Բագր Բողազ	7	18	10
Գայա	6	19	17
Քյոթիվ Քյոյ	18	50	53
Մոլլա Իսմայիլ	12	42	41
Քոյը Գըլլա	6	18	15
Քրճա Պեճիր	13	42	45
Սագըչըլըք	8	25	26
Քայաճաք	9	28	28
Թոզան Օղլու	15	40	49
	368	1052	1065

Չերքեզ			
Գյուղ	տուն	այր	կին
Չելլետին	20	70	71
Էսիքյոյ	35	128	125
Հայըր Զուղ	25	92	91
Պաքըր Պողազ	100	350	350
Քյոր Փանար	15	55	53
Մերճիմեք Վերնը	20	72	77
Գուշսերայ	10	35	30
Հայըր Յոզլու	55	190	125
Պալփանար	45	165	164
Դերբեդ	13	42	48
Հասան Տեկմինիր	30	108	115
Պաղլետ Փանր	20	68	65
Ը նդամենը	388	1375	1314

Այսպիսով, 1878թ. դրությամբ Չիլեի կազայում բնակվող քրդերի թիվը կազմում էր 368 տուն կամ 2123 շունչ, իսկ չերքեզների թիվը 388 տուն էր կամ 2760 շունչ:

Ամփոփելով Թոխաթի սանջակի հայ բնակչության թվաքանակը նշենք, որ 20-րդ դարի սկզբին նրանց ընդհանուր թիվը մեր հաշվարկներով կազմում էր 38037 մարդ: Իսկ բացի հայերից սանջակում զգալի թիվ էին կազմում թուրքերը, քրդերը, կզլբաշները, չերքեզները, հույները և էթնիկ այլ տարրեր:

2. ԱՄԱՍԻԱՅԻ ԳԱՎԱՌ

20-րդ դարի սկզբին Ամասիայի սանջակը գտնվում էր վիլայեթի հյուսիսարևմտյան մասում և հյուսիսից սահմանակից էր Տրապիզոնի և Կաստամունիի վիլայեթներին, արևելքից Թոխաթի սանջակին, հարավից և արևմուտքից Անգորայի վիլայեթին: Գավառի տարածքը տվյալ ժամանակաշրջանում կազմում էր 29450 քառ. կմ[398]: Գավառի վարչական կենտրոն Ամասիա (Ամառա, Էլմահիե) քաղաքն ընկած էր Պոնտական լեռների ստորոտին, Իրիս գետի ափերին:

20-րդ դարի սկզբին Ամասիայի գավառը տրոհվում էր 7 գավառակների Ամասիա, Մարզվան, Սիմ Հաջիգյուղ, Մեջիթ Յոզյու (Ավխաթ Հաջիգյուղ), Վեզիր Քյուփրյու, Հավզա և Լատիկ[399]: Սրանցից յուրաքանչյուրն ուներ իր գյուղախմբերն (նահիեները) ու գյուղերը:

Այդ ժամանակ Ամասիայի գավառի բնակչությունը բաղկացած էր հայերից, թուրքերից, հույներից, քրդերից: Այստեղ բնակություն էին հաստատել նաև «թաթար», «կզլբաշ», «ալևի», «պեքթաշի», «գյուրջի (իսլամացած վրացի)» և էթնոկրոնական այլ միավորներ[400]:

Նրանք ունեին իրենց լեզուն ու մշակույթը: Շնորհիվ այն փաստի, որ այս էթնոկրոնական միավորները գերադասեցին ապրել անջատ համայնքներում, նրանք հետագայում պահպանեցին իրենց ինքնուրույնությունը և չձուլվեցին թուրքերի և քրդերի հետ[401]:

1878թ. վիճակով հայերն ունեին 3 եկեղեցի Ս.Նիկողայոս, Ս.Հակոբ, Ս.Աստվածածին, 3 վարժարան 409 աշակերտ և 108 աշակերտուհիներով: Հայերի թիվը հասնում էր 1207 ծխի (5605 մարդ, որից բողոքականներ 88-ը, կաթոլիկներ 8-ը): Հույների թիվը մոտ 625 էր[402]:

1894-1896թթ. ընթացքում տեղի ունեցած կոտորածի հետևանքով Ամասիա քաղաքի բնակչությունը նվազեց, սակայն 20-րդ դարի սկզբին քաղաքում նորից նկատվեց հայ բնակչության աճ:

Որոշ տվյալների համաձայն՝ 1914թ. դրությամբ Ամասիա քաղաքի հայ բնակչության թիվը կազմում էր 12000 մարդ[403]: Քաղաքի հույն բնակչությունը 1000 հոգուց պակաս էր և բոլորն էլ թրքախոս էին[404]:

---

[398] ՀՀ ԱԱ, ֆ. 476, ց. 1, գ. 140, թ. 14, գ. 940, թ. 25, 46, գ. 530, թ. 12, ֆ. 439, ց. 1, գ. 483, թ. 1, ֆ. 193, ց. 1, գ. 258, թ. 1, գ. 258, թ. 1, ֆ. 398, ց. 1, գ. 14, թ. 104, տես նաև Сокольский Н., Очерки современной Турции, Тифлис, 1923, стр. 187, Ալիս, 1930, փետրվար, թիվ 4, էջ 7-9:

[399] Սիմոնեան Գ.Հ., Հուշամատեան Պոնտական Ամասիո, Նիկոսիա, 1966, էջ 13:

[400] Նույն տեղում:

[401] Kevorkian R.H., Paboudjian P.B., նշվ.աշխ., էջ 255:

[402] ԳԱԹ, Թորոս Ազատյանի ֆոնդ, բաժին 12, գ. 10520, թ. 1, տես նաև Սրվանձտյանց Գ., Երկեր, հ. Բ, Երևան, 1982, էջ 232:

[403] ՀՀ ԱԱ, ֆ. 398, ց. 1, գ. 14, թ. 113, և ֆ. 476, ց. 1, գ. 83, թ. 16, ճեհրահեան Լևոն, Թուրքահայոց բնաջնջումը, Մարսել, 1950, էջ 113:

[404] Սիմոնեան Գ.Հ., նշվ.աշխ., էջ 14:

Նույն ժամանակաշրջանի համար Հ.Ղազարյանը քաղաքի հայ բնակչությունը հասցնում է 16000-ի[405], իսկ Ա.Տեր-Հակոբյանը նույն ժամանակ հայերին հաշվում է 9940 մարդ, որից 240-ը՝ կաթոլիկ դավանանքի, 9700-ը՝ լուսավորչական[406]: Իսկ հայ այլ հեղինակներ այդ թիվը հասցնում են 2758 տան, 13788 շնչի[407]:

Ինչպես երևում է, Ամասիայի հայ բնակչության մասին աղբյուրների տված թվային տվյալները տատանվում են 10000-16000 շնչերի:

«Հայկազեան հայագիտական հանդէսի» հաղորդած տվյալի համաձայն՝ Ամասիա քաղաքի հայ բնակչության թիվը կազմում էր 3000 տուն, 21000 շունչ[408]:

Մեզ համար ավելի ընդունելի է 3000 տուն, 21000 շունչ տվյալը, քանի որ յուրաքանչյուր ծխի համար ստացվում է 7 մարդ, որը մոտ է ճշմարտությանը:

1895թ. համիդեական ջարդերից հետո, ի հաշիվ բազմաթիվ հայ գաղթականների ներհոսքի, Ամասիայի հայ բնակչության թվաքանակն աճեց:

19-րդ դարի վերջին Ամասիայի սանջակն ուներ հետևյալ վարչական պատկերը[409]:

Առաջին կազան՝ Ամասիան՝ գավառի գավառակներից գլխավորը (կենտրոնականը) համանուն Ամասիան էր բաղկացած 160 գյուղերից և 4 նահիեներից՝ Եզինե բազար կամ Իյնե բազար, Ագ Դաղ Հակկալա և Կելտիկլան կամ Կելտ Եկելան[410]:

Ագ Դաղի (Սպիտակ լեռ) նահիեն կազմում էր Ամասիայի ողջ արևելյան հատվածը:

Այս նահիեի կենտրոնն Աղվիրեն կոչված գյուղն էր: Եզինե բազար կամ Իյնե բազար նահիեն մեծամասամբ բնակեցված էր թուրքմեն գաղթականներով: Հակկալեի նահիեն հայտնի էր Կոմա, Արղումա, Սուլու-օվա անուններով[411]:

Կելտեկելան գյուղախմբի կենտրոնը Օրթա Գյոյ (Միջնագյուղ) գյուղն էր, որը ընկած էր Ամասիայի սանջակի արևմտյան կողմում[412]:

---

[405] Ղազարյան Հ., Արևմտահայությունը ցեղասպանության նախօրյակին, Երևան, 2001, էջ 262:

[406] Ավետիք Տեր-Հակոբեան, Ֆիզիքական, ազգագրական և քաղաքական աշխարհագրութիւն Հայաստանի, Թիֆլիս, 1914, էջ 270:

[407] Kevorkian R.H., Paboudjian P.B., նշվ.աշխ., նույն տեղում:

[408] «Հայկազեան հայագիտական հանդէս», հ. ԺԵ, Պեյրութ, 1995, էջ 506:

[409] Սիմոնեան Գ.Հ., նշվ.աշխ., էջ 48-55, տես նաև ՀՀ ԱԱ, ֆ. 476, ց. 1, գ. 560, թ. 5-7:

[410] Սիմոնեան Գ.Հ., նշվ.աշխ., էջ 13:

[411] 1356թ. հետո վերոհիշյալ գյուղերը եկվոր թուրքմենների կողմից բռնագրավվել են տեղաբնիկ քրիստոնյաներից:

[412] 11-րդ դարի վերջին այստեղ էին հաստատվել ավշար ցեղեր, սելջուկ-թուրքեր, թուրքմեններ ու էթնիկ այլ միավորներ:

Երկրորդ կազան Սիմ Հաջիգյուղը կամ Հաջիգյուղը կոչվում էր նաև Սիմ Հաջիգյուղ (Հաջիքյոյ) (Գյումյուշի): Այն բարեբեր, ջրառատ գավառակ էր: Գտնվում էր Ամասիայի սանջակի հյուսիսարևմտյան կողմում, տարածվում էր Տավչան կամ Տավշան (նապաստակ) լեռան հարավում ընկած դաշտի մեջ: 20-րդ դարի սկզբին կազան բաժանված էր 4 նահիեների Համամ Յուզիվ, Սերայճգ, Կապագոզ, Հաջիգյուղ[412]: Հայ բնակչությունը կազայում բնակվում էր հիմնականում Սիմ Հաջիգյուղ կենտրոնում:

Որոշ տվյալների համաձայն 1913թ. այս կազան ուներ 2500 ծուխ բնակչություն, որից 700-900 տունը հայեր: Վերջիններս զբաղվում էին առևտրով, արհեստով, երկրագործությամբ, կառապանությամբ և այլն[413]:

Հայերը մեծամասնությամբ առաքելականներ էին[414]: 19-րդ դարի կեսին բողոքականները, հաստատվելով Մարզվան, Թոխաթ, Խարբերդ, Կեսարիա և այլ քաղաքներում, բացել էին իրենց դպրոցները[415]: 1878թ. Սիմ Հաջիգյուղում ապրում էր 2317 հայ, որոնցից 62-ը բողոքական: 1892թ. այն ուներ 600 տնից ավելի հայ բնակչություն, որոնցից մոտ 20 տունը բողոքականներ: Կային նաև 8 տուն հույներ և զգալի թվով մահմեդականներ թուրքեր ու քրդեր[116]: Սիմ Հաջիգյուղում հայերն ունեին 1 եկեղեցի (Ս.Հակոբ), 2 վարժարան, որտեղ սովորում էր 220 աշակերտ[417]:

19-րդ դարի վերջին տեղի ունեցած թուրքական ջարդերի հետևանքով 20-րդ դարի սկզբին հայ բնակչության աճ չգրանցվեց:

1914-1915թթ. այս գյուղաքաղաքում բնակվող հայերի թվաքանակն, ըստ մի աղբյուրի, կազմում էր 4064 մարդ[418], իսկ մի այլ աղբյուրի հավաստմամբ 5000-ից անցնում էր[419]:

«Հայկազեան հայագիտական հանդէսը» գյուղաքաղաքի համար տալիս է 1000 ծուխ, 7000 շունչ տվյալը[420]:

Վերջին տվյալը ճշմարտությանը ավելի մոտ է և մեզ համար ընդունելի, քանի որ յուրաքանչյուր տան համար աղբյուրը ընդունել է 7 շունչ բնակիչ, որը հավանական է:

---

[412] Սիմոնեան Գ.Հ., նշվ.աշխ., էջ 51-52:

[413] Աթեշեան Գ., Սիմ Հաջիգյուղի կրթականը, էջ 90-94, Նոր Այգ. Մարզվան, 1913, թիվ 3-4:

[414] Տես նույն տեղում:

[415] Акты Кавказской Археографической комиссии (АКАК), Тифлис, 1904, т. 12, стр. 534-536.

[416] ՀՀ ԱԱ, ֆ. 476, ց. 1, գ. 238, թ. 64, 87, տես նաև ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի արխիվ, Լեոյի անձնական ֆոնդ 1, ց. 1, գ. 151, թ. 7:

[417] ԳԱԹ, Թորոս Ազատյանի ֆոնդ, բաժին 12, գ. 10520, թ. 4:

[418] Kevorkian R.H., Paboudjian P.B., նշվ.աշխ., էջ 255:

[419] Պառավեան Ստեփան, Փոքր Հայքի Սիմ-Հաճի-Գյուղ գյուղաքաղաքի հայերու պատմութիւնը 1890-1922, Վենետիկ, 1978, էջ 7:

[420] «Հայկազեան հայագիտական հանդէս», նույն տեղում:

Սիմ Հաջիգյուղի հարևանությամբ գտնվող Գյումյուշ Մաղեն գյուղում 1878թ. կար 1282 հայ բնակիչ, որից 25-ը հայ բողոքականներ[421]:

Երրորդ կազան Հավզան ընդգրկում էր 4 նահիե (Հելիաս, Գամլըք, Կիտիրլու, Սեմերա) 30 հազար բնակչությամբ: Կազայի կենտրոն Հավզա քաղաքը 1895թ. կոտորածի նախօրեին ուներ 15 տուն հայ բնակչություն[422]: Շուտով սկսված կոտորածը իր ազդեցությունը թողեց նաև այս գյուղաքաղաքի վրա:

Մշտական արտահոսքի հետևանքով այս կենտրոնի հայ բնակչության թիվը նվազել էր և 1914թ. կազմել ընդամենը 12 տուն: Այստեղ կային նաև հույներ: Չերքեզ գաղթականները գաղթել էին այստեղ 1880թ. Կովկասից:

Ըստ Կ.Գաբիկյանի, որն անձամբ շրջել էր Սեբաստիայի վիլայեթում, Հավզայի կազայի հայ բնակչության թվաքանակը 1914թ. դրությամբ հասնում էր 70 տան 320 անձի[423]: Մեկ այլ աղբյուր վկայակոչում է, որ նույն ժամանակ Հավզայում բնակվում էր 333 հայ[424]:

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ նախքան առաջին համաշխարհային պատերազմը Հավզայում բնակվող հայ բնակչության թիվը կազմում էր շուրջ 300 մարդ:

Չորրորդ կազան Վեզիր Քյուփրյուն (Վեզիրի կամուրջ) էր իր 200 գյուղերով բաղկացած Ավլաղու, Կզլքսե, Գյոլ, Օրթագլար, Գմաղաճ, Սամվալաք, Դելամ նահիեներից:

Գավառակի կենտրոնը Վեզիր Քյուփրյու փոքրիկ քաղաքն էր: Այն (հռոմեական Անդրոնիպոլիսը, հունական Փազեմոնը, թուրքական Կետե Ղարան) 20-րդ դարի սկզբին 10-12 հազար բնակչությամբ հինավուրց քաղաք էր:

Դեռ 1878թ. Վեզիր Քյուփրյու կազայում հայերի թիվը հասնում էր 1280-ի, որոնցից 125-ը բողոքական էին, 280-ը բոշա[425]: Հույների թիվը հասնում էր 775-ի:

Հայերը Վեզիր Քյուփրուլում ունեին Ս. Գևորգ եկեղեցի, 1 վարժարան, որտեղ սովորում էր 50 աշակերտ[426]: 1900թ. «Բյուրակն» լրագրի հաղորդած տվյալներով Վեզիր Քյուփրյու գավառակը բաղկացած էր մոտ 200 գյուղերից: Համանուն քաղաքի բնակչության մեջ հայերը շուրջ 1400 հոգի էին, 1100-ը առաքելական, 300-ը բողոքական: Հույներն ընդամենը 40-50 տուն էին[427]: Նույն ժամանակաշրջանին վերաբերող մի

---

[421] ԳԱԹ, նույն տեղում:

[422] ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի արխիվ, Լեոյի անձնական ֆոնդ 1, ց. 1, գ. 151, թ. 4:

[423] Գաբիկեան Կ., նշվ.աշխ., էջ 597:

[424] Kevorkian R.H., Paboudjian P.B., նշվ.աշխ., նույն տեղում:

[425] ՀՀ ԱԱ, ֆ. 476, ց. 1, գ. 560, թ. 48, տես նաև Սրվանձտյանց Գ., նշվ.աշխ., էջ 24:

[426] ԳԱԹ, նույն տեղում, թ. 5:

[427] Բյուրակն, Կ.Պոլիս, 1900, 17 հոկտեմբերի, թիվ 38, էջ 580-584:

այլ աղբյուր վկայում է, որ մեծ եղեռնի նախօրյակին քաղաքն ուներ մոտ 500 տուն 6000 թուրք, հայ, հույն խառը բնակչություն: Ամբողջ գավառակի բնակչությունը միասին հաշվվում էր 46000 մարդ[429]: Կ.Գաբիկյանը Վեզիր Քյուփրյու կազայի հայ բնակչության թիվը նույն ժամանակ ցույց է տալիս 600 տուն 4800 անձ[430]: Կարծում ենք, որ այս տվյալն ավելի մոտ է ճշմարտությանը, քանի որ հեղինակն անձամբ եղել է այս կազայում: Կարող ենք եզրակացնել, որ 19-րդ դարի վերջի հետ համեմատած հայերի թիվն այստեղ զգալիորեն աճել էր:

Այստեղի բնակիչների մեծ մասը թուրքացած նախկին քրիստոնյաներ էին:

Հինգերորդ կազան Լատիկն (Լադիկ, Լատիք) էր բաղկացած 4 նահիեներից Համիդ, Ղարա Ապտալ, Ահմեդսերա, Տոնաղլու: Կազայի կենտրոնը Լատիկ գյուղաքաղաքն էր: Վերջինս 1895թ. ուներ 80 տուն հայ բնակիչ[431], իսկ առաջին համաշխարհային պատերազմից առաջ այնտեղ կար 500 տուն հայ և հույն բնակիչ[432]: Նշանավոր գյուղերից էր Տոնաղլուն, որը լիովին հայաբնակ էր: Կազայի բնակչության թիվը հասնում էր 25000-ի:

Վեցերորդ կազայի Մեջիդ Յոզյուի կենտրոնը նույնանուն գյուղաքաղաքն էր: Գավառակը 20-րդ դարի սկզբին ուներ 7 նահիե, 140 գյուղ 50 հազար բնակչությամբ: 1878թ. հայերի թիվը հասնում էր 197-ի, որից 80-ը բողոքական: Ցեղասպանության նախօրեին հայերը կազմում էին 100-200 տուն 1600 մարդ[433]:

Հայերը զբաղվում էին երկրագործությամբ, անասնապահությամբ, առևտրով և արհեստով: Այս քաղաքի բնակչության թվում էին նաև թաթար և քուրդ գաղթականներ[434]:

Յոթերորդ կազայի Մարզվանի համանուն կենտրոնը գտնվում էր Ամասիա քաղաքից դեպի հյուսիս-արևմուտք: Մարզվան քաղաքի հայ բնակչության թվաքանակը 1878թ. կազմում էր 6496 մարդ, որոնցից 481-ը բոշա, 481-ը բողոքական ու կաթոլիկ[435]:

Մարզվան քաղաքը ևս 1890-ական թթ. ենթարկվեց դաժան կոտորածի և ավերածությունների, որի հետևանքով տեղ գտան ժողովրդագրական տեղաշարժեր:

---

429 Սիմոնեան Գ.Հ., նշվ.աշխ., էջ 54:
430 Գաբիկեան Կ., նշվ.աշխ., էջ 597:
431 ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի արխիվ, նույն տեղում:
432 Սիմոնեան Գ.Հ., նշվ.աշխ., էջ 54:
433 ՀՀ ԱԱ, ֆ. 476, ց. 1, գ. 110, թ. 77, գ. 830, թ. 2, տես նաև Կ.Գաբիկեան, նշվ.աշխ., էջ 597:
434 Սիմոնեան Գ.Հ., նշվ.աշխ., էջ 597:
435 ՀՀ ԱԱ, ֆ. 476, ց. 1, գ. 825, թ. 3, տես նաև Սրվանձտյանց Գ., նույն տեղում:

1913-1914թթ. այն ուներ 20 թաղ, ուր ապրող 22000 բնակիչներից 12000-ը հայեր էին[436]: Այս կազայի մեջ մտնող տեղաբնիկ քրիստոնյա ժողովրդի մի մասը կոտորվել էր, մի մասը փախուստի էր դիմել, իսկ մյուս մասն էլ՝ իսլամացել: Ըստ տեղի ազգային գործիչների հաղորդած տվյալների՝ այդ ժամանակ հայ ազգաբնակչության թվաքանակը հասնում էր 14000-ի[437]:

Ըստ հայկական պաշտոնական այլ աղբյուրի՝ մինչև 1915թ. Մեծ եղեռնը Մարզվանի կազայի հայ բնակչությունը կազմում էր 2500 տուն և 17500 անձ[438]:

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին այս գավառակում կային զուտ հայաբնակ գյուղեր, որոնցից Ենիջեքյոյն ուներ 150 տուն՝ 1250 բնակիչ, որոնք զբաղվում էին երկրագործությամբ ու անասնապահությամբ:

Մի վիճակագրության համաձայն՝ մինչև 1915թ. Ամասիայի սանջակի հայ ազգաբնակչության թիվը հասնում էր 61580 մարդու[439]:

Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանի մոտ այդ թիվը հասնում է 25000-ի[440], որը, մեր կարծիքով, հեռու է իրականությունից:

Ըստ մեկ այլ վիճակագրության՝[441] այդ թիվը հասնում էր 51450 անձի, որը մեզ համար ավելի ընդունելի է, քանի որ Ամասիայի սանջակը, ինչպես և Թոխաթի սանջակը հանդիսանում էին համեմատած սակավաթիվ հայ բնակչություն ունեցող շրջաններ:

Այսպիսով, նախքան Մեծ եղեռնը Ամասիայի սանջակում բնակվող բնակչության թիվը կազմում էր 51450 մարդ:

Փաստորեն Ամասիայի սանջակը 20-րդ դարի սկզբին ներկայացնում էր հայաշատ մի գավառ, ուր հայերն ապրում էին իրենց ազգային-մշակութային կյանքով:

Ընդհանրացնելով վերոհիշյալը՝ նշենք, որ ողջ Սեբաստիայի վիլայեթի տարածքում նախքան առաջին համաշխարհային պատերազմը հայ բնակչության թիվը կազմում էր 293678 մարդ:

Առանձին սանջակների օրինակներով նկատեցինք, որ բնակչության մեջ սույն ժամանակահատվածում բացի հայերից մնում էին նաև այլ էթնիկ տարրեր: Դրանցից էին թուրքերը, քրդերը, ասորիները, հույները, չերքեզները, կզլբաշները, եզդիները: Սակայն փաստերի բացակայության պատճառով հնարավոր չէ ճշտել նրանց թիվը

---

[436] ՀՀ ԱԱ, ֆ. 398, ց. 1, գ. 14, թ. 113 և 118, տես նաև Արզումանյան Մ., Հայաստան 1914-1917, Երևան, 1969, էջ 405, տես նաև Յոհաննես Լեփսիուս, Հայաստանի ջարդերը, Կ.Պոլիս, 1919, էջ 64:

[437] Ծոցիկյան Ս.Ս., Արևմտահայ աշխարհ, Նյու Յորք, 1947, էջ 497:

[438] ՀՀ ԱԱ, ֆ. 439, ց. 1, գ. 483, թ. 10:

[439] ՀՀ ԱԱ, ֆ. 476, ց. 1, գ. 144, թ. 18:

[440] Օրմանեան Մ., Հայոց եկեղեցին և իր պատմութիւնը, վարդապետութիւնը, վարչութիւնը, բարեկարգութիւնը, արարողութիւնը, գրականութիւնը ու ներկա կացութիւնը, Կ.Պոլիս, 1912, էջ 261:

[441] «Հայկազեան հայագիտական հանդէս», հ. ԺԵ, Պեյրութ, 1995, էջ 506:

յուրաքանչյուր կազայում և սանջակում, և այդ պատճառով մենք ընդունելի ենք համարում նախքան առաջին համաշխարհային պատերազմը հայոց պատրիարքարանի ներկայացրած ժողովրդագրական վիճակագրությունը, որը վերաբերում է ամբողջ Սեբաստիայի վիլայեթին: Ըստ այդ վիճակագրության[442] Սեբաստիայի վիլայեթը 1913թ. ուներ օտար բնակչություն հետևյալ կազմով:

Աղյուսակ 17

թուրք	192000 մարդ
քուրդ	50000 մարդ
ասորի	24925 մարդ
հույն	39967 մարդ
չերքեզ	45000 մարդ
կզլբաշ	80134 մարդ
եզդի	4195 մարդ
Ընդամենը	436221

Փաստորեն ստացվում է, որ Սեբաստիայի վիլայեթում նախքան Մեծ եղեռնը ընդհանուր բնակչության թիվը կազմում էր 729899 մարդ:

[442] ՀՀ ԱԱ, ֆ. 398, ց. 1, գ. 14, թ. 57:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ
ՍԵԲԱՍՏԻԱՅԻ ՆԱՀԱՆԳԻ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԸ 1894-1896ԹԹ.

1. ՍԵԲԱՍՏԻԱՅԻ ԳԱՎԱՌ

1876թ. գահ բարձրացած սուլթան Աբդուլ Համիդ II-ը ձեռնամուխ եղավ քրիստոնյաների զանգվածային կոտորածների ծրագրմանը: Աբդուլ Համիդի արտաքին և ներքին քաղաքականության առանցքը պանիսլամիզմն էր, որի նպատակն էր Թուրքիայի շուրջը համախմբել մահմեդականներով բնակեցված երկրները ու տարածքները: Հենց այդ էր պատճառը, որ կազմակերպվեցին զանգվածային ջարդեր:

Կոտորածներն իրագործելու համար սուլթանը բավարար չհամարեց մշտական զորքը. 1891թ. Արևմտյան Հայաստանում սուլթանի հրամանով ստեղծվեցին «համիդիե» քրդական հեծելագնդերը, որոնք էլ իրականացնում էին կոտորածները:

1894-1896թթ. համիդեական կոտորածները ծանր անդրադարձ ունեցան Սեբաստիայի նահանգի վրա: Ինչպես այլ գավառներում, այնպես էլ Սեբաստիայի գավառում տեղի ունեցած ջարդերի հետևանքով առաջ եկան մի շարք ժողովրդագրական տեղաշարժեր:

Այս կոտորածից հատկապես տուժեց գավառի կենտրոն Սեբաստիա քաղաքը: Քաղաքի հայ բնակչության համար հատկապես ողբերգական եղավ 1895թ. հոկտեմբեր ամիսը: Կոտորածները սկսվեցին 1895թ. հոկտեմբերի 20-ին և շարունակվեցին հաջորդ 3 օրերի ընթացքում, որոնց ժամանակ սեբաստահայության նահատակների թիվը հասավ 1500 մարդու[443]: Շուտով կոտորածները վերսկսվեցին էլ ավելի մեծ ուժգնությամբ: Սարսափելի ջարդ տեղի ունեցավ 1895թ. հոկտեմբերի 31-ին: Ահա թե ինչպես է նկարագրում այդ կոտորածը պաշտոնական փաստաթղթերից մեկը. «Արյունը գետի նման սկսեց հոսել շուկաների մեջ և կիսամեռ ու կիսակոտոր դիակները սկսեցին տարուբերվել այդ արյան գետի մեջ ... ամեն կողմում դիակ, ամեն կողմում մահամերձ արված հայերի ողբը ու հեկեկոցն է լսվում: Մյուս կողմից տակավին խուժանը կարծես իր արյան անզգայությունը լրացնելու համար անխտիր կոտորում է և սոսկալի կերպով հոշոտում է անմեղ հայերին չխնայելով իր մահացու հարվածը ոչ ծերերին, ոչ երիտասարդին, և ոչ էլ պատանիներին...»[444]:

Մեկ այլ փաստաթուղթ հետևյալ կերպ է արձագանքում հոկտեմբերի 31-ի վայրագությունների մասին. «Այսպիսի մի կոտորած ճշմարիտ թե բնավ չի տեսնված ոչ մի ազգի պատմութեան մեջ ...»[445]:

---

[443] ՀՀ ԱԱ, ֆ. 193, ց. 1, գ. 266, թ. 3:
[444] ՀՀ ԱԱ, ֆ. 56, ց. 17, գ. 52, թ. 1 շրջ.:
[445] ՀՀ ԳԱԱ ՊԻ, Լեոյի անձնական ֆոնդ. 1, ց. 1, գ. 153, թ. 1:

Այդ օրը կոտորվածների վերջնական թիվը պարզ չէ, սակայն կարելի է ենթադրել, որ նրանց թիվը շատ մեծ է եղել: Կան որոշ տվյալներ, որոնց համաձայն կոտորածի սկզբում զոհվածների թիվը հասնում էր 2170 մարդու, որից 200-ը՝ կին, իսկ վիրավորվածների թիվը հասնում էր 500 շնչի[446]:

Քաղաքի կենտրոնի վրա, մասնավորապես շուկայի վրա, հարձակումները կրկնվեցին նաև նոյեմբեր ամսին: Շուտով թուրք խուժանի հարձակումներին միացան նաև Տրապիզոնի վիլայեթի քրդերը, որոնք 1895թ. նոյեմբերին ներթափանցեցին Սեբաստիայի վիլայեթ: Նրանք, միացած թուրքերին, վառում են, թալանում հայկական գյուղերը:

Նոյեմբերի 12-ին սպանություններ են տեղի ունենում Սեբաստիա քաղաքում: Ոչնչացվեց ավելի քան 2000 հայկական խանութ և 1500 քրիստոնյա բնակիչ սպանվեց[447]:

Կարող ենք թույլ տալ մեզ կարծելու, որ քրիստոնյաների մասին խոսելիս հեղինակը նկատի է ունեցել հայերին, ասորիներին և հույներին: Կոտորածի հետևանքով ասորիները ևս ունեցան մեծաթիվ զոհեր:

19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին ասորիները հիմնականում տեղաբաշխված էին Օսմանյան կայսրության ասիական մասում, մասնավորապես Արևմտյան Հայաստանի 6 նահանգներում՝ Վանի, Բիթլիսի, Էրզրումի, Դիարբեքիրի, Խարբերդի, Սեբաստիայի նահանգներում[448]: Նրանք բաժանված էին դավանական և սոցիալական հատկանիշներով: Դավանական առումով, ասորիները հիմնականում տրոհված էին նեստորականների, կաթոլիկների /քաղդեացիներ/, ուղղափառների /օրթոդոքսներ/, իսկ սոցիալապես՝ երկու մեծ կաստաների՝ աշիրեթների /ինքնուրույն ցեղախմբեր/ և ռայաների /ենթակա ժողովուրդ/, որոնց հիմնական զբաղմունքը հողագործությունն ու անասնապահությունն էր[449]:

Հարկ է նշել, որ Աբդուլ Համիդի կողմից կազմակերպված ջարդերի հետևանքով ողջ Օսմանյան կայսրությունում զոհ գնացին 55000 ասորիներ[450]:

Թեև փաստերի բացակայության պատճառով 1895թ. Սեբաստիայի քաղաքի հայության տված զոհերի թիվը հստակ հայտնի չէ, բայց այս տվյալները թույլ են տալիս ենթադրելու, որ այն կազմում էր մոտ 5170 մարդ:

---

[446] ՀՀ ԱԱ, ֆ. 439, ց. 1, գ. 472, թ. 3:

[447] Ludovic De Contenson. Les Reformes En Turquie D'Asie. Paris. 1913. p. 210.

[448] Խոսրոևա Ա., Ասորիների ցեղասպանությունն Օսմանյան Թուրքիայում և հարակից թյուրքաբնակ վայրերում /XIX դարի վերջ-XX-դարի առաջին քառորդ/, Եր., 2004թ., էջ 11-12:

[449] Տես նշվ. աշխ., էջ 12:

[450] Նշվ. աշխ., էջ 44:

Կոտորածները ծանր անդրադարձ ունեցան նաև Հաֆիքի կազայի Բռաբերդ (Բրաբերդ), Հաղթ (Տուզասար, Աղտք-Սարաճի), Պարտիզակ (Պախչեճիկ) գյուղերի վրա:

1895թ. Բռաբերդը (Բրաբերդը) ջարդերի ժամանակ որոշ կորուստներ կրեց: Միայն 1895թ. հոկտեմբերի 30-ին թուրք խուժանը, հարձակվելով գյուղի վրա, սպանեց ավագ երեց քահանային և 7 հայ անմեղ մարդու[451]:

1895թ. հոկտեմբերի 30-ին չերքեզներից, թուրքերից, քրդերից բաղկացած երեք հազարանոց զորքը հարձակվում է Հաղթ գյուղի վրա: Մինչև երեկո նրանք քանդում են գյուղի տներից շատերը կանգուն թողնելով միայն 30 տուն[452]: Նրանք սրի են քաշում 500-ից ավելի հայ երիտասարդների[453]: Պատահական չէ, որ մինչև 1900թ. գյուղի բնակչության թիվը նվազեց 1700 մարդով[454]: Այս կոտորածը, ինչպես նաև 1908թ. Օսմանյան սահմանադրության ընդունումը ստիպեց, որպեսզի Հաղթ գյուղի հայ ազգաբնակչության մի մասը գաղթի ԱՄՆ[455]:

1895թ. սկսվեց թալանը, հալածանքը ու ջարդը Պարտիզակի և շրջակա գյուղերում: Ղազար Ասատրյանի, Հովակիմ Քյոզինկյանի, Տոնիկ Գասպարյանի, Միքայել Տերտերյանի, Կարապետ Մքլյանի, Մարգար Ասատրյանի, Կարապետ Քյոզինկյանի և ուրիշների խումբը հինգ շաբաթ գյուղը քաջաբար պաշտպանեց թուրքական խուժանից[456]: Սակայն շուտով ժողովուրդը, չդիմանալով թշնամու հուժկու հարվածներին գաղթեց: Նրանց մի մասը հասավ Բռաբերդ: Շուտով նրանցից շատերը այնուամենայնիվ վերադարձան հարազատ օջախ:

Կոտորածները իրենց կնիքն են թողել նաև Ջառայի գավառակի Ալաքիլիսե գյուղի վրա: Այն ենթարկվեց սարսափելի կոտորածի: Ականատեսը հետևյալն է վկայում. «Վիրավորները անթիվ են, իսկ կառավարությունը մեզ է հանձնել 100 մեռած, որոնք ևս անճանաչելի են...»[457]:

Տիվրիկի կազան ևս դարձավ այս դաժան կոտորածների օջախներից մեկը: Հատկապես տուժեց կազայի կենտրոն Տիվրիկ քաղաքը: Քաղաքի հայությունը ծանր կացության մեջ հայտնվեց 1895թ. թուրքերի և քրդերի հարձակման պատճառով: Այդ է վկայում 1895թ. հոկտեմբերի 24-ին Տիվրիկի առաջնորդարանից կաթողիկոսին ուղղված նամակը, որում մասնավորապես ասված էր. «Քաղաքիս 500 տուն է ավելի հայ բնակիչք գործք բոլորովին հիսնախաւ սարսափով

---

451 ՀՀ ԱԱ, ֆ. 439, ց. 1, գ. 472, թ. 3:
452 Դրօշակ, 1896, մայիսի 1, N 12, «Սեբաստիայի Տուզասար գյուղեն»:
453 ՀՀ ԱԱ, ֆ. 439, ց. 1, գ. 63, թ. 68, և ֆ. 439, ց. 1, գ. 472, թ. 6:
454 Պոտուրեան Մ., Հայ հանրագիտակ, գիրք Ա., Պուքրեշ, 1938, էջ 110:
455 ՀՀ ԱԱ, ֆ. 439, ց. 1, գ. 63, թ. 68:
456 Առաքել Պատրիկ, նշվ.աշխ., էջ 359:
457 ՀՀ ԱԱ, ֆ. 439, ց. 1, գ. 472, թ. 2:

պաշարված վարկեանաբար իրենց տան կրակին կողոպտման կամ բացարձակապես մահվան կսպասին»[458]:

Իրոք, այդ ժամանակ եղավ և թալան և կոտորած: Այդ մասին նույն տեղում, ասված է. «Տիվրիկ, որ միայն տասն գիւղ ունի հայաբնակ, քրդած առաջին հարձակմամբ կորսնցուց չորս հազար հինգ հարիւր ոչխար, երկու հարիւր ջորի և հինգ հարիւր եզն և կովեր, երկրորդ հարձակման կորսնցուց քսան կտրիճներ և հարիւրէ ավելի վիրավորներ որոց շատերը ավաղ մահացու կերպով վիրավորված են...»[459]:

Պետք է նկատել, որ այս կոտորածի հետևանքով քաղաքի հայ բնակչության մի մասը արտագաղթել էր, և 19-րդ դարի վերջին հայ բնակչության աճ քաղաքում տեղի չունեցավ: Այդ է վկայում 1899թ. «Բյուզանդիոն» օրաթերթի հաղորդած տեղեկությունն այն մասին, որ նույն ժամանակ քաղաքի հայ և թուրք բնակիչների ընդհանուր թիվը կազմում էր 9000 շունչ, որից 500 տունը հայերն էին[460]:

Այս կազայի կազմում գտնվող Կասմա նահիեի Զիմառա (Զըմառա) գյուղում 1895թ. կոտորածի հետևանքով եղան բնակչության տեղաշարժեր, և ժողովրդագրական պատկերը փոխվեց: Այդ մասին են վկայում մի պաշտոնական փաստաթղթում տեղ գտած նյութերը[461], որոնցում մասնավորապես ասված էր. «1895թ. հոկտեմբերի 8-ին 300-ի չափ քրդական հրոսակախումբը, բաժանված երկու մասի, հարձակում գործեց Եփրատի ափին գտնվող 170 տնից բաղկացած հայաբնակ Բինկա և 80 հայ ընտանիք ունեցող Զիմառա գյուղերի վրա: Չորս ժամ շարունակ այս գյուղերի վրա կրակ տեղաց: Քրդերը Զիմառա գյուղի մեջ սպանեցին մեկ հայ երիտասարդի և վիրավորեցին մի հայ կին: Բինկա գյուղի բնակիչներից շուրջ 1000 հոգու թուրքերը և քրդերը տեղափոխեցին Զիմառա»[462]:

Թոնուսի կազայի Ղազի Մաղարա (Մաղարա) գյուղը ևս կորուստներ տվեց: 1896թ. հունվար-փետրվար ամիսներին տեղի ունեցած կոտորածին զոհ գնաց 150 մարդ[463]:

Գյուրինի կազան ևս չխուսափեց 1895-1896 թթ. թուրքական ջարդերից: Այս կոտորածից հատկապես տուժեց կազայի համանուն կենտրոնը: Գյուրին քաղաքի կոտորածը տեղի ունեցավ 1895թ. հոկտեմբերի 31-ին: Թուրքերի, քրդերի, չերքեզների 10 հազարանոց զորախումբն այդ օրը Ազիզիեից, Կանգալից, Տարենտեից հարձակվեց

---

[458] ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի արխիվ, Լեոյի անձնական ֆոնդ 1, ց. 1, գ. 135, թ. 5:
[459] Տես նույն տեղում, թ. 4:
[460] Բյուզանդիոն, Կ.Պոլիս, 1899, հունիս, թիվ 818, էջ 1:
[461] Տես նույն տեղում:
[462] Տես նույն տեղում:
[463] Տես նույն տեղում:

Գյուրինի վրա և անլսելի վայրագությամբ կոտորեց 1800-ից ավել հայերի[464]:

Սակայն դրանով քաղաքը չազատվեց կոտորածներից: 1895թ. նոյեմբերի 12-ին Գյուրինը պաշարվեց 2000-անոց քրդական և թուրքական զորքի կողմից: Դիմադրելով 4 օր՝ հայերը տվեցին 1200 զոհ: Թուրքերը և քրդերը թալանել էին 500 տուն, առևանգել 150 կին և աղջիկ[465]:

Պետք է նշել, որ զոհերի թիվը կարող էր լինել շատ ավելին, եթե չլիներ Գյուրինի հայ կաթոլիկ համայնքի անդամներից Սիմոն Կերկերյանը: Վերջինս, օգտվելով կառավարության և ժողովրդի մեջ վայելած հեղինակությունից, կարողացավ 400 հայ կաթոլիկների և 800 առաքելական հայերի պատսպարել հույոց առաջնորդարանի պատերի տակ, իսկ 300 հոգու՝ տարբեր անձանց տներում[466]:

Այսպիսով, այս փաստերը վկայում են, որ Սեբաստիայի գավառի տարբեր քաղաքներ և գյուղեր իրոք ենթարկվեցին 1894-1896թթ. համիդեական դաժան կոտորածներին և նրանցում բնական աճը խաթարվեց, բայց 20-րդ դարի սկզբին նրանք շարունակեցին պահպանել իրենց հայեցի դիմագիծը:

---

[464] ՀՀ ԱԱ, ֆ. 439, ց. 1, գ. 472, թ. 3:

[465] Ludovic De Contenson. Les Reformes en Turquie D'Asie. Paris, 1913. էջ 210-211:

[466] Նազլեան Յ., Տրապիզոնի թեմի վիճակաւոր Յովհաննէս արք. Նազլեանի յուշերը Մերձաւոր Արեւելքի 1914-1928 շրջանի քաղաքական-կրոնական դեպքերի մասին, Պեյրութ, 1960, էջ 251:

2. ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԳԱՎԱՌՆԵՐ (ՇԱԲԻՆ ԿԱՐԱՀԻՍԱՐ, ԹՈՒԽԱԹ, ԱՄԱՍԻԱ)

Թուրքական կոտորածները իրենց ողջ ուժգնությամբ ազդեցին նաև Սեբաստիայի նահանգի հյուսիսային գավառների ժողովրդագրական գործընթացների վրա: Տեղի ունեցած ջարդերի հետևանքով որոշ քաղաքներ և գյուղեր զրկվեցին իրենց բնակչության մեծ մասից:

Շաբին Կարահիսարի գավառի համանուն կենտրոնը 1895թ. ենթարկվեց դաժան կոտորածի և ունեցավ զգալի կորուստներ: Քաղաքի մեջ կոտորածը և թալանը սկսվում է հոկտեմբերի վերջին: Նոյեմբերի 1-ին 2000 հայ պատսպարվում են տեղի հայկական եկեղեցում: Սակայն շուտով բոլորն էլ ստիպված հանձնվում ու կոտորվում են: Ըստ մի աղբյուրի հավաստման՝ քաղաքում ընդհանուր զոհերի թիվն անցնում էր 3000-ից[467], իսկ այլ տեղեկության համաձայն 5000-ից[468]: Ճշմարտությանը ավելի մոտ ենք համարում երկրորդ տվյալը, քանի որ, ինչպես տեսանք միայն մեկ օրում կոտորվել է շուրջ 2000 մարդ:

1894-1895թթ. Թոխաթ գավառը ևս ենթարկվեց թուրքական կոտորածի: Այն կազմակերպել էր «Մաշալլահ» գաղտնի ընկերությունը[469], որը հիմնվել էր իսլամի «պաշտպանության» և «գյավուրներին» բնաջնջելու համար:

Թոխաթ քաղաքում մինչև 1895թ. մարտի 17-ը զոհերի թիվը հասավ մոտ 150-ի, իսկ վիրավորվածներինը 50-ի: Կողոպտվեց 300 տուն[470]. Ընդհանուր ողջ կոտորածի ընթացքում միայն Թոխաթ քաղաքում զոհ գնաց շուրջ 500 հայ[471]:

Թոխաթ գավառի Նիքսար գավառակը այդ ժամանակ չխուսափեց ջարդերից: Կազայի համանուն կենտրոնում 1896թ. հունիսի 9-ին տեղի ունեցած կոտորածի հետևանքով զոհ գնաց 150 խաղաղ հայ բնակիչ[472]:

Նույն ժողովրդագրական պատկերի խեղաթյուրումն է նկատվել նաև գավառի Զիլե գավառակում, որի համանուն կենտրոնում միայն 1895թ. նոյեմբերի 16-ի կոտորածի ընթացքում զոհ գնաց 184 մարդ[473]:

Այս կոտորածը կրկնվեց 1895թ. նոյեմբերի 28-ին: Քաղաքի 200 հայեր սպանվեցին և 300 տուն թալանվեց[474]: Ողջ կոտորածի ընթացքում քաղաքը կորցրեց 384 հայ բնակիչ:

---

[467] Ludovic De Contenson, Les Reformes En Turquie D'Asie, Paris, 1913, էջ 211:
[468] Kevorkian R.H., Paboudjian P.B., նշվ.աշխ., էջ 248:
[469] Արաքս, Ս.Պետերբուրգ, 1894-1895, գիրք Բ., էջ 153:
[470] Տես նույն տեղում, էջ 157:
[471] Kevorkian R.H., Paboudjian P.B., նույն տեղում:
[472] Kevorkian R.H., Paboudjian P.B., նշվ.աշխ., էջ 254:
[473] Kevorkian R.H., Paboudjian P.B., նշվ.աշխ., նույն տեղում, տես նաև Ալպոյաճեան Ա., նշվ.աշխ., էջ 585:
[474] Ludovic De Contenson, Les Reformes En Turquie D'Asie, Paris, 1913, p. 211.

Ուշագրավ է, որ Ամասիայի գավառում 1894-1896թթ. կոտորածը և կողոպուտը տեղի է ունեցել հիմնականում գավառի խոշոր կենտրոններում, որոնցում տեղաբաշխված էր հայ բնակչության հիմնական զանգվածը:

1894-1896թթ. ընթացքում տեղի ունեցած կոտորածի հետևանքով Ամասիա քաղաքի ժողովրդագրական պատկերը խաթարվեց և հայ բնակչությունը նվազեց: Ամասիա քաղաքում ջարդերն ու թալանը տեղի են ունեցել 1895թ. նոյեմբեր ամսին: Վերջինիս մասին է խոսում պաշտոնական մի փաստաթուղթ[475]: 1895թ. նոյեմբերի 3-ին կառավարական զորքը միջօրեի աղոթքն ավարտելուն պես, իր հետ ունենալով թուրք խուժանին, ամայացրեց Ամասիա քաղաքի մեծ մասը: Ժողովրդի մի մասը հանձնվեց թուրքերին, մյուս մասը, խանութներից դուրս գալով, ապաստանեց տներում: Նոյեմբերի 3-ից սկսած քաղաքը հայտնվեց պաշարման մեջ:

Ամասիա քաղաքում ու նրա շրջակայքում տեղի ունեցած ջարդերի հետևանքով նահատակների թիվը շատ մեծ էր, և այդ մասին նույն տեղում նշված էր. «Բազմաթիվ հայերու դիակնիր կը լողան Իրիսի ափաց մեջ»[476]:

Նկատենք, որ այս կոտորածը կրկնվել է 1895թ. նոյեմբերի 15-17-ը, որի ընթացքում թուրքերը և քրդերը թալանեցին հայերի ձեռնարկությունները և սպանեցին մոտ 1000 հոգու[477]: Պարզորոշ երևում է, որ այս կոտորածները խեղաթյուրել էին Ամասիայի քաղաքի ժողովրդագրական պատկերը, և հայ բնակչության թվաքանակը 19-րդ դարի վերջին նվազեց:

Ամասիայի գավառի Սիմ Հաջիգյուղ գավառակի համանուն կենտրոնը ևս, ի թիվս այլ հայաբնակ վայրերի, 1895թ. ենթարկվեց կոտորածի և կողոպուտի: Այստեղ այն տեղի է ունեցել նոյեմբերի 5-6-ին: Թուրքերը սպանել էին Սարգիս անունով մի հայ աղայի իր որդիների հետ միասին, որոնք պատսպարվել էին տանը և պայքար էին մղում: Թեև սպանվածների թիվը հայտնի չէ, բայց պարզ է, որ այս կոտորածի հետևանքը եղավ հայ բնակչության արտահոսքը:

Ժողովրդագրական տեղաշարժերը և կոտորածն ու կողոպուտը տեղ են գտել նաև գավառի Հավզա և Մարզվան քաղաքներում:

1895թ. նոյեմբերի 8-ին Ամասիայի ոստիկանապետ Ղազի բեյի զորքը Հավզա է ժամանում: Ժողովուրդը մինչ այդ հավաքվել էր պանդոկներում: Զորքը հարձակվում է այդ պանդոկների վրա: Սկսված դաժան կոտորածի հետևանքով զոհվածների թիվը հասնում է 13 շնչի, իսկ վիրավորներինը 9-ի[478]:

---

[475] ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի արխիվ, Լեոյի անձնական ֆոնդ 1, ց. 1, գ. 128, թ. 6-7:
[476] Նույն տեղում, թ. 7:
[477] Ludovic De Contenson, նշվ.աշխ., էջ 211:
[478] Տես նույն տեղում, թ. 7:

Մարզվան քաղաքում առաջին կազմակերպված կոտորածը տեղի է ունեցել 1894թ.: Պատմական ճշմարտությունը պահանջում է նշել, որ չերքեզ Բեքիր փաշայի օգնությամբ Մարզվան քաղաքը տվեց ընդամենը 200-300-ի չափ զոհ[479]: Կոտորածներն ավելի մեծ ուժգնությամբ կրկնվեցին 1895թ.: Նոյեմբերի 3-ին թուրք խուժանը հարձակվելով Մարզվան քաղաքի շուկայի վրա սկսում է կոտորածը և ավերածությունները: Հայերից շատերը փորձում են փախչել, բայց նրանք բոլոր ճանապարհները փակում են: Մեծ մասի դիակները մյուս օրը փռված էին Մարզվանի շուկայում: Հաջորդ օրը կոտորածները կրկնվեցին ինչպես Մարզվանում, այնպես էլ շրջակա գյուղերի մեջ: Զոհված և այլ տեղեր տեղափոխված հայ ազգաբնակչության թիվը անցնում էր 1000-ից[480]:

Այսպիսով, 1894-1895թթ. կոտորածների հետևանքով այս հատվածում հայ ժողովրդի կրած կոտորածների թիվը հասնում էր շուրջ 1200-1300 մարդու:

Փաստորեն 1894-1896թթ. կոտորածները ծանր անդրադարձ ունեցան նաև նահանգի հյուսիսային գավառների ժողովրդագրական պատկերի վրա, և հայ բնակչությունը զգալիորեն նվազեց:

---

[479] Բյուզանդիոն, Կ.Պոլիս, 1909, թիվ 3765, փետրվարի 13:

[480] ՀՀ ԳԱԱ, Պատմության ինստիտուտի արխիվ, նույն տեղում, թ. 3:

Վ Ե Ր Ջ Ա Բ Ա Ն

Սեբաստիայի գավառը ամենահայաշատն էր Սեբաստիայի նահանգի մեջ: Նախքան մեծ եղեռնը հայ բնակչության թիվն այստեղ հասնում էր 169554 մարդու: Գավառն ուներ շատ խայտաբղետ ազգային կազմ և բացի հայերից գավառում բնակվում էին նաև այլ էթնոմիավորներ, ինչպիսիք էին թուրքերը, քրդերը, հույները, ասորիները և այլն:

Նահանգի մյուս հայաշատ օջախը հյուսիսային գավառներից Շաբին Կարահիսարն էր: Հայերը կենտրոնացած էին հիմնականում համանուն կենտրոնում և բազում հայկական գյուղերում:

Նախքան մեծ եղեռնը հայ բնակչության թիվն այստեղ կազմում էր 34637 շունչ:

Նահանգի հյուսիսարևմտյան գավառները՝ Թոխաթը և Ամասիան ևս ունեին խայտաբղետ ազգային կազմ: Այս սանջակներում բնակվում էին հայեր, թուրքեր, քրդեր, չերքեզներ, հույներ, կզլբաշներ, ասորիներ:

Հայերն այս ազգությունների ընդհանուր պատկերում ունեին իրենց ծանրակշիռ տեղը: Թոխաթի գավառում նրանց թիվը նախքան մեծ եղեռնը կազմում էր 38037 շունչ, իսկ Ամասիայի սանջակում 51450 շունչ:

Նկատենք, որ հայ ազգաբնակչության թիվը 20-րդ դարի առաջին քառորդին շատ ավելի մեծ կլիներ, եթե չլիներ 1890-ական թթ.-ի համիդեական դաժան կոտորածը, որի հետևանքով հայկական քաղաքները և գյուղերը կորցրին իրենց բնակչության զգալի հատվածը, դրա հետևանքով տեղի ունեցան բնակչության տեղաշարժեր: Այդ կոտորածի հետևանքով Սեբաստիա քաղաքը կորցրեց շուրջ 5000 հայ բնակիչ, Գյուրին քաղաքը շուրջ 3000, Շաբին Կարահիսարը 5000, Թոխաթը 500, Ամասիան՝ 1000-ից ավելի, Մարզվանը՝ շուրջ 1000 և այլն: Խոշոր կորուստներ տվեցին նաև հայկական գյուղերը, որոնցից օրինակ Շաբին Կարահիսարի որոշ գյուղեր կորցրին իրենց բնակչությամ մոտ 50%-ը: Շնորհիվ հերոսական մաքառման որոշ գյուղեր չտվեցին այդքան շատ կորուստներ և պահպանեցին իրենց հայեցի դիմագիծը:

Այս տեղաշարժերից բացի որոշ շրջաններ թուրքական իշխանությունների կողմից համալրվեցին մահմեդական բնակչությամբ, որը նպաստեց նրանց թվաքանակի աճին: Բայց հայերը շարունակում էին նահանգի բնակչության գերակշիռ տոկոսը կազմել նաև 20-րդ դարի սկզբին:

Ընդհանուր առմամբ, նախքան համաշխարհային պատերազմը, ողջ Սեբաստիայի նահանգում բնակչության թիվը կազմում էր 729899 մարդ, որից հայերը 293678 (40,2%), թուրքերը՝ 192000 (26,3%), քրդերը՝ 50000 (6,9%), կզլբաշները 80134 (10,9%), ասորիները՝ 24925 (3,4%), հույները՝ 39967 (5,5%), չերքեզները 45000 (6,2%), եզդիները 4195 (0,6%):

Ինչպես պարզորոշ երևում է այս տոկոսային հարաբերակցություններից, հայերը կազմում էին Սեբաստիայի նահանգի

կարևոր էթնիկ տարրերից մեկը և ժողովրդագրական ընդհանուր համակարգում ունեին իրենց գերակշռող տոկոսը: Հայերն Արևմտյան Հայաստանի այս ընդարձակ տարածքում ունեին իրենց մշակութային և կրթական օջախները, և այս վիլայեթի պատմամշակութային ծանրակշիռ ժառանգության գլխավոր կրողներն էին:

The resume

The given research consists of the introduction, four chapters, the conclusion and the appendix. It is devoted to all-round studying of such problems vilayet of Sebastia, as its is administrative-demographic position in the end XIX beginning of XX centuries, ethnic shifts of the population of the Armenians connected by slaughter in vilayet of Sebastia in 1894-1896 years.

The numerous clearings present as of today, concerning administrative divisions-demographic vilayet of Sebastia, ethnic detrusions, are separated, meet in various protosources, in archive deeds, in the scientific literature, in periodicals and require a system approach. On the basis of cull, study and the assaying of these materials, complete enough and generalized pattern of is administrative-demographic situation vilayet of Sebastia in the end XIX initiation of XX centuries is in-process introduced.

As a result of research it has been revealed, that vilayet of Sebastia in the end XIX beginning of XX centuries was greatest of six vilayets of Ottoman empire, and has been subdivided into four sangaks of Sebastia, Shapin-Karahisar, Tokat, Amasia.

Almost abscence the major data connected with demographic position vilayet of Sebastia from 1880 to 1900 years, has compelled special attention to turn for data and the facts, concerning the end of 1870 and 1914-1915, up to a genocide of Armenians in Ottoman empire.

Slaughter of Armenians in vilayet of Sebastia in 1894-1896, in the large sizes has affected on demographic situation of the city of Sebastia, where only in 1895 year 5170 Armenians have been killed. Other parts of sangak of Sebastia have been subject to slaughter also. Demographic situation in any measure has changed also in northern sangaks (Tokat, Shapin-Karahisar, Amasia) of vilayet where in too it was a high time 1200-1300 Armenians are exterminated.

As a result of research it has been revealed, that in 1914-1915 years in the vilayet of Sebastia lived in total 729899 person, from which 293678 Armenians (40,2 %), the Turk 192000 (26,3 %), Kurds 50000 (6,9 %), Kyzilbashs 80134 (10,9 %), Assyrians 24925 (3,4 %), Greeks 39967 (5,5 %), Cherkess 45000 (6,2 %), Yezids 4195 (0,6 %).

Резюме

Данное исследование состоит из введения, четырех глав, заключения и приложения. Оно посвящено всестороннему изучению таких проблем Севастийского вилайета, как его административно-демографическое положение в конце XIX начале XX веков, этнических сдвигов населения связанных резней армян в Севастийском вилайете в 1894-1896гг.

Имеющиеся на сегодня многочисленные сведения, касающиеся административно-демографического деления Севастийского вилайета, этнических сдвигов, разрозненны, встречаются в различных первоисточниках, в архивных документах, в научной литературе, в периодической печати и требуют системного подхода. На основе отбора, изучения и анализа этих материалов, в работе представлена достаочно полная и обобщенная картина административно-демографического положения Севастийского вилайета в конце XIX начале XX веков.

В результате исследования было выявлено, что Севастийский вилайет в конце XIX начале XX веков был самым большим из шести вилайетов Османской империи, и был подразделен на четыре санджака- Севастии, Шапин-Карахисара, Токата, Амасии.

Почти отсутствие важнейших сведений связанных с демографическим положением Севастийского вилайета с 1880 по 1900-ых годов, вынудило особое внимание обратить на сведения и факты касающиеся конца 1870-ых и 1914-1915 годов, до геноцида армян в Османской империи.

Резня армян в Себастийском вилайете в 1894-1896 гг. в крупных размерах повлияла на демографическое положение города Себастии, где только в 1895г. было убито 5170 армян. Резне были подвержены также другие части Себастийского санджака. Демографическое положение в какой-то мере изменилось также в северных санджаках(Токат,Шапин-Карахисар, Амасия)вилайета,где в тоже самое время было истребляно 1200-1300 армян.

В результате исследования было выявлено, что в 1914-1915гг. Себастийском вилайете проживало в общей сложности 729899 человек, из которых 293678 армян /40,2%/, турок 192000 /26,3%/, курдов 50000 /6,9%/, кизилбашов 80134 /10,9%/, ассирийцов 24925 /3,4%/, греков 39967 /5,5%/, черкессов 45000 /6,2%/, езидов 4195 /0,6%/.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ

ա. ԱՐԽԻՎԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐ

1.1. Մաշտոցի անվան Մատենադարան, արխիվային բաժին, ֆոնդ Կաթողիկոսական դիվան, թղթապանակ N 228 (վավերագիր 21):
1.2. ՀՀ ազգային արխիվ (ՀՀ ԱԱ), ֆ. 56, ց. 17, գ. 52: ֆ. 193, ց. 1, գ. 30, 63, 109, 111, 114, 130, 258, 266, 303: ֆ. 398, ց. 1, գ. 14: ֆ. 425, ց. 1, գ. 50: ֆ. 439, ց. 1, գ. 63, 384, 472, 477, 483, 500: ֆ. 476, ց. 1, գ. 33, 83, 110, 144, 232, 238, 249, 278, 488, 560, 712, 714, 718, 761, 825, 830, 940, 1041:
1.3. ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի արխիվ, Լեոյի անձնական ֆոնդ 1, ց. 1, գ. 128, 135, 151, 153:
1.4. ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի ազգագրության բաժնի արխիվ, թղթապանակ 121/1:
1.5. ՀՀ Ե.Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի արխիվ, Թորոս Ազատյանի ֆոնդ, բաժին 3, գ. 23, 41, 50, բաժին 12, գ. 10520, Գարեգին Սրվանձտյանցի ֆոնդ, բաժին 1, գ. 18:

բ. ՏՊԱԳԻՐ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ

ա. հայերեն

1.6. Դիւան հայոց պատմութեան, կազմեց Գ.Աղանեանցը, Գիրք ԺԳ, Թիֆլիս, 1915:
1.7. Էվլիա Չելեբի, Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, կազմեց Սաֆրաստյանը Ա., հ. Բ, Երևան, 1964:
1.8. Թովմա Արծրունի, Պատմութիւն տանն Արծրունեայ, Թիֆլիս, 1917:

բ. ռուսերեն

1.9. Акты собранные Кавказскою Археологическою Комиссиею (АКАК), т. 12, Тифлис, 1904.

2. ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ա. հայերեն

2.1. Ալթունեան Ա.Մ., Տեղեկագրութիւն հայոց գաղթականութեան, որք ի Մոլտո-Վալաքիա, Հունգարի եւ ի Լեհաստան, Ֆոքշան, 1877:
2.2. Ալպոյաճեան Ա., Պատմութիւն Եվդոկիոյ հայոց», Գահիրէ, 1952:
2.3. Ալպոյաճեան Ա., Պատմութիւն հայ Կեսարիոյ, հ. Ա, Գահիրէ ,1937:
2.4. Աղեքսանդրեան Ա., Պատմութիւն ականավոր քաղաքին Սեբաստիոյ և սահմանաց նորա կամ արքեպիսկոպոսութեան նորին, Վենետիկ, 1911:
2.5. Առաքել Պատրիկ, Պատմագիրք հուշամատեան Սեբաստիոյ և գավառի հայութեան, հ. Ա, Պեյրութ, 1974:

2.6. Առաքել Պատրիկ, Պատմագիրք հուշամատեան Սեբաստիոյ և գավառի հայութեան, հ. Բ, Պեյրութ, 1974:
2.7 Առաքելյան Գ., Գանձակ - Ելիզավետպոլի բնակչությունը XIX դարում, Երևան, 2003:
2.8. Արզումանյան Ս., Հայաստան 1914-1917, Երևան, 1969:
2.9. Գաբամաճեան Ս., Գամէր: Փոքրիկ ճամփորդ արեւելքի մէջ, Կ.Պոլիս, 1911:
2.10. Գաբիկեան Կ., Եղեռնապատում փոքուն Հայոց և Նորին մեծի մայրաքաղաքին Սեբաստիո, Պոսթոն, 1924:
2.11. Գանարեան Գ., Հուշեր ու խոհեր Շապին Գարահիսար, Պոլիս, Կիլիկիա և Լիբանան, Պեյրութ, 1960:
2.12. Էփրիկեան Ս., Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. Ա, Վենետիկ, 1902:
2.13. Էփրիկեան Ս., Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. Բ, Վենետիկ, 1907:
2.14. Ընդարձակ օրացույց ազգային հիվանդանոցի, Կ.Պոլիս, 1903:
2.15. Թէոդիկ, Ամենուն Տարեցույց, ԺԶ տարի, Կ.Պոլիս, 1922:
2.16. Թէոդիկ, Գողգոթա հայ հոգեւորականութեան եւ իր հօտին աղետալի 1915 տարիին, Նիւ Եօրք, 1985:
2.17. Թուրքիայի հայերն և իրենց դրացիներ, Մարսէլ, 1890, Գրեց Մ.Ա., Հայերեն տպ. Մ.Փորթուգալեանի:
2.18. Խոսրոևա Ա., Ասորիների ցեղասպանությունն Օսմանյան Թուրքիայում և հարակից թյուրքաբնակ վայրերում /XIX դարի վերջ-XX-դարի առաջին քառորդ/, Եր., 2004:
2.19. Ցոցիկյան Ս., Արևմտահայ աշխարհ, Նյու Յորք, 1947:
2.20. Հայկազ Ա., Շապին-Գարահիսար ու իր հերոսամարտը, Նիու Եորք, 1957:
2.21. Համարատվութիւն Ազգային կենդրոնական վարչութեան 1872-1873 Ամի ԱՌ Ազգային ընդհանուր ժողովն, Կ.Պոլիս, 1874:
2.22. Համբարձումեան Վ., Գիւղաշխարհ, Փարիզ, 1927:
2.23. Յուհաննէս Ե., Հայաստանի ջարդերը, Կ.Պոլիս, 1919:
2.24. Ղազարյան Հ., Արևմտահայությունը ցեղասպանության նախօրյակին, Երևան, 2001:
2.25. Ճեհրահեան Լ., Թուրքահայոց բնաջնջումը, Մարսել, 1950:
2.26. Մելքոնյան Ա., Էրզրում, Էրզրումի նահանգի հայ ազգաբնակչությունը 19-րդ դարի առաջին երեսնամյակին, Պատմաժողովրդագրական ուսումնասիրություն, Երևան, 1994:
2.27. Մուրադեան Գ., Հայրենիքին ուխտաւորները, Կ.Պոլիս, 1920:
2.28. Նազլեան Յ., Տրապիզոնի թեմի վիճակաւոր Յուհաննէս արք. Նազլեանի յուշերը Մերձաւոր Արևելքի 1914-1928 շրջանի քաղաքական դեպքերի մասին, Պեյրութ, 1960:
2.29. Նաթանեան Պ., Տեղեկագրութիւն ընդհանուր վիճակին Սեբաստիոյ եւ անոր կուսակալութեան ներքեւ գտնվող մի քանի գլխաւոր քաղաքաց, Կ.Պոլիս, 1877:

2.30. Պառավեան Ս., Փոքր Հայքի Սիմ-Հաճիգյուղ գիւղաքաղաքի հայերու պատմութիւնը 1890-1922, Վենետիկ, 1978:
2.31. Պոտուրեան Մ., Հայ հանրագիտակ, հ. Ա, Պուքրեշ, 1938:
2.32. Պոտուրեան Մ., Հայ հանրագիտակ, հ. Բ, Պուքրեշ, 1938:
2.33. Պոտուրեան Մ., Հայ հանրագիտակ, հ. Գ, Պուքրեշ, 1938:
2.34. Սապահ-Գյուլեան, Փոքր Հայքի հիշատակներ, Չիկագո, 1917:
2.35. Սարգսեան Ն., Տեղագրութիւնք ի Փոքր եւ ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864:
2.36. Սիմոնեան Գ.Հ., Հուշամատյան Պոնտական Ամասիո, Նիկոսիա, 1966:
2.37. Սրվանձտյանց Գարեգին, Երկեր հ. Ա, Երևան, 1978:
2.38. Սրվանձտյանց Գարեգին, Երկեր հ. Բ, Երևան, 1982:
2.39. Սրվանձտեանց Գարեգին, Թորոս Աղբար, հ. Ա, Կ.Պոլիս, 1879:
2.40. Տաշեան Վ.Յ, Պոնտական ուսումնասիրութիւն, Վիեննա, 1919:
2.41. Տեովլեթեան Ս., Հուշեր Շապին Գարահիսարէն, Փարիզ, 1954:
2.42. Տեր-Յակոբեան Ա., Ֆիզիքական ազգագրական և քաղաքական աշխարհագրութիւն Հայաստանի, Թիֆլիս, 1914:
2.43. Տրդատեան Տ., Հաղթը և հաղթեցիները, Պոստոն, 1959:
2.44. Ռաֆֆի, Տաճկահայք: Հայկական հարցը, Վիեննա, 1913:
2.45. Օրմանեան Մ., Հայոց եկեղեցին և իր պատմութիւնը, վարդապետութիւնը, բարեկարգութիւնը, արարողութիւնը, գրականութիւնը ու ներկա կացութիւնը, Կ.Պոլիս, 1912:

բ. ռուսերեն

2.46. Авакян А., "Черкесский фактор в Османской империи и Турции", Ереван, 2001.
2.47. Гиппиус А.И., "Статистические таблицы вилайетов Турецкой империи ближайших к Закавказью", Тифлис, 1889.
2.48. Маевский В., "Пути Малой Азии в район между Самсуном и Александретским заливом", Тифлис, 1903.
2.49. Саркисян Г.Г., "Население Восточной Армении в XIX — начале XXв.", Ереван, 2002.
2.50. Сокольский Н., "Очерки современной Турции", Тифлис, 1923.

գ. օտար լեզուներով

2.51. Birken A., "Die Provinzen des Osmanischen Reiches", Wiesbaden: Dr. Ludwig Reichert Varlag, 1976.
2.52. Quinet Vital, "La Turquie d'Asie", v. 1, Paris, 1892.
2.53. Ludovic De Contenson, "Les Reformes En Turquie D'Asie", Paris, 1913.
2.54. Kevorkian Raymond H., Paboudjian Paul B.. "Les Armeniens dans l'empire ottoman la veille du Genocide", Paris, 1992.

2.55. Justin Mac Carthy, "The Arab world, Turkey, and the Balkans (1878-1914), A Handbook of historical statistics", Boston, 1982.
2.56. Justin Mac Carthy, Muslims and Minorities, The population of Ottoman Anatolia and the End of the Empire, New York, 1983.
2.57. Kemal H. Karpat, "Ottoman population 1830-1914. Demographic and Social Characteristic", Paris, 1985.
2.58. Henry Fanshawer Tozer, Turkish Armenia and Eastern Asia Minor, London, 1881.
2.59. Henry Van Lennep, "Travels in little known parts of Asia Minor", vol. 1, London 1870.

3. ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ

ա. հայերեն ամսագրեր

3.1. Արաքս, Պետերբուրգ, 1889:
բ. հայերեն թերթեր
3.2. Ալիս, Սեբաստիա, 1930:
3.3. Արևելք, Կ.Պոլիս, 1898:
3.4. Բյուրակն, Կ.Պոլիս, 1900:
3.5. Բյուզանդիոն, Կ.Պոլիս, 1899, 1914:
3.6. Դրօշակ, Թիֆլիս, 1895, 1896:
3.7. Հնչակ, Ժնև, 1935:
3.8. Հողդար, Սեբաստիա, 1914:
3.9. Մասիս, Կ.Պոլիս, 1879, 1880, 1881, 1883:
գ. հայերեն հանդեսներ
3.10. Հայկազեան հայագիտական հանդէս, հ. ԺԵ, Պեյրութ, 1995:

դ. ռուսերեն մամուլ

3.11. Известия Кавказского отдела Императорского Русского географического общества, Тифлис, 1884/1885, т. 8.

4. ՀՈԴՎԱԾՆԵՐ

ա. հայերեն

4.1. Աթեշեան Գ., Սիմ Հաջիգյուղի կրթականը, Նոր Այգ, Մարզվան, 1913:
4.2. Բաղալյան Գ., Վանի նահանգը 1840--ական-1914թթ. /վարչա-քաղաքական և դեմոգրաֆիական ուսումնասիրություն/, «Բանբեր Երևանի համալսարանի», N 3, Ե., 1986:
4.3. Բաղալյան Գ. Վանի նահանգ, «Հայկական հարց հանրագիտարան», Երևան, 1996:

4.4. Թեմուրճյան Կ., Գամիրքի հայ ազգաբնակչության թիվը համաշխարհային առաջին պատերազմի նախօրյակին, Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. Ա, Երևան, 1970:
4.5. Թուրեան Մ., Տարենտե, Արևելյան մամուլ, Զմյուռնիա, 1888:

բ. ռուսերեն

4.6. Саркисян Е.К., "Административная и демографическая политика османского правительства в Западной Армении, Страны и народы Ближнего и Среднего Востока", т. 5, Турция, Ереван, 1970.

գ. օտար լեզուներով

4.7. Sarkis J., Karajian M.P., An Inquiry into the statistics of the Turkish Genocide of the Armenians 1915-1918 In the Ottoman Empire 1914, The Armenian Review, v. 25, 1972.

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀԵՐԵՔԻ ԿԱԶԱՅԻ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՊԱԿՏԵՐԸ 1878Թ.

Աղյուսակ 1

Նահիե	Մահմեդական			Հայ			Հույն			Չերքեզ		
	Տ	Ա	Կ.	Տ.	Ա	Կ	Տ.	Ա	Կ	Տ	Ա.	Կ
Հերեք (գյուղաք աղաք)	452	1202	1470	158	421	328	3	11	9	-	-	-
Ալետտին	26	65	78	-	-	-	-	-	-	-	-	-
Աղքա Քեչի	12	32	39	-	-	-	-	-	-	-	-	-
Այտրն Սոֆա	13	35	43	-	-	-	-	-	-	-	-	-
Իվեր Էօնիս	-	-	-	-	-	-	-	-	-	120	381	397
Օղլաքճը	-	-	-	-	-	-	-	-	-	31	84	96
Ղավաճը Գ	-	-	-	-	-	-	-	-	-	18	47	52
Էրզենիս	5	14	16	-	-	-	-	-	-	-	-	-
Էնտիք Բունար	-	-	-	-	-	-	11	27	31	-	-	-
Կեմրելի	5	12	16	-	-	-	-	-	-	-	-	-
Քուրտլեր Թեքիլ	-	-	-	-	-	-	7	23	29	-	-	-
Թազուլա Ր	-	-	-	-	-	-	5	13	17	-	-	-
Էնտիքսե	-	-	-	-	-	-	6	17	19	-	-	-
Լեը Պյուքյու	13	31	42	-	-	-	-	-	-	-	-	-
Միլալ	11	24	31	-	-	-	-	-	-	-	-	-
Իսկիլի	-	-	-	-	-	-	11	27	33	-	-	-
Աղքա Ալան	7	15	21	-	-	-	-	-	-	-	-	-
Էքսել	85	215	278	-	-	-	-	-	-	-	-	-
Կյոլ Էոնի	-	-	-	-	-	-	9	19	26	-	-	-
Ֆրնտրճ	-	-	-	-	-	-	-	-	-	45	135	197

աք												
Աղաբաղ	-	-	-	11	36	43	-	-	-	-	-	-
Դուլթազ	33	81	97	-	-	-	-	-	-	-	-	-
Դարգըն	30	77	88	-	-	-	-	-	-	-	-	-
Միդրիլ	29	74	84	-	-	-	-	-	-	-	-	-
Քոգարը Չանտրը	37	89	128	-	-	-	-	-	-	-	-	-
Բավազ	13	33	37	-	-	-	-	-	-	14	42	50
Ղզզլ Չըպըք	12	26	38	-	-	-	-	-	-	13	37	34
Տերե Չիֆբլիկ	-	-	-	-	-	-	4	7	9	-	-	-
Ճիպրիդի լ	-	-	-	-	-	-	5	11	16	-	-	-
Աղաղ Չանտր	31	82	99	-	-	-	-	-	-	-	-	-
Խազինե տար	3	7	13	-	-	-	-	-	-	-	-	-
Ընդհանուր	817	2114	2618	169	457	371	61	155	189	241	726	826

Նահիե Թալապատ	Մահմեդական			Հայ			Հույն			Չերքեզ		
	Տ	Ս	Կ	Տ	Ս	Կ.	Տ	Ս	Կ	Տ	Ս.	Կ
Սխոս	6	14	19	-	-	-	-	-	-	8	23	29
Էվքապա	35	110	135	-	-	-	-	-	-	-	-	-
Տեզիրմին լի	117	297	326	-	-	-	-	-	-	-	-	-
Ֆիտի	69	177	195	-	-	-	-	-	-	-	-	-
Լաքը Բազար	29	77	87	-	-	-	-	-	-	-	-	-
Չալդարայ	21	55	62	-	-	-	-	-	-	-	-	-
Քոլաչան	6	16	21	-	-	-	-	-	-	-	-	-
Լաքը Բեկ	-	-	-	-	-	-	13	37	45	-	-	-
Ղարաղաճ	51	127	139	-	-	-	-	-	-	-	-	-
Թոնա	23	60	72	-	-	-	-	-	-	-	-	-
Թանըպա	85	251	303	-	-	-	-	-	-	-	-	-
Փետեվի	71	172	198	-	-	-	-	-	-	-	-	-

Իայկյուբ	-	-	-	-	-	-	2	5	7	-	-	-
Տազլը	-	-	-	-	-	-	6	16	20	-	-	-
Կելեմիճ	-	-	-	-	-	-	3	16	8	-	-	-
Սելամծոլու	-	-	-	-	-	-	2	5	7	-	-	-
Պալատուն	43	111	127	-	-	-	-	-	-	-	-	-
Դուլեի	95	247	285	-	-	-	-	-	-	-	-	-
Տեվրե	11	24	28	-	-	-	-	-	-	-	-	-
Քորնիս	30	73	86	-	-	-	-	-	-	-	-	-
Ղըչէլտյուրեն	-	-	-	-	-	-	16	45	52	-	-	-
Տարմա	38	96	110	-	-	-	-	-	-	-	-	-
Տերելի	59	123	131	-	-	-	-	-	-	-	-	-
Պելեոյու	75	185	201	-	-	-	-	-	-	-	-	-
Փելիտլի Թեկիէ	52	175	189	-	-	-	-	-	-	-	-	-
Քիրամբա	29	71	80	-	-	-	-	-	-	-	-	-
Թասնա	38	105	117	-	-	-	-	-	-	-	-	-
Քոգարը-Պարագլը	25	65	72	-	-	-	-	-	-	-	-	-
Աղաղլը-Պարագլը	33	81	93	-	-	-	-	-	-	-	-	-
Քեր Ղըզլը	52	127	135	-	-	-	-	-	-	-	-	-
Կեյ Թողան	77	191	206	-	-	-	-	-	-	-	-	-
Կերիզ Թաղը	-	-	-	-	-	-	19	53	61	-	-	-
Քենի Տերե	5	12	14	-	-	-	-	-	-	-	-	-
Դալե Դալա	37	97	103	-	-	-	-	-	-	-	-	-
Զորամի	11	23	27	-	-	-	-	-	-	-	-	-
Գատիմ	8	21	24	-	-	-	-	-	-	-	-	-
Ընդհանուր	1231	3183	3585				61	177	200	8	23	29

Նահիե Սոնուսա	Սահմեդական			Հայ			Հույն			Չերքեզ		
	Տ.	Ա.	Կ.	Տ	Ա.	Կ.	Տ	Ա	Կ.	Տ.	Ա	Կ.
Հեքսի Սոնուսա	110	270	295	-	-	-	-	-	-	-	-	-
Դուտա	135	315	325	-	-	-	-	-	-	-	-	-
Թեքելիզե	40	97	112	-	-	-	-	-	-	-	-	-
Պալագլը	17	43	48	-	-	-	-	-	-	-	-	-
Պալագլը Օպասը	8	22	27	-	-	-	-	-	-	-	-	-
Սահմադ Սրտը	-	-	-	-	-	-	8	25	22	-	-	-
Սիվրի Սրտը	-	-	-	-	-	-	3	5	6	-	-	-
Սեփեբլի	37	85	97	-	-	-	-	-	-	-	-	-
Սեփեբլի Օպասը	19	51	55	-	-	-	-	-	-	-	-	
Լալամաշ	17	45	48	-	-	-	-	-	-	-	-	-
Գոչրճա-Սլաջ	-	-	-	-	-	-	6	16	20	-	-	-
Տեստեկ	45	113	125	-	-	-	-	-	-	-	-	-
Դոզլուճա	18	44	52	-	-	-	-	-	-	-	-	-
Քայր Բընար	-	-	-	-	-	-	7	18	19	-	-	-
Պորապոյ	48	115	135	-	-	-	-	-	-	-	-	-
Սերքիմեկ	22	55	61	-	-	-	-	-	-	-	-	-
Գըրգ Խարման	-	-	-	-	-	-	20	48	55	-	-	-
Կարամա խ	-	-	-	-	-	-	9	21	25	-	-	-
Թուրքմեն Թամը	13	35	37	-	-	-	-	-	-	-	-	-
Սեզելյու Պյուքյու	12	32	38	-	-	-	-	-	-	-	-	-
Դարա Պյուքյու	9	23	27	-	-	-	-	-	-	-	-	-
Հլկըտըր Պյուքյու	8	21	24	-	-	-	-	-	-	-	-	-
Թեփե Քյոյ	-	-	-	-	-	-	17	40	42	-	-	-
Տերե Քյոյ	8	21	24	-	-	-	-	-	-	-	-	-
Անտչրան	15	37	41	-	-	-	-	-	-	-	-	-
Միլք Պյուքյու	13	38	43	-	-	-	-	-	-	8	21	26

Դարսավը լ	19	47	55	-	-	-	-	-	-	-	-	-
Լեյխլիվ	35	85	98	-	-	-	-	-	-	-	-	-
Քիրեճլիկ	-	-	-	-	-	-	13	31	34	-	-	-
Տարաքասու	10	32	37	-	-	-	-	-	-	-	-	-
Ալան	-	-	-	-	-	-	21	52	55	-	-	-
Գաբը-Ալան	-	-	-	-	-	-	17	48	46	-	-	-
Սերնիճ	-	-	-	-	-	-	23	59	65	-	-	-
Պեկ-Ալան	-	-	-	-	-	-	14	33	36	-	-	-
Կեմի Պյուքյու	11	26	32	-	-	-	-	-	-	-	-	-
Քեմիշին Պյուքյու	17	42	48	-	-	-	-	-	-	-	-	-
Քարլըք	27	67	75	-	-	-	-	-	-	-	-	-
Հիվ-Ալան	8	18	21	-	-	-	-	-	-	-	-	-
Ընդհանուր	721	1779	1980	-		-	158	396	425	8	21	26

Նահիե Դարայագա	Սահմեդական			Հայ			Հույն			Չերքեզ		
	Տ	Ա.	Կ.	Տ.	Ա.	Կ.	Տ.	Ա.	Կ.	Տ.	Ա.	Կ.
Չիշդի	251	611	675	-	-	-	-	-	-	-	-	-
Լոսան	30	76	85	-	-	-	-	-	-	-	-	-
Հոլայ	37	95	109	-	-	-	-	-	-	-	-	-
Ֆերենկե	77	'197	218	-	-	-	-	-	-	-	-	-
Էմերի	25	67	78	-	-	-	-	-	-	-	-	-
Կեյոէ	17	42	49	-	-	-	-	-	-	-	-	-
Չիլէօր	19	50	62	-	-	-	-	-	-	-	-	-
Դալէ	7	16	21	-	-	-	-	-	-	-	-	-
Լայեբի	58	145	162	-	-	-	-	-	-	-	-	-
Թեփե Գշլա	28	73	82	-	-	-	-	-	-	-	-	-
Ավքոլայ	5	13	17	-	-	-	-	-	-	-	-	-
Այան	8	21	25	-	-	-	-	-	-	-	-	-
Կելեկին	21	55	62	-	-	-	-	-	-	-	-	-

Բնակչության ընդհանուր պատկերը ըստ նահիեների հետևյալն էր.

Աղյուսակ 2

Նահիեներ	Տուն	Այր	Կին
Հերեք			
մահմեդական	817	2114	2618
հայ	169	457	371
հույն	61	155	189
չերքեզ	241	756	826
Թալապատ			
մահմեդական	1225	3183	3585
հույն	61	167	200
չերքեզ	8	23	29
Սոնուսա			
մահմեդական	794	1949	2166
հույն	157	396	425
չերքեզ	8	21	26
Ղարայագա			
մահմեդական	806	2035	2327
հայ	50	135	163
հույն	5	12	17
ընդհանուր	4402	11403	12942

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ա ռ ա ջ ա բ ա ն 4

Գ լ ու խ ա ռ ա ջ ի ն 8
Սեբաստիայի նահանգի Սեբաստիայի /Սվազի/ գավառի վարչա-
ժողովրդագրական պատկերը 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի
սկզբին
1. Պատմաաշխարհագրական ակնարկ 8
2. Սեբաստիայի գավառակ 12
3. Սեբաստիայի գավառի արևելյան գավառակներ 21
ա. Հաֆիքի գավառակ 21
բ. Զառայի գավառակ 30
գ. Տիվրիկի գավառակ 32
4. Սեբաստիայի գավառի արևմտյան և հարավարևմտյան 38
գավառակներ
ա. Ենիխանի գավառակ 38
բ. Թոնուսի գավառակ 39
գ. Կանգալի գավառակ 45
5. Սեբաստիայի գավառի հարավային գավառակներ 47
ա. Ազիզիեի գավառակ (Բյունյան Համիդ) 47
բ. Գյուրինի գավառակ 49
գ. Տարենտեի գավառակ 52

Գ լ ու խ ե ր կ ր ո ր դ 55
Սեբաստիայի նահանգի Շաբին Կարահիսարի գավառի
վարչաժողովրդագրական պատկերը 19-րդ դարի վերջին
և 20-րդ դարի սկզբին
1. Շաբին Կարահիսարի գավառի կենտրոնական և 55
հարավարևմտյան գավառակներ
ա. Շաբին Կարահիսարի գավառակ 55
բ. Անդրեասի /Սուշեհրի/ գավառակ 59
2. Շաբին Կարահիսարի արևմտյան և հյուսիսարևմտյան 69
գավառակներ
ա. Կոյլուհիսար և Ալուջա գավառակներ 69

Գ լ ու խ ե ր ր ո ր դ 71
Սեբաստիայի նահանգի հյուսիսարևմտյան գավառներների
վարչաժողովրդագրական իրավիճակը 19-րդ դարի վերջին
և 20-րդ դարի սկզբին
1. Թոխաթի (Եվդոկիայի, Թոքաթի) գավառ 71

I. Թոխաթի գավառակ 71
II. Թոխաթի գավառի հյուսիսային և արևմտյան գավառակներ 78
ա. Նիքսարի գավառակ 78
բ. Հերեքի (Էրպաա) գավառակ 79
գ. Զիլեի գավառակ 81
2. Ամասիայի գավառ 82

Գ լ ու խ չ ո ր ր ո ր դ 90
Սեբաստիայի նահանգի ժողովրդագրական տեղաշարժերը 1894-1896թթ.
1. Սեբաստիայի գավառ 90
2. Հյուսիսային գավառներ (Շաբին Կարահիսար, Թոխաթ, Ամասիա) 95

Վ ե ր ջ ա բ ա ն 98

R e s u m e 100

Р е з ю м е 101

Օգտագործված աղբյուրների և գրականության ցանկ 102

Հավելված 107

[500 m.]

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.

220090833

A π
90833